ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-3** (1649) Մարտ 2021

Բովանդակություն



«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- ՀՅԴ Բիւրօ. ԱԶԴ *(էջ 1)*

2- Առաջնորդող
Մնալ օրինականության դաշտում, հարգել ժողովուրդների ինքնապաշտպանության իրավունքը (էջ 2-3)

3- Հարցազրույց
Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանի հետ
Հայաստանը կարիքն ունի իշխանութեան մը, որ կ'ամրապնդէ երկրին պետականութիւնը (էջ 4-5)

4- Քաղաքական
Վարդան Հակոբյան
Ո՞ւր ենք գնում Նիկոլի հետ (էջ 6-8)

5- Ռազմաքաղաքական
Արփի Աբրահամյան
Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինքը ռազմական անվտանգության ապահովման կարևոր գործոն (էջ 9-11)

6- Տնտեսական
Արմեն Գրիգորյան
Հայաստանի Հանրապետությունն ու մեկնարկած 2021 թվականը (էջ 12-14)

7- Տարածաշրջանային
Արտյոմ Տոնոյան
Հետպատերազմական Ադրբեջանը. հայացք դեպի ներս (էջ 15-17)

8- Աշխարաքաղաքական
Ահարոն Վարդանյան
Հայաստան-Իրան հարաբերությունները նոր մարտահրավերների համատեքստում (էջ 18-20)

9- Գաղափարական
Խաչատուր Ստեփանյան
Շուշիականություն (էջ 21)

10- Դաշնակցական բեմ
Աւօ Գաթրճեան
ՀՅԴ երդումը յարատեւ պայքարի եւ անձնազոհութեան սահմանագիծ է (էջ 22-23)

11- Պատմության լուսարձակ
Արարատ Մ. Հակոբյան
Պատմական հիշողություններ, կեղծիքներ, գնահատականներ ու դասեր (Մոսկվայի 1921 թ. մարտի 16 (18)-ի ռուս-թուրքական պայմանագրի 100-րդ տարելիցի առիթով) (էջ 24-27)
Արմեն Ասրյան
1918 թ.՝ հանուն ազգային նպատակների իրականացման, 2018 թ.՝ ընդդեմ ազգային նպատակների (Արամ Մանուկյանի ծննդյան 142-րդ տարեդարձի առթիվ) (էջ 28-32)
Անի Մելքոնյան
Պանթյուրքիզմը և Հայաստանը (էջ 33-35)

12- Ընթերցումներ
Վրէժ-Արմէն
Խորհրդային Հայաստանը՝ մեր պատմութեան շղթային մէջ (էջ 36-40)

ԱԶԴ

Մեր հայրենիքի այս դժուարին օրերուն ներքին-կազմակերպական տագնապալի օրեր կ՚ապրի նաեւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» մեծ ընտանիքին անդամ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի կառոյցը: Երկար տարիներ կուսակցական պատասխանատու պաշտօններ վարած խմբակ մը, հիմնականին մէջ՝ փառատենչութենէ տարուած, իրենց կարգ մը համախոհներով եւ որոշ այլ մոլորեալներով, ՀՅԴ կազմակերպական կանոններու թիւր եւ կամայական մեկնաբանութիւններով խախտած են իրենց դաշնակցականի երդումը՝ «միշտ հաւատարիմ մնալ ՀՅ Դաշնակցութեան ծրագրին, կանոնագրին եւ որոշումներուն»: Այս խմբակը ունեցած է խիստ հակակարգապահական ընթացք. ի շարս այլ հակականոնագրային քայլերու՝ «գումարած» է ապօրինի «ժողով» եւ «ընտրած»՝ ապօրինի «մարմին», որ ապօրինի կերպով հանդէս կու գայ «ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէ» անունով, կուսակցութեան պաշտօնաթերթ «Ասպարէզ»-ը իր վերահսկողութեան տակ կը պահէ ու զաւթած է կուսակցապատկան անշարժ եւ շարժական գոյքեր եւ դրամատնային հաշիւները:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» Բիւրոն ձեռնարկած է քայլերու՝ շրջանին մէջ հաստատելու կազմակերպական կարգն ու անդորրը: ՀՅԴ կազմակերպական կանոններուն համաձայն՝ կատարուած են կարգապահական տնօրինումներ, որոնց արտաքսումներու բաժինը կը հրատարակուի ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ին մէջ:

Կը գործէ օրինական Կեդրոնական կոմիտէ, որ Արեւմտեան Ամերիկայի մէջ ՀՅ Դաշնակցութեան անունով հանդէս գալու շրջանային միակ օրինական եւ իրաւասու մարմինն է: Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչն է ընկ. Ռոստոմ Այնթապլեանը (հեռ.՝ +1650 303 9280):

ՀՅԴ 130-ամեայ պատմութեան ընթացքին նման երեւոյթներ աննախընթաց չեն: Վստահ ենք՝ ինչպէս անցեալին, ներկայիս եւս կուսակցութիւնը կը յաղթահարէ այս տագնապն ալ, եւ անոր Արեւմտեան Ամերիկայի շրջանը շուտով կը վերագտնէ իր աշխոյժ դերը Դաշնակցութեան հայրենանուէր գործունէութեան եւ հայութեան ծառայութեան առաքելութեան ոլորտներէն ներս:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
8 մարտ, 2021 թ.

Արտաքսում ՀՅԴ շարքերից

ՀՅԴ Բիւրօն Արեւմտեան Ամերիկայի տագնապի ստեղծման մէջ հակակարգապահական ծանր յանցանքների համար կուսակցութեան շարքերից արտաքսել է ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի կազմակերպական շրջանի անդամներ Աւետիք Իզմիրլեանին, Քարմէն Օհանեանին, Լեւոն Կիրակոսեանին եւ Կարօ Իսբէնճեանին: Նրանք մաս չեն կազմում ՀՅ Դաշնակցութեան եւ չեն ներկայացնում ՀՅ Դաշնակցութեան որեւէ մարմին:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
8 մարտ, 2021 թ.

Մնալ օրինականության դաշտում, հարգել ժողովուրդների ինքնապաշտպանության իրավունքը

Երևանի Բաղրամյան պողոտայում տեղի ունեցող հանրահավաքների ժամանակ վեր պարզվեց մի պաստառ, որի վրա գրված էր «Ազատագրում»: Սա վկայում է, որ մարդիկ իշխանության դեմ ծավալված շարժումն այլևս ընկալում են որպես ազգային-ազատագրական պայքար:

Ազգային և պետական գիտակցությամբ օժտված մեծամասնության համար պատերազմը չի ավարտվել: Թշնամին շարունակում է գերի պահել անհայտ թվով հայորդիների, ամեն օր նորանոր տարածքներ ու դիրքեր է գրավում բուն Հայաստանի տարածքից, ձևավորում են նոր սահմանագծեր, թշնամի երկրի հղփացած ղեկավարը խոսում է Զանգեզուրի ու Երևանի ադրբեջանապատկան լինելու մասին: Մյուս կողմից՝ Ադրբեջանի և Թուրքիայի պաշտոնական ներկայացուցիչները, այդ թվում՝ թուրքական «Գորշ գայլեր» ծայրահեղական կազմակերպության առաջնորդը, պաշտպանում են Նիկոլ Փաշինյանին և սպառնալիք պարունակող հայտարարություններ են հնչեցնում Հայաստանի ժողովրդային շարժման և հայոց բանակի հասցեին: Իսկ ամենից վտանգավորն ու երկրի համար սպառնալին այն է, որ սեփական իշխանությունն ու նրա առանձին ճյուղերը, այս ամենին պաշտոնապես հակադարձելու փոխարեն, սահմանների և դեմարկացիոն նոր գծերի վերահսկողությունը կազմակերպելու, գերիների և այլ հարցերով գոնե կապիտուլյացիոն հայտարարությամբ սահմանված սկզբունքների պահպանումը պահանջելու, բացարձակապես լուռ ու անտարբեր են և չեն արձագանքում ոչ միայն սեփական պետության ու ժողովրդի անվտանգության և արժանապատվության դեմ թույլ տրվող ոտնձգություններին, այլև անգամ իրենց հասցեին հնչող ծաղրանքին ու հայհոյանքին: Այդպիսի գործելակերպ դրսևորելու հրահանգ է իջնում համապատասխան գերատեսչություններին և պաշտոնատարներին այս ամենի գլխավոր մեղավորի ու պատասխանատուի կողմից: Ազգային դավաճանության ակնհայտ դրսևորումների որակ ունեցող գործունեության համար իշխանությունների և թիվ մեկ պատասխանատուի գործողությունների ազատությունն ապահովում են Ազգային

անվտանգության և Ոստիկանության համակարգերը՝ հանձինս իրենց ղեկավարների: Չմոռանանք, իհարկե, որ քաղաքական առումով թիկունքն ապահովում են երկրի խորհրդարանը և նախագահը: Չմոռանանք նաև այն արտաքին ուժերին, որոնք լռեցին, երբ միջազգային ահաբեկչական ուժերի ուղեկցությամբ երկու պետություններ ռազմական ագրեսիա ձեռնարկեցին Արցախի դեմ, լռեցին, երբ նրանք արգելված զենքի կիրառմամբ կատարեցին պատերազմական հանցագործություններ, ավերեցին խաղաղ բնակավայրեր, հոգևոր ու մշակութային կոթողներ, գլխատեցին մարդկանց, իրականացրին այլ վայրագություններ: Նրանք աչք են փակում այժմ, երբ Հայաստանի իշխանությունը հալածանք, ոստիկանապետության բռնի ուժ, ինչպես և ուժի գործադրման սպառնալիք է կիրառում սեփական ժողովրդի դեմ, և, ընդհակառակը, ակնհայտորեն հովանավորում են վերջինիս: Ըստ էության, արտաքին ուժերը, օգտվելով երկրի ներսում հենարանները կորցրած և պատասխանատվության սպառնալիքի ներքո խուճապահար իշխանությունների կամազուրկ վիճակից, թելադրում են նրանց շարունակել այն քաղաքականությունը, ըստ որի՝ տարածաշրջանում լուծվում են աշխարհաքաղաքական խնդիրներ՝ ի հաշիվ Հայաստանի պետականության և հայ ժողովրդի ապագայի:

Այն պայմաններում, երբ բարոյազուրկ ու ազգային շահերին դավաճանած ղեկավարը կորցրել է երկրի բնականոն կառավարումն իրականացնելու, արտաքին սպառնալիքից պետության անվտանգությունը երաշխավորելու, առանց ոստիկանական պատնեշի անգամ առանձնասենյակից դուրս գալու հնարավորությունը, նրա մտահոգության հիմնական առարկան մնում են ուժային կառույցները: Այդ լծակների միջոցով նա փորձում է վախ սերմանել և կոտրել ժողովրդին, միաժամանակ իր իշխանության հետագա երաշխավոր է տեսնում հենց ուժային

կառույցներին: Նրա համար իսկական ցնցում եղավ Գլխավոր շտաբի, ապա և Պաշտպանության բանակի կողմից հնչեցված իր հրաժարականի պահանջը:

Փաստացի վարչապետի լիազորությունները լիարժեքորեն իրականացնելու հնարավորությունը կորցրած ամբոխի առաջնորդը փորձեց երկրում վերահաստատել իր իշխանությունը՝ դիմելով նույն ամբոխին, որը նրան իշխանության էր բերել և, ըստ էության, նրա հենարանն էր: Պետական բոլոր լծակների գործադրմամբ, կաշառքով ու սպառնալիքով հրապարակ բերված զանգվածի սահմանափակ թիվը խորտակեց նրա հույսերը, թե այդ լծակը կարող է կրկին իր համար հաղթանակ ապահովել: Օրենքի ու օրինականության հետ երբեք հաշվի չնստած ուժի ներկայացուցիչները դեռևս իշխանությունը գրավելու օրերին հայտարարում էին, որ ժողովրդի կամքը վեր է օրենքից: Կորցնելով ժողովրդի անունից օրենքը ոտնահարելով խնդիրներ լուծելու հնարավորությունը՝ այս ուժի առաջնորդը դարձյալ կառչեց վերջին հույսից՝ հեռացնել Գլխավոր շտաբի անհնազանդ պետին, որից հետո հնարավոր կլինի գլխատել ողջ բանակը՝ նվիրյալ ու փորձառու ղեկավարությանը փոխարինելով կամազուրկ, կամակատար, տգետ դուրսպրծուկներով: Ինչպես տեսնում ենք, անգամ պատերազմում կրած դաժան պարտությունը դաս չի եղել, որ հավանական նոր պատերազմից առաջ երկրի բանակը խնայվի կադրային կործանարար հեղաշրջումներից: Եթե վարչապետի համար իշխանության պահպանման վերջին հույսը մնում է ուժը, որի միջոցով նա կարող է բռնանալ, կանխել, պատժել, սադրել և անգամ քաղաքացիական բախումներ հրահրել, ապա իր բռի մեջ գտնվող ոստիկանության ու ազգային անվտանգության ուժերի միջոցով նա ոչ մի սադրանք չի կարող հրահրել, եթե ամենազոր բանակը իր հետ չէ, որը, ընդհակառակը, զգուշացրել է ձեռնպահ մնալ ժողովրդի դեմ հնարավոր բռնարարքներից:

Վարչապետի գլխավոր խնդիրը շարունակում է մնալ ոչ իրեն, այլ ժողովրդին հավատարիմ բանակին հնազանդեցնելու մտասևեռումը, այն ակնկալիքով, որ անգամ իր համար ամոթալի, երկրի համար կործանարար այս վիճակը կարելի է ձգել անորոշ ժամանակով: Իրավիճակի՝ անորոշ ժամանակով երկարաձգումը, սակայն, մեղմ ասած, նյարդայնացնում է ժողովրդի՝ ազգային ու պետական գիտակցություն ունեցող մեծամասնությանը, երբ երկիրն ամեն օր կորուստներ է արձանագրում անվտանգության ու կենսագործունեության մնացած ոլորտներում, առավել ևս տագնապալի է դավաճանի մեղադրանքը կրող ղեկավարի ձեռքում գտնվող պետության հեռանկարը:

Քաղաքագետ Ստեփան Դանիելյանը սույն թվականի մարտի 7-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում գրել է. «Որքան կառավարությունն ուշացնում է սպասվելիք հրաժարականը, այնքան մարդիկ ավելի ռադիկալ են դառնում, ու բացարձակապես կարևոր չէ, թե ռադիկալները քանի տոկոս են: Եթե անգամ այնքան էլ շատ չեն, այնուամենայնիվ, խիստ մոտիվացված են ու ... վճռական: Ռադիկալացումը ոչ միայն իշխանափոխության գործոն է, այլև ետիշխանական գործընթացների սպառնալիք իրենց քայլականների համար, իհարկե: Մի՛ սրեք կրքերը. դա ձեր օգտին չէ»:

Այն, ինչի մասին գրում է քաղաքագետը, խմորվում է մեր աչքի առաջ ու ամեն տեղ, և որքան էլ ընթացող զարգացումների կայունությամբ ու օրինականությամբ շահագրգիռ ուժը իշխանության փոխարեն հենց ընդդիմադիր քաղաքական շարժումն է, վերջինս այս գործընթացը չի կարող ո՛չ կասեցնել և ո՛չ էլ ներառել իր վերահսկողության դաշտ: Չեն կարող մոռացվել կամ մարել մարդկանց կրքերն ու սրված զգացումները ո՛չ տարածքային ու մարդկային կորուստների, ո՛չ երկրի ապագայի հարցում: Թերևս հոգեկան անհավասարակշռությամբ պայմանավորված այն մտատեսիլները, թե հինգհազարամյա մի երկիր, այնուամենայնիվ, կարելի է քշել դարավոր ոսոխի երախը, հավանաբար մեծ վնասներ կհասցնեն երկրին, բայց վստահաբար կկործանեն նրա դահիճներին: Եվ որքան էլ ֆիզիկապես դժվար լինի, պետք է ձգտել գործընթացները պահել օրինականության ուղեծրում՝ ժողովուրդների ինքնապաշտպանության բնական իրավունքի հաշվառմամբ:

Հայաստանը կարիքն ունի իշխանության մը, որ կ’ամրապնդէ երկրին պետականութիւնը

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանի հետ

«ԴՐՕՇԱԿ».- Ընկեր Մուրադ, Հայաստանն այսօր փոթորկվում է ներքաղաքական պեկոծություններից: Պաշտոնական Երևանը պատերազմից հետո էլ շարունակում է պարտվողական քաղաքականությունը՝ նորանոր զիջումներ կատարելով թշնամուն: Քաղաքական ընդդիմությունը պահանջում է երկրի վարչապետի հրաժարականը՝ համոզված լինելով, որ միայն դրանից հետո հնարավոր կլինի շրջադարձ կատարել քաղաքականության մեջ՝ կարգավորելով կացությունը թե՛ երկրի ներսում և թե՛ արտաքին ճակատում: Փետրվարի վերջին Հայաստանում վերսկսվեցին ընդդիմության կազմակերպած բողոքի և անհնազանդության գործողությունները: Մեծ անակնկալ էր Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջը ՀՀ բանակի գլխավոր շտաբի պետի և փաստացի բանակի ողջ ղեկավարության կողմից: Թվում էր, թե սա կսթափեցնի իրական իշխանությունը երկրում կորցրած ղեկավարին և կստիպի հրաժարական ներկայացնել, սակայն նա շարունակում է համառել: Համոզվում ենք որ երկրի վարչապետի համար իր անձից վեր ոչինչ չկա, և սեփական իշխանությունը պահպանելու համար նա պատրաստ է ամեն արկածախնդրության: Ինչպե՞ս կգնահատեիք այս ամենը:

Մուրատ Փափազեան.- Պիտի ըլլամ շատ թափանցիկ եւ յստակ: Նիկոլ Փաշինեան տկարացուց Հայաստանը: Թաւշեայ յեղափոխութեան հետեւանքները աղիտալի եղան Հայաստանի եւ Արցախի համար: Ան 2018ին «քարիզմաթիք» էր: Երբ գարնան սկսաւ այդ շարժումը, ան իր մէջ գտաւ այդ ուժն ու նկարագիրը եւ մանաւանդ համոզելու կարողութիւնը, որուն շնորհիւ յաջողեցաւ շրջել ռեժիմը: Քիչ են այն մարդիկ, որոնք կը յաջողին հարիւր հազարաւորներ զօրաշարժի ենթարկել: Քիչ են, բարեբախտաբար, որովհետեւ նաեւ վտանգաւոր են, որովհետեւ միայն ամբոխավարութիւնն է, որ կրնայ այդ ներգործութիւնն ունենալ ժողովուրդին ու հասարակական կարծիքին վրայ: Ժողովուրդը խաբելու ցանկութիւնն էր «թաւշեայ յեղափոխութեան» միջուկը: Ցանկերգը, որ հնչեց անդադար, թէ ժողովուրդին կը պատկանի իշխանութիւնը, եւ ընդդիմութիւնը կ’ուզէ զայն խլել ու վերացնել, ծիծաղելի է, բայց, ցաւօք, դեռ կը շարունակուի կրկնուիլ եւ ունենալ լսող մասսաներ: Հայաստանը կեղծ նախախնամութեան կարիք չունի, Հայաստանը պատասխանատու իշխանութեան կարիքն ունի, որ ըլլայ գիտակից դաշնակից Մոսկուայի հետ յարաբերութեան անհրաժեշտութեան եւ ոչ թէ հակառակը, ինչպէս ըրաւ Փաշինեան:

Պայմաններ պէտք է ստեղծել, որ Ռուսաստանը Հայաստանը նկատէ ոչ թէ իբրեւ սովորական դաշնակից կամ մանաւանդ «վասալ», այլ իբրեւ լիիրաւ գործընկեր: Հայաստանը, սակայն, այսօր Նիկոլով Ռուսաստանի հետ յարաբերութիւններուն մէջ սկիզբի իր ապստամբի կարգավիճակէն վերածուած է լրիւ հակառակին՝ վասալի: Հայաստանը նման մարդու կարիքը չունի, Հայաստանը կարիքն ունի իշխանութեան մը, որ կ’ամրապնդէ երկրին պետականութիւնը, որ տնտեսական զարգացման եւ ընկերային արդար համակարգի յստակ տեսլական եւ գործնական ռազմավարութիւն, ծրագիր կ’ունենայ: Բայց զարգացման այս գործընթացը պէտք չէ պայմանաւորուի Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հետ յարաբերութիւններու բնականոնացման պայմանով, ինչպէս կը դաւանին ներկայ իշխանութիւնները: Ընդհակառակը: Որովհետեւ նման պարագայի, կրնամ վստահեցնել, որ 5 տարուան մէջ Հայաստանը կը յայտնուի թրքական-ազերիական ընկերութիւններու ճիրաններուն մէջ: Կը պատկերացնէ՞ք: Հայաստան չէ, որ կ’ունենանք, այլ երկիր մը, ուր հայեր կ’ապրին... Պէտք է ոտքի կանգնեցնել երկիր մը, ուր տնտեսութիւնը սեփական ժողովուրդին հակակշիռին տակ է, եւ այս մէկը դժուար չէ: Հայաստանը այս իմաստով այլ մակարդակի յարաբերութեան կենսական կարիք ունի Սփիւռքի հետ, յարաբերութիւն՝ հիմնուած ռազմավարական գործընկերութեամբ: Հայաստան եւ Սփիւռք պիտի կազմեն հայաշխարհը, որ կը տարածուի 35 երկիրներու մէջ եւ ոչ միայն 29500 մ²-ի վրայ: Հայաշխարհ, որ կը հաշուէ ոչ թէ 3 միլիոն, այլ 12 միլիոն հայ բնակչութիւն: Հայաշխարհ՝ իր տարբերութիւններով նաեւ, իր հարստութեամբ, իր ուժով, իր մասնագէտներով, իր ամբողջ ներուժով: Եւ այն ատեն կը սկսի հետաքրքիր դառնալ տնտեսական թէ քաղաքական տարբեր գործընկերներուն համար, որոնք այսօր այդքան ալ հետաքրքրութեամբ չեն ընկալեր մեզ: Հայաստանը կարիքն ունի միասնութեան եւ կայունացման: Իսկ վարչապետը այս առումով գործեց ճիշդ հակառակ ուղղութեամբ. երկիրը եւ ժողովուրդը բաժնեց սեւերու եւ սպիտակներու, դրսեցիներու եւ ներսիններու, հասարակի եւ վերնախաւի եւ մասամբ նորին: Եւ այս ծիրէն ներս է, որ պէտք է դիտել բանակին կողմէ Փաշինեանի հրաժարականի պահանջը: Որովհետեւ սահմանադրականօրէն բանակին կը պատկանի երկրի սահմաններուն պաշտպանութեան իրաւունքը, իսկ բանակը կը տեսնէ ու կը հաստատէ այդ գծով տկարութիւնը: Սխալ է ուղղակի վարչապետին տարած քարոզչութիւնը, թէ բանակին յայտարարութիւնը պետական հարուածի փորձ է: Այդպէս բան չկայ երբէք, ոչ ալ նման տրամադրութիւն: Անգամ մը եւս ժողովուրդը խաբելու եւ ապակողմնորոշելու

փորձ է, որ կ'ընէ Փաշինեան՝ պարզապէս իր շուրջ հաւաքել կարենալու համակիր զանգուած: Բանակը սրբազան հաստատութիւն է Հայաստանի մէջ: Ազգ-բանակը ամբողջական իմաստ պէտք է վերստանայ, բանակը պէտք է վերստին ամրապնդուի եւ զօրանայ, պէտք է անոր տրուին երկիրը պաշտպանելու բոլոր հնարաւորութիւնները:

«ԴՐՕՇԱԿ».- Ընկեր Մուրադ, Ֆրանսիան տարիներ շարունակ եղել է Արցախի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդ երեք գործուն անդամ երկրներից մեկը, և կարելի է ասել, որ այդ կարգավիճակով նա փաստացի եղել է Եվրոպայի ներկայացուցիչը այդ առաքելության կազմում: 2020 թվականի աշնանը Արցախի դեմ սանձազերծված նոր պատերազմի ողջ ընթացքում Մինսկի խումբը որևէ դերակատարություն չունեցավ: Այնուամենայնիվ փորձվեց է արդյոք այդ երկիրը միջամտել կամ ինչ-որ ձևով իր խոսքն ասել տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ:

Մ.Փ.- Ինչպէս գիտէք, Տոնալտ Թրամփի նախագահութեան ժամանակաշրջանին իր միջին-արեւելեան քաղաքականութիւնը յանձնած էր Էրտողանին, նաեւ Կովկասի մէջ: 4 տարիներուն ընթացքին Մինսկի խումբը եւ յատկապէս Ֆրանսան բախեցան Միացեալ Նահանգներու բացակայութեան: Ինչպէս գիտէք նաեւ, Ֆրանսան ունի ուղղակիօրէն հայանպաստ դիրքորոշում, ինչ կը վերաբերի Հայաստանի, Հայ դատի եւ Արցախի հարցերուն: Այս դիրքորոշումը արդիւնք է նաեւ ֆրանսահայութեան վարած տասնեակ տարիներու աշխույժ աշխատանքին՝ հասարակական կարծիքին եւ քաղաքական շրջանակներուն մօտ: Վերջին պատերազմին նախագահ Մաքրոնի դերակատարութիւնն ու ներկայութիւնը ակնյայտ էին բոլորին, բայց յստակ էր նաեւ, որ, հակառակ նախագահ Փութինի հետ երկկողմանի կապերուն ու համադրումին, վերջին խօսքը բնականաբար կը մնար Ռուսաստանին:

«ԴՐՕՇԱԿ».- Չնայած սկզբնական շրջանի արտաքուստ լռության՝ պատերազմից հետո Արցախի դեմ գործադրված ագրեսիայի վերաբերյալ առաջիններից մեկը և ամենակոշտ ձևով արտահայտվեց Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնը: Մանաւանդ էին նաև Ֆրանսիայի պառլամենտի զույգ պալատների ընդունած բանաձևերը, որոնցով կառավարությանը կոչ էր արվում ճանաչելու Արցախի անկախությունը: Առաջիկայում ինչ քայլեր կարելի է ակնկալել Ֆրանսիայի կողմից: Տեղյակ ենք, որ պատերազմից հետո Արցախի հարցը Մակրոնը ոչ մեկ անգամ քննարկել է ԵԱՀԿ համանախագահ մյուս երկու երկրների նախագահների հետ: Սպասելի՞ է արդյոք Մինսկի խմբի ակտիվացումը, և այդ ակտիվացումը, Ձեր կարծիքով, ինչ արդյունքների կարող է հանգեցնել:

Մ.Փ.- Այո՛, Ֆրանսան Արցախի նկատմամբ դիրքորոշուեցաւ դրականօրէն, որովհետեւ տեղւոյն հայ համայնքը այդ ուղղութեամբ մեծապէս աշխուժ աշխատանք ծաւալեց բոլոր լծակներուն մօտ: Բայց, հակառակ ամէն ինչի, պատերազմի մը յաղթանակը կամ պարտութիւնը կը հաստատուի կռիւի դաշտին վրայ: 12 նոյեմբերի մեր հանդիպումին Ֆրանսայի նախագահը հետեւեալը պատասխանեց խաղաղարար ուժեր ուղարկելու մեր պահանջին. «Բոլորս գտնուեցանք թոյլ ու անողնայար եւ պէտք եղած հակազդեցութիւնը չցուցաբերեցինք: Կը լսէի ձեր կոչերը եւ պահանջները, բայց միջամտելու ո՛չ մանտաթ ունէինք, ո՛չ ալ միջոցը»: Ան ըսաւ նաեւ, որ Թուրքիոյ օրակարգով խօսած է Պայտընի հետ եւ անհամբեր կը սպասէ, որ ան ամբողջութեամբ հաստատուի Միացեալ Նահանգներու նախագահութեան աթոռին վրայ, որպէսզի Մինսկի խումբը վերագտնէ երբեմնի իր եռակողմանի կշիռը: Նոյնիսկ եթէ Մինսկի խումբը ցուցաբերեց իր անկարողութիւնը, դժբախտաբար, սակայն, չկայ հարցի բանակցային լուծման աւելի լաւ ձեւաչափ:

«ԴՐՕՇԱԿ».- Գաղտնիք չէ, որ Արցախյան նոր պատերազմում ունեցած մարդկային ու տարածքային կորուստները և ստեղծված ներկա կացությունը պեկոծել են նաև ողջ Սփյուռքը: Ինչպե՞ս է այս ամենին վերաբերվում արտերկրի հայությունը: Իհարկե չենք մոռանում, որ մի շարք երկրներում, որոնց թվում և Ֆրանսիայում, դեռևս բավականին ծանր է համաճարակի հետևանքով ստեղծված իրավիճակը, և այս առնչությամբ նաև խիստ միջոցառումներ են կիրառվում պետության կողմից: Այսինքն՝ գրեթե իզված են Հայաստանի հետ կապերը, և սահմանափակվել են գործունեության հնարավորությունները:

Մ.Փ.- Քովիտ կամ ոչ, Սփիւռքը ոգի ի բռին զօրաշարժի մէջ էր Արցախի անկախութեան ճանաչման համար: Թէեւ 9 նոյեմբերէն ի վեր Սփիւռքը ահաւոր ցնցուած է, տխուր է, կ'ապրի խառն պահեր, բայց կը շարունակէ այդ ուղղութեամբ իր պայքարը՝ քաղաքական թէ օժանդակութիւններու առումով: Արցախի անվտանգութիւնը, վերաշինութիւնը, բնակչութեան ապահովութիւնը եւ կենսամակարդակի ապահովումը, ինչպէս նաեւ անկախութեան ճանաչումը կը շարունակեն մնալ մեր առաջնահերթութիւնները:

«ԴՐՕՇԱԿ».- Ինչպես վերը նշեցինք, բնական է, որ կիսաթարմեր մասնավորապես և Ֆրանսիայի հայ համայնքի բնականոն կյանքը: Այնուամենայնիվ կատարվում են աշխատանքներ, տարվում է աշխատանք պառլամենտի, կառավարության ու երկրի նախագահի հետ: Բոլորս գիտենք, որ վերջին տասը-տասնհինգ տարվա ընթացքում ֆրանսահայ համայնքը բավականին առաջընթաց ունեցավ Հայ դատի աշխատանքների ուղղությամբ: Այս օրերին էլ ավելի են կարևորվել Արցախի ուղղությամբ անելիքները: Ինչ է արվում, և ինչ ակնկալիքներ ունեք:

Մ.Փ.- Ֆրանսահայ համայնքը առաւելագոյնս զօրաշարժի մէջ է: Ֆրանսայի Ազգային ժողովը, Ծերակոյտը, երեք մեծագոյն քաղաքները՝ Փարիզ, Մարսէյլ, Լիոն, ինչպէս նաեւ այլ քաղաքներ, գաւառներ եւ մարզեր ընդունած են բանաձեւեր, որոնք կառավարութենէն կը պահանջեն ճանչնալ Արցախի անկախութիւնը: Աւելին՝ Հայաստան տարբեր օժանդակութիւններու ուղարկման աշխատանքներուն մէջ ֆրանսահայութիւնը, ինչպէս միշտ, գտնուեցաւ առաջին գիծի վրայ: Նաեւ առաւելագոյնս կը փորձենք ազդել ֆրանսեւթրքական յարաբերութիւններուն վրայ: Յաջողեցանք, օրինակ, Ֆրանսայի մէջ արգիլել տալ թրքական ծայրայեղական «Գորշ գայլեր» կազմակերպութեան գործունէութիւնը եւ ամէն գնով կը պայքարինք Ֆրանսայի մէջ Էրտողանի կողմէ վարուող լծակներուն դէմ: Մեր պայքարը կը շարունակուի, կը մնանք ոտքի, միշտ կազմ ու պատրաստ եւ առաւել միասնական:

Ո՞ւր ենք գնում Նիկոլի հետ

Վարդան Հակոբյան

Նախորդ հոդվածում նշել էինք, որ հարավկովկասյան տարածաշրջանում հաստատվել է հրադադար, այլ ոչ թե խաղաղություն: Թերևս միայն նիկոլականների համար է խաղաղություն հաստատվել, բայց նախկինները խանգարում են այն վայելել: Վերջերս Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ չի բացառում ՀՀ-ի հետ խաղաղության պայմանագրի կնքումը, եթե, իհարկե, հայերը կատարեն կապիտուլյացիայի բոլոր պայմանները: Դա նշանակում է, որ Ադրբեջանը, օգտվելով իր հաղթանակից, քամելու է Հայաստանը մինչև վերջ և հաջողելու է, քանի դեռ ՀՀ իշխանության գլխին է կապիտուլյացիան ստորագրողը: Օրինակ՝ իր օգտին կվերագծի հայ-ադրբեջանական սահմանները, Հայաստանի տարածքով կանցկացնի Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան կոմունիկացիաները, կպահանջի իրենց բնակավայրեր վերադարձնել ՀԽՍՀ տարածքում ապրած ազերիներին կամ հատուցում կպահանջի նրանց համար և այլն: Իսկ իր վերջին մամլո ասուլիսներից մեկի ժամանակ Ն. Փաշինյանի՝ «Իսկանդեր» հրթիռի վերաբերյալ տված ծիծաղելի գնահատականի առնչությամբ, հազիվ զսպելով հռհռոցը և գնահատելով իրավիճակը Հայաստանում որպես քաղաքական և տրագիկոմիկական, առաջարկեց ռուսներին ետ վերցնել այն հայերից՝ ակնարկելով, որ նման կոմեդիանտի ձեռքում, ինչպիսին է, իր կարծիքով, ՀՀ վարչապետը, այն նույնքան վտանգավոր է, որքան նռնակը՝ կապիկի ձեռքում: Այսինքն՝ առաջարկում էր զինաթափել Հայաստանը: Եվ դա զարմանալի չէ. եթե հակառակորդիդ ծնկի ես բերել, եթե նա պատրաստակամ է կատարելու քո բոլոր պահանջները, ապա ինչո՞ւ մինչև վերջ չօգտվել այդ հնարավորությունից: Եթե պարտված պետության կառավարությունն ու խորհրդարանը և քաղաքացիների զգալի մասը պաշտպանում են կապիտուլյացիան ստորագրած ղեկավարին, այսինքն՝ ընդունում են այդ կապիտուլյացիան և նույնպես պատրաստ են կատարելու դրա պայմանները, ապա ինչո՞ւ պետք է Ալիևը սահմանափակի իր ախորժակը: Այն, ինչ կատարվել է պատերազմից հետո՝ անցած երեք ամիսների ընթացքում, դրա վկայությունն է: Մի խոսքով՝ քանի դեռ Ն. Փաշինյանը իշխանության գլխին է, Ի. Ալիևի սանձարձակ քաղաքականությունը ՀՀ-ի նկատմամբ շարունակվելու է: Միայն մի բան է կաշկանդում նրան էլ ավելի ընդլայնելու Հայաստանի նկատմամբ իր ոտնձգությունները. նա գիտակցում է, որ ստիպված է լինելու պատասխան տալ տարածաշրջանում գլոբալ ուժային կենտրոնների կողմից սահմանված կարմիր գծերը խախտելու համար, և վստահ չէ, թե ավագ եղբայր Թուրքիան կկարողանա օգնել իրեն՝ խուսափելու պատասխանատվությունից: Այդ ուժային կենտրոններից և ոչ մեկը հավանություն չի տվել Ադրբեջանի կողմից պատերազմի սանձազերծմանը: Ավելին՝ ԱՄՆ, ՌԴ և Ֆրանսիայի նախագահները բազմիցս հայտարարել են, որ խնդիրը ռազմական լուծում չունի: Այստեղ

անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ԵԱՀԿ համանախագահների կողմից առաջ քաշված այս սկզբունքի հիմնավորմանը: Այն ՄԱԿ-ի, ԵԱՀԿ կամ այլ կազմակերպությունների՝ խաղաղության կոչող բանաձևերով չէ, որ հիմնավորվում է: Դրա հիմքում ընկած են ռազմական փորձագետների և դիտորդների այն եզրակացությունները, ըստ որոնց՝ հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի և Հայաստանի ուժերն ու ռեսուրսներն ընդհանուր առմամբ հավասարազոր են, իսկ ուժերի նման հարաբերակցության դեպքում պատերազմը կհանգեցնի միայն կողմերի մեծաթիվ, թեկուզև հավասարաչափ զոհերի ու կորուստների, բայց ոչ երբեք հակամարտության կարգավորման: Վերլուծելով պատերազմի ընթացքը՝ կարելի էր կարծել, թե հավասարակշռությունը խախտվել է ադրբեջանցիների օգտին Թուրքիայի կողմից նրանց ցուցաբերված ռազմական օգնության շնորհիվ, բայց չէ՞ որ Հայաստանը այն կարող է վերականգնել ՌԴ-ի օգնությամբ: Միայն պատերազմից հետո, համադրելով փաստերը, օտարազգի քաղաքագետները հասկացան Ադրբեջանի հաջողության գաղտնիքը կամ, կարելի է ասել, պարզեցին, որ ադրբեջանցիների հաղթանակի գաղտնի զենքը Ն. Փաշինյանն է: Պատերազմի ընթացքում նրա՝ որպես գերագույն հրամանատարի բոլոր գործողություններն ուղղված են եղել բանակի ոչ արդյունավետ օգտագործմանն ու հրամանատարական կազմի՝ պարտականությունների կատարմանը խոչընդոտելուն: Որպես երկրի քաղաքական ղեկավար՝ նա մոլորության մեջ է գցել ոչ միայն սեփական երկրի քաղաքացիներին, այլև միջազգային հանրությանը՝ կեղծելով պատերազմի իրական ընթացքի մասին տեղեկատվությունը: Նա ոչ միայն չի դիմել ՀՀ դաշնակիցների օգնությանը, այլև մերժել է նրանց՝ ռազմական, քաղաքական ու դիվանագիտական օգնության և միջնորդության առաջարկները: Վերը նշվածից միջազգային դիտորդներն ու քաղաքագետները միայն մեկ բան կարող են եզրակացնել. Արցախյան պատերազմը և դրա ընթացքը ծրագրվել և կազմակերպվել են Թուրքիայի և Ադրբեջանի կողմից՝ ՀՀ գերագույն հրամանատարի ներգրավմամբ և Արցախը հանձնելու նրա համաձայնությամբ: Նրանք նաև հասկացել են, որ միայն այս դեպքում Ի. Ալիևը կարող էր համարձակվել

խախտելով եռանախագահների նշագծած կարմիր գիծը պատերազմ սկսել Հայաստանի դեմ:

Արցախյան այս պատերազմը դարձավ ևս մեկ ծանրակշիռ ապացույց այն բանի, որ Թուրքիան ինքնուրույն, եթե չասենք՝ ինքնագլուխ խաղացող է դարձել միջազգային թատերաբեմում, պատերազմներ է ծրագրում և իրականացնում, մարտահրավեր է նետում Հարավային Կովկասում իրենց շահերն ունեցող պետություններին:

Հայ-ադրբեջանական վերջին պատերազմը և դրա հետևանքները անակնկալի բերեցին Արևմուտքին: 2020 թ. աշնանը ԱՄՆ-ն զբաղված էր նախագահական ընտրություններով, Թրամփ-Բայդեն, հանրապետականներ-դեմոկրատներ աղմկալի գզվռտուքով, սևամորթների և ԼԳԲՏ համայնքի նկատմամբ մեղքերը քավելով ու հարգանքի տուրք մատուցելով, համաճարակի հետևանքով ծագած սոցիալ-տնտեսական խնդիրները հաղթահարելով, իսկ ԵՄ քաղաքական ղեկավարությունը, համաճարակին դիմակայելուց զատ, տարված էր հակապուտինականության մոլուցքով, աճեցնում էր Նավալնի անունով մի հոմունկուլուս՝ Ռուսաստան նետելու նպատակով՝ հույս ունենալով, որ նա կկրկնի նույն սրվակում աճեցված և Հայաստանում երեք տարի առաջ իշխանության բերված մեկ այլ հոմունկուլուսի հաջող օրինակը: Օգտվելով այդ իրավիճակից՝ Ադրբեջանը Թուրքիայի հետ Ն. Փաշինյանի աջակցությամբ, հնարավորինս կաշկանդելով ու սահմանափակելով ՌԴ ռազմաքաղաքական ու դիվանագիտական ներգրավումը (այդպիսով գոհացնելով նաև եվրոպացիներին), խախտեց ուժերի դասավորությունն ու հավասարակշռությունը Հարավային Կովկասում և փաստորեն խաղից դուրս թողեց Արևմուտքին: Սակայն արևմտյան քաղաքական շրջանակները, վերլուծելով և գնահատելով Հարավային Կովկասում անցած տարվա իրադարձությունների նկատմամբ իրենց կրավորական դիրքորոշման հետևանքները, կոչ են անում Ջ. Բայդենին սաստելու Էրդողանին և Ալիևին, նորից հսկողության տակ վերցնելու տարածաշրջանում ծավալվող գործընթացները: Իհարկե, Արևմուտքի զայրույթի պատճառը հայերի կրած կորուստները չեն: Դատելով իրադարձություններին արևմտյան հեղինակավոր քաղաքական գործիչների տված գնահատականներից՝ Արևմուտքը լրջորեն մտահոգված է Էրդողանի՝ իր շահերն անտեսելու և ինքնագլուխ որոշումներ կայացնելու համարձակությամբ: Լինելով ՆԱՏՕ-ի անդամ երկիր՝ Թուրքիան չկատարեց իր առջև դրված խնդիրը՝ դիմակայել և քայլ առ քայլ դուրս մղել Ռուսաստանին Հարավային Կովկասից: Ավելին՝ համագործակցելով Էրդողանը և Պուտինը կիսեցին Ղարաբաղը, հաստատվեցին Ադրբեջանում և ամրապնդում են իրենց դիրքերը՝ բնավ հաշվի չհաստելով ոչ ԱՄՆ-ի, ոչ Ֆրանսիայի հետ: Ամերիկացիների հույսերը, թե Թուրքիայի համագործակցությունը ՌԴ-ի հետ ընդամենը խաղ է, և Թուրքիան հավատարիմ է Հյուսիսատլանտյան դաշինքին, ռուսներից S-400 ՀՕՊ համակարգերի ձեռքբերումից և Արցախում համաձայնեցված քայլերից հետո պարզվեց, որ անհիմն էին, և նրանք հասկացան, որ այլևս չի կարելի վստահել Թուրքիային: Իհարկե, այդ նույն փորձագետները շատ լավ հասկանում են, որ Էրդողանն իր նպատակներն է հետապնդում այս տարածաշրջանում և հավակնում է ինքնուրույն դերակատար լինելու այստեղ, այլ ոչ թե հանձնարարականներ կատարող: Սա է անհանգստացնում ՆԱՏՕ-ին: Սա է անհանգստացնում նաև Ռուսաստանին, Իրանին ու Չինաստանին: Այս երկրներից յուրաքանչյուրը շատ լավ գիտակցում է, որ Թուրքիայի հզորացումը և աշխարհաքաղաքական հավակնություններն անխուսափելիորեն կհանգեցնեն շարունակական լարվածության Մերձավորարևելյան տարածաշրջանում և վերջիվերջո կարող են խախտել ողջ աշխարհակարգը: ԱՄՆ-ն չի ցանկանում Մերձավոր Արևելքում, Իրանից բացի, ունենալ ևս մեկ սպառնալիք՝ ի դեմս Թուրքիայի, որը հետևողականորեն սրում է հարաբերությունները ԱՄՆ մյուս դաշնակիցների՝ Հունաստանի, Ֆրանսիայի և Իսրայելի հետ, չի հանդուրժում նաև ամերիկյան օժանդակությունը քրդերին՝ վերջիններիս անջատողական մղումներում: Ամերիկացի քաղաքագետները, մոդելավորելով նման զարգացումները, դեռ նախագահ Օբամայի օրոք նախազգուշացնում էին, որ Էրդողանի նեոօսմանական հավակնությունները և դրանց իրականացմանն ուղղված հետևողական քայլերը կարող են հանգեցնել ՆԱՏՕ-ից Թուրքիայի դուրս գալուն: Նման կանխատեսումներն ավելի ամրապնդվեցին, երբ Թուրքիան սկսեց համագործակցել ՌԴ-ի հետ՝ հետապնդելով իր սեփական աշխարհաքաղաքական նպատակները տարածաշրջանում: Միանգամից նշենք, որ գործակցությունը վերջինիս հետ զուտ մարտավարական է: Ռուսները հստակ գիտակցում են, որ թուրքերի ռազմավարական նպատակները հակասում են ոչ միայն Արևմուտքի, այլև իրենց շահերին: Եթե Ռուսաստանի աշխարհաքաղաքական ավանդական պատկերացմամբ Հարավային Կովկասը իր ներքին խնդիրն է, այսինքն՝ Ռուսական և Խորհրդային կայսրությունների բաղկացուցիչ մասն է կազմել, ապա Միացյալ Նահանգների տեսանկյունից այն Մերձավորարևելյան տարածաշրջանի բաղկացուցիչ մասն է: Այժմ աշխարհաքաղաքական այս երկու հսկա տեկտոնիկ սալաշերտերի արանքում, օգտվելով դրանց հակամարտությունից, Էրդողանը նպատակ է դրել ձևավորելու նոր՝ թյուրքական սալաշերտ և համառորեն փորձում է հասնել այդ նպատակին: Թուրքական շահերի հետապնդման տարածքը համընկնում է Օսմանյան կայսրության տարածքին, որն այսօր՝ 100 տարի անց, դարձել է ամերիկյան գլոբալ շահերի դաշտ, և Էրդողանը ամեն քայլափոխի դեմ է առնում ամերիկյան դիմակայության և ամեն մի նոր քայլով ԱՄՆ-ի երբեմնի հնազանդ դաշնակցից վերածվում է մրցակցի: Դժվար է չափել Էրդողանի համառության և ամերիկացիների համբերության սահմանները: Մի կողմից՝ տրամաբանությունից դուրս է, որ Թուրքիան, տնտեսապես, քաղաքականապես ու ռազմական առումով, ինչպես ասում են, ոտքով ու գլխով կախված լինելով Միացյալ Նահանգներից, համարձակվում

է հակադրվել նրան: Մյուս կողմից՝ նույնքան տրամաբանական է, որ ԱՄՆ-ն չի ուզում կորցնել Ռուսաստանին զսպող, ՆԱՏՕ-ի անդամ իր կարևոր դաշնակցին: Այս տրամաբանական հակասության պատճառը Էրդողանն է, որի նեոօսմանական ռազմավարական ծրագրերը չեն համապատասխանում ոչ ԱՄՆ-ի, ոչ ՆԱՏՕ-ի ռազմավարությանը: Դա նշանակում է, որ վերջիններիս պետք է Թուրքիան, բայց առանց Էրդողանի: 2016 թ. նրանք փորձեցին հեղաշրջման միջոցով ազատվել նրանից: Չհաջողվեց: Փոխարենը Էրդողանին հաջողվեց տեղի ունեցածն օգտագործել ներքաղաքական խնդիրների արմատական լուծման համար՝ մաքրելով քաղաքական դաշտը, բանակը, պետական բոլոր կառույցները իր հակառակորդներից:

Մի խոսքով՝ Էրդողանը չափազանց անհարմար գործընկեր է դարձել ԱՄՆ-ի համար, կարող է դիմել ծայրահեղ քայլերի և նույնիսկ շանտաժի իր դաշնակցի հետ հարաբերություններում: Հասկանալով, որ տարածաշրջանը մեծ փոփոխությունների շեմին է, նա փորձում է խցկվել գլոբալ խաղի մեջ՝ հաշվի չառնելով, որ գերտերությունների աշխարհաքաղաքական պայքարում կարող է կորցնել ամեն ինչ և նույնիսկ հանգեցնել պետության մասնատմանը: Քննադատելով Էրդողանի այս նկրտումները՝ որոշ թուրք քաղաքագետներ նշում են, որ նրա արկածախնդրության պատճառով Թուրքիան հայտնվել է երկու գերտերությունների ճիրաններում և ենթարկվում է սաստկացող և ուժգնացող հարվածների նրանց կողմից: Ակնհայտ է նաև, որ Միացյալ Նահանգները Թուրքիային կարգի հրավիրելու գլխացավանքը փորձում է բարդել ռուսների վրա՝ հակամարտության դաշտեր ստեղծելով նրանց միջև Սիրիայում, Հարավային Կովկասում և արդեն Ուկրաինայում: Ռուս-ուկրաինական լարվածության սրումը Դոնեցկի և Լուգանսկի շուրջ, ուկրաինա-թուրքական պայմանավորվածությունները ռազմական համագործակցության վերաբերյալ, ամերիկա-թուրքական ռազմածովային զինավարժությունները Սև ծովում այդ մասին են վկայում:

Ընդունելով նման քաղաքական գնահատականները՝ նշենք, սակայն, որ Էրդողանն ընդունակ է վերջին պահին մի դիրքորոշումից անցում կատարելու հակառակ դիրքորոշման: Օրինակ, ռազմաքաղաքական խաղերի մեջ մտնելով Կիևի հետ և զենք մատակարարելով ուկրաինացիներին, զորակցելով նրանց Դոնեցկի և Լուգանսկի չճանաչված հանրապետությունների դեմ սպասվող հարձակման նախապատրաստության գործում, նա վերահաստատում է իր՝ որպես ՆԱՏՕ-ի հավատարիմ անդամի կարգավիճակը՝ միաժամանակ դա ներկայացնելով ոչ թե որպես քայլ՝ ուղղված ՌԴ-ի դեմ, այլ որպես պայքար անջատողականության և ահաբեկչության դեմ: Միաժամանակ սա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Թուրքիան, օգտագործելով գարնան վերջին սպասվող ռուս-ուկրաինական հակամարտության սրումը և օգտվելով այն հանգամանքից, որ ՌԴ ուշադրությունը և ուժերը կենտրոնացած են լինելու

Դոնեցկի և Լուգանսկի Հանրապետությունների պաշտպանության ուղղությամբ, անցնելու է Հայաստանի նկատմամբ իր ռազմավարական ծրագրի հաջորդ փուլի իրականացմանը. կազմակերպելու և ապահովելու է ադրբեջանական ներխուժումը Սյունիք՝ միջանցք բացելով Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան ռազմավարական անխափան կապի համար: Այդ ներխուժումը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան կծախի ամերիկացիների վրա որպես լուրջ հարված ՌԴ և Իրանի դիրքերին տարածաշրջանում, իսկ ռուսներին դա կներկայացնի որպես նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության՝ կոմունիկացիաների վերաբացման մասին կետի իրագործում: Ռուսների և մյուսների բերանը փակելու համար չենք բացառում, որ նա կպարտադրի մեր վարչապետին այդ ներխուժումն օրինականացնելու նպատակով ստորագրել եռակողմ պայմանագիր Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Չի բացառվում, որ նման պայմանագիր կամ բանավոր համաձայնագիր արդեն գոյություն ունի: Սրանով թերևս կարելի է բացատրել Էրդողանի հոգատարությունը Հայաստանում «ժողովրդավարության» և «լեգիտիմ իշխանությունների» հանդեպ: Ինչ վերաբերում է ժողովրդավարական հանրությանը կամ, ինչպես ասում են, առաջադեմ մարդկությանը, ապա Էրդողանը ճիգ չի գործադրի՝ նրանց առջև արդարանալու, քանզի արևմտյան ԶԼՄ-ները այն աստիճան կբորբոքեն նրանց վրդովմունքը ռուսների «հերթական ագրեսիայի» հարցում, որ նրանք ուշադրություն չեն դարձնի Սյունիքի զավթմանը, ինչպես որ, զբաղված լինելով մեկ «առաջադեմ մարդու»՝ Ա. Նավալնու փրկությամբ, չնկատեցին Արցախի բռնազավթումը:

Հ. Գ.

ՀՀ լեգիտիմ վարչապետի եռամյա գործունեության տրամաբանությունը հուշում է նաև, թե որոնք են լինելու նրա հետագա քայլերը:

Քանդելով պետությունն ու բանակը՝ նա նախապատրաստեց և իրականացրեց ՀՀ պարտությունը և Արցախի հանձնումը:

Հետևելով իր հովանավորների խորհուրդներին և շարունակելով կատարել իր վրա վերցրած պարտավորությունները՝ նա իր ողջ հեղափոխական եռանդով կլծվի Հայաստանը ռուսական ազդեցության ոլորտից դուրս բերելու և Թուրքիայի ենթակայության տակ դնելու գործին: Միայն թե ընդդիմությունը չխանգարի:

Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինքը ռազմական անվտանգության ապահովման կարևոր գործոն

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության ներկայացուցիչ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ազգային անվտանգության բաժնի ուսանող

ՀՀ իշխանության վարած ապազգային քաղաքականությունը պառակտեց հայ հասարակությունը, խորացրեց ներքաղաքական ճգնաժամը, թուլացրեց երկրի ներքին ու արտաքին անվտանգությունը, ինչի հետևանքով Ադրբեջանը Թուրքիայի բացահայտ օժանդակությամբ ստացավ լայն հնարավորություններ՝ իրականացնելու իր վաղեմի երազանքը՝ Արցախյան հիմնախնդրի լուծման խաղաղ բանակցային գործընթացի տապալում, Հայկական հարցի մեկընդմիշտ լուծում:

Արցախի Հանրապետությունը բախվեց լայնածավալ պատերազմի՝ ցավալի հետևանքներով:

Հետպատերազմյան իրողությունները անհերքելի դավաճանական ծրագրի արդյունք են. Արցախի Հանրապետության կորսված, թշնամուն հանձնված տարածքներ, հայ երիտասարդ սերնդի մի հատվածի ոչնչացում՝ հազարավոր զոհեր, գերիներ, անհետ կորածներ, Հայաստանի Հանրապետության սահմանների խախտում, հողերի աստիճանական հանձնում: Ադրբեջանցին մտնում է հայկական գյուղերը, հոխորտում հայ գյուղացու վրա, գյուղապետն ու գյուղացին են պայքարում թշնամու դեմ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբի 2021 թ. փետրվարի 16-ի այցը Սյունիքի մարզի Կապան քաղաք, Ներքին Հանդ, Շիկահող և Սրաշեն գյուղեր վեր հանեց բնակիչների կյանքի, սեփականության ու կենսական կարևորության այլ իրավունքներին սպառնացող վտանգներ և խախտումներ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի փաստարկմամբ՝ ադրբեջանական զինված ծառայողների ներկայությունը Սյունիքի մարզի գյուղերի անմիջական հարևանությամբ կամ մարզի համայնքներն իրար միացնող ճանապարհներին, նրանց ցանկացած տեղաշարժ այդ ճանապարհներով ոտնահարում են Սյունիքի խաղաղ բնակչության՝ Սահմանադրությամբ և միջազգայնորեն երաշխավորված իրավունքները, սպառնալիք են նրա կյանքի ու խաղաղության համար[1]:

Հայաստանի Հանրապետության սահմաններում փաստացի կատարվող իրողությունները, ՀՀ բնակչության ֆիզիկական գոյության, պետության անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության դեմ այլ պետությունների ոտնձգությունները, միջամտությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերին ՀՀ ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ են (ՀՀ ռազմական դոկտրին):

Անվտանգության երաշխիքներ չունեցող, արոտավայրերից, ճանապարհներից, անտառներից զրկված

Սյունիքի սահմանամերձ բնակավայրերի բնակիչները լքում են իրենց բնակավայրերը: Դավիթ Բեկ գյուղի գյուղապետի խոսքերով. «Սյունեցիները լքում են գյուղը, քանի որ անվտանգության երաշխիքներ չկան. 20 երեխայի արդեն հանել են դպրոցից, գյուղացիները վաճառում են իրենց անասունները, քանի որ դիրքերը ադրբեջանցիներին հանձնելուց հետո ոչ կարող են անասնապահությամբ զբաղվել, ոչ էլ ցանքատարածքները մշակել»[2]:

Ժողովրդագրական բացասական միտումները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում, ՀՀ քաղաքացիների արտագաղթը, դրանք խթանող գործողություններն ու գործոնները թուլացնում են պետության անվտանգությունը:

Ադրբեջանի առաջխաղացումը պայմանավորված է Թուրքիայի ակտիվ քաղաքականությամբ. Հարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն ունի Թուրքիայի համար: «Տարածաշրջանում, որտեղ խոր էթնիկական հակասություններ ու թշնամություն կա, Թուրքիայի հետ բարեկամությունը կենսական նշանակություն ունի Արևմուտքի համար»[3]:

Թիկունքում ունենալով ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի աջակցությունը, Արևմուտքի հովանավորությունը՝ Թուրքիան ձգտում է ամրապնդվելու Հարավային Կովկասում, ընդլայնելու այդտեղ իր քաղաքական և ռազմական ներկայությունը՝ միաժամանակ բացահայտորեն հանդես գալով Ադրբեջանի օգտին՝ընդդեմ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի:

Թուրքիայի պետական «Anadolu» լրատվական գործակալության կայքում հրապարակված «Թուրքիա-Ադրբեջան. պաշտպանական համագործակցությունից ռազմական դաշինք» վերնագրով հոդվածում նշվում է, որ թուրք-ադրբեջանական եղբայրական կապերը վերաճել են ռազմական դաշինքի, որի նպատակն է փոխել ռազմավարական հավասարակշռությունը Հարավային Կովկասում[4]:

Թուրք-ադրբեջանական դաշինքի իրավական հիմքը 1990-ականներին ձեռք բերված պայմանավորվածություններն են, որոնք ապահովում են Ադրբեջանի զինվորականների կրթությունը Թուրքիայում, և 2010 թվականին կնքված «Ռազմավարական գործընկերության և փոխօգնության պայմանագիրը» որում նշվում է, որ երրորդ երկրի կողմից Թուրքիայի կամ Ադրբեջանի դեմ հարձակման դեպքում կողմերը անվտանգության միասնական միջոցառումներ և պաշտպանություն կիրականացնեն:

2010 թ. Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված ռազմական համագործակցության ու փոխօգնության մասին պայմանագրով կարևորվում է համատեղ զորավարժությունների անցկացումը, որոնք կողմերը պարբերաբար իրականացնում են, այդ թվում՝ Նախիջևանի տարածքում:

Թուրքիայի զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի՝ Նախիջևանում գտնվող ստորաբաժանումներն Ադրբեջանի պաշտպանության հարցում կենսական նշանակություն ունեն, քանի որ ցանկացած բախման դեպքում կկարողանան Հայաստանի ԶՈՒ-ին երկու ճակատով պատերազմ պարտադրել և ճնշման տակ պահել հիմնական ճակատի թիկունքը[5]:

Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, սպառազինման և վերազինման անվերահսկելի գործընթացը, սպառազինման մրցավազքը, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ զորքերի խմբավորումների ստեղծումը և տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը, այդ թվում՝ զորավարժությունների անվան տակ, ՀՀ ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ են (ՀՀ ռազմական դոկտրին):

Անվտանգության ինչ երաշխիքներ ունենք՝

սպառնալիքներին դիմակայելու, եթե ներկայիս պայմաններում Արցախի անվտանգությունը ապահովում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը երկրում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքով: Բացի այդ՝ Ռուսաստանի Դաշնությունն ունի իր ռազմական հենակետը Հայաստանում (ռուսական 102-րդ ռազմաբազա), և սա հնարավորություն է Ռուսաստանի համար անհրաժեշտության դեպքում ամրապնդվելու հակամարտության գոտում (թուրքական գործոնով պայմանավորված):

Հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերություններն ամրագրված են մի շարք համաձայնագրերով և պայմանագրերով: Առանցքային նշանակություն ունի ռազմականայի վերաբերյալ ՀՀ-ՌԴ պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1995 թ. մարտի 16-ին կնքվել է պայմանագիր Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմականայի տեղակայման մասին[6]: Ըստ այդ պայմանագրի 3-րդ հոդվածի՝ ռուսական ռազմականայանը պետք է կատարի կողմերի համապատասխան պայմանավորվածություններից բխող պարտականությունները: Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում, Ռուսաստանի Դաշնության շահերը պաշտպանելու պարտականությունից բացի, ռուսական ռազմականայանը Հայաստանի զինված ուժերի հետ պետք է ապահովի ՀՀ անվտանգությունը[7]:

Ռուսական ռազմականայանի զինվորական կազմավորումների գործադրումն իրականացվում է կողմերի փոխադարձ պայմանավորվածությունների, 1992 թ. մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի հիման վրա և կողմերի օրենսդրություններին համապատասխան:

Անհրաժեշտ է ներկայիս պայմաններում առաջ-

նահերթություն համարել Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինքի կնքումը՝ որպես Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման կարևոր քայլ:Այդ նպատակով «Հայ Յեղափոխական Դաշնակցության» նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում 2019թ. մայիսի 7-ին տեղի ունեցավ «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք»[8] ֆորումը: Այն միտված էր նոր ազդակ հաղորդելու Արցախի քաղաքացիների իրավունքների պաշտպանության և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացին: Կոչն ուղղված է ՀՀ և ԱՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմիններին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու հնարավորինս սեղմ ժամկետներում իրավապայմանագրային հարաբերությունների բացը լրացնելու և համապարփակ համագործակցության պայմանագիր կնքելու ուղղությամբ:

Առաջնահերթությունների շարքում պետք է լինի Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զինված ուժերի համատեղ պաշտպանության ծրագրերի իրականացումը: Հիմք ընդունելով ՀՀ ռազմական դոկտրինը[9], ՀՀ պաշտպանական ռազմավարության սահմանած սկզբունքները, նպատակները և խնդիրները՝ վարել ՀՀ ռազմական անվտանգությունն ապահովող պաշտպանական քաղաքականություն, որի առաջնահերթ նպատակը պետք է լինի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմական անվտանգության սպառնալիքների կանխարգելմանն ու չեզոքացմանը նպաստող պաշտպանական ծրագրերի ու պլանների կենսագործումը:

Արցախի նախագահի նախկին խորհրդական, «Հենակետ» վերլուծական կենտրոնի ղեկավար Տիգրան Աբրահամյանն անդրադարձել է հետպատերազմյան իրավիճակին. «Արցախում պետք է վերակազմակերպեն զինված ուժերը և ներքին ռեսուրսներով կազմակերպեն պաշտպանության գործընթացը: Կարծում եմ՝ նման որոշումը պայմանավորված է հետպատերազմյան իրավիճակով, զորամասերում, զորամիավորումներում և առհասարակ զորքերում առկա իրավիճակով՝ բարոյահոգեբանականից մինչև սպառազինություն, աշխարհագրական վիճակից մինչև առաջադրվող խնդիրներ»:

Կարևոր է նաև ՀՀ նախագահի 2018 թ. փետրվարի 17-ի՝Ն Հ-103-Ա հրամանագրով ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրի[10] իրականացումը: Արդիականացման ծրագիրը ռազմավարական բնույթի ուղեցույց-փաստաթուղթ է, հիմնված է ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի հիմնական հասկացությունների վրա: Դրա հիմքում ընկած են զինված ուժերի արդիականացումը և ազգային



Մադրկովկասում ռուսական զորախմբի 102-րդ ռազմաբազան

հավաքական ներուժի արդյունավետ գործադրումը, որոնք կոչված են բարձրացնելու Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և ազգային անվտանգության մակարդակը, երաշխավորելու Արցախի և նրա ժողովրդի անվտանգությունը:

Նշված առաջնահերթությունները պայմանավորված են Հայաստանի ներքաղաքական կայունությամբ. ժողովուրդը սպասում է վճռական, համարձեք քայլերի՝ իր ուսերի վտանգավոր բեռը թոթափելու: Հանուն Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, հանուն ազգային բանակի, հանուն ազգային արժեքների, հանուն հայ ժողովրդի հավերժության այսօր կենսական անհրաժեշտություն է լինել միակուռ և համախմբված: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Տես https://yerkir.am/news/view/229950.html?fbclid=IwAR2zt3kZy-BEX0f2H5Juvpt1LHd7-8SSPkQigWI6Hd9mCZIKUDxJACnh4GPQ

2- https://www.yerkir.am/news/view/229932.html.

3- http://ysu.am/files/SSS_BookCollect_1.1(18)_2017,%20pp.%20169-189.pdf,էջ 173:

4- Տես https://www.ermenihaber.am/am/news/2017/11/01/Թուրքիա-ՋՈՒ-Նախիջևան/116304

5- Տես http:swww.ermenihaber.am/am/news/2017/11/01/Թուրքիա-ՋՈՒ-Նախիջևան/116304

6- https://uic.am/wp-content/uploads/2015/01/paym-razmabaza-1995.pdf

7- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65694

8- Տես https://www.yerkir.am/news/view/174054.html

9- Տես https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116

10- Տես https://mil.am/files/LIBRARY/2018-2024.pdf

Հայաստանի Հանրապետությունն ու մեկնարկած 2021 թվականը

Արմեն Գրիգորյան
ՀՅԴ Հայաստանի ԳՄ ֆինանսների և էկոնոմիկայի հանձնախմբի նախագահ

Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է մի շրջան, որը խորքային վերլուծության, առկա իրավիճակի գնահատման, հետևանքների վերացման և առաջիկա անելիքների հստակեցման կարիք ունի: Գաղտնիք չէ, որ վերջին երեք տարվա ընթացքում երկրում առարկայական և համակարգային որևէ լուծում չկատարվեց, ավելին՝ նոր համակարգի ներդրման փոխարեն քայքայվեցին ամբողջ համակարգը և դրա ողնաշարը համարվող տնտեսական ոլորտը:

Օրվա իշխանությունները վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ ամեն ինչ արեցին, որ ամբողջ պետական համակարգը քանդվի և, իրենց բնորոշմամբ, դառնա մի մեծ շինհրապարակ: Նրանք հրաժարվեցին իզմերից, ինչի հետևանքով սկսվեց մի գործընթաց, որը մուլտիպլիկատիվ էֆեկտով բացասական ազդեցություն ունեցավ մյուս ոլորտների վրա: Մեկ հոդվածի շրջանակներում դժվար կլինի ամբողջությամբ ներկայացնել, թե ինչ է տեղի ունեցել, ինչ է տեղի ունենում և ինչ հետևանքների կհանգեցնի:

Վերլուծելով առկա վիճակը, կարևորելով տնտեսության զարգացման գլխավոր խթանները՝ անհրաժեշտ է հանգամանորեն անդրադառնալ ՀՀ տնտեսական խնդիրների ամենակարևոր լուծումներից մեկին՝ ներդրումներին: Մյուս ոլորտներին անդրադարձ նույնպես կլինի: Կարևոր են տնտեսական բոլոր ճյուղերի ընդհանուր զարգացումը և համաչափ առաջընթացի ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը բարձիթողի վիճակում է: Բոլոր կառավարությունները բավարար չափով խորքային անդրադարձ չեն կատարել ներդրումների ոլորտին և երբևէ չեն կրել քաղաքական պատասխանատվություն տարբեր տարիներին հնչեցրած պաթետիկ թեզերի և առաջացած վիճակի կտրուկ տարբերությունների համար: Տարբեր շրջանների մշակված հայեցակարգերը եղել են բացառապես նեոլիբերալ քաղաքականության տրամաբանության ծիրում, մինչդեռ անհրաժեշտություն կա նորովի անդրադառնալու այս, թերևս ամենակարևոր խնդրին: Եթե մինչ 2018 թվականի իշխանափոխությունը ՀՀ տնտեսական բլոկի պատասխանատուները հայեցակարգում արտահայտում էին նեոլիբերալ մոտեցումներ, ապա իշխանափոխությունից հետո ներդրումներին, այդ թվում՝ օտարերկրյա, ՀՀ կառավարությունը սկսեց վերաբերվել ծայրաստիճան պոպուլիզմով: Նախ հայտարարվեց, որ ներդրումներ կհոսեն Հայաստան, և կլինի «տնտեսական հեղափոխություն», եթե ՀՀ-ում տեղի ունենա իշխանափոխություն, և այդ ընթացքում տրվեցին անթիվ խոստումներ: Այնուհետև

պարզվեց, որ ներդրումների ներգրավմանը խանգարում է Ազգային ժողովը: 2018 թվականին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, և ձևավորվեց նոր Ազգային ժողով, բայց խոստացած ներդրումները չկային: Իշխանություններն այս անգամ ներդրումներին խոչընդոտ համարեցին դատաիրավական համակարգը և սկսեցին արշավել Սահմանադրական դատարանի դեմ: Սրան համընթաց եկավ COVID-19 համավարակը, իսկ վերջում՝ Արցախյան պատերազմը: Առկա վիճակը փաստում է, որ ՀՀ տնտեսական բլոկի պատասխանատու պաշտոնյաները մակերեսային պատկերացում ունեն ներդրումային քաղաքականության ոլորտում կիրառվող անհրաժեշտ մեթոդաբանության մասին, իսկ կառավարությունը մեղավորների փնտրտուքի մեջ է: Այսօր ՀՀ տնտեսությունը աղետալի վիճակում է, սոցիալ-տնտեսական խորացող ճգնաժամը հատել է բոլոր կարմիր գծերը, ուստի պետք է անհապաղ կանգնեցնել այս քայքայիչ ընթացքը:

Ներդրումները տնտեսության մեջ կարևոր են, քանի որ դրանք տնտեսական աճի ապահովման նյութական ներուժ են և տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու համար ունեն առանցքային դեր: Հայաստանի Հանրապետությունում տնտեսության կայունացման, առաջանցիկ աճի ապահովման համար անհրաժեշտ է մշակել ներդրումային քաղաքականության համալիր միջոցառումներ: Իսկ դա Նիկոլ Փաշինյանի վարչակազմն ունակ չէ անելու: Ի վերջո, ներդրումը գործարք է, որի կատարման արդյունքում պետք է առաջանա հավելյալ արժեք: Ոլորտի կարգավորման համար առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես ձևակերպված չէ, թե ինչպիսի տնտեսական մոդել պետք է ներդրվի, և ինչպիսի ախտաճանաչում պետք է արվի: Այսպիսով.

- Ախտահաճանաչման միջոցով օր առաջ պետք է գնահատվեն ներքին և օտարերկրյա ներդրումների ներգրավման այն արգելքներն ու հիմնախնդիրները, որոնք առաջացել են հարկաբյուջետային

անարդյունավետ քաղաքականության պատճառով:

- Հստակեցված չեն ներդրումների վրա ուղղակիորեն ազդող գործոնները, մասնավորապես՝ եկամտաստեղծ ոլորտների բյուջետային կարգավորումների մեթոդով հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը:
- Հստակեցված չեն ներդրումների վրա անուղղակիորեն ազդող գործոնները, մասնավորապես՝ պետության կարգավորումների մեթոդով տնտեսվարողների և հասարակության վճարունակ զանգվածի առաջարկ-պահանջարկի մեխանիզմները:
- Նախանշված չեն այն առաջնային ոլորտները, որոնցում պետությունը տեսնում է զարգացման հնարավորություն, կամ անհրաժեշտ է, որ տվյալ ոլորտը զարգանա, օրինակ՝ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, տուրիզմ, ծառայություններ, առևտուր, այդ թվում՝ արտաքին:
- Չեն մշակվել այնպիսի ծրագրեր, որոնց շնորհիվ պոտենցիալ ներդրողի համար ՀՀ-ն կդառնա բիզնես վարելու գրավիչ վայր:
- Գնահատված չեն մարքեթինգի ցածր մակարդակի, իրազեկման, գործարար միջավայրի և քաղաքական դաշտի անկայունության հետևանքով առաջացած խնդիրները:
- Հարկային համակարգի խառնաշփոթի, հարկային օրենսգրքի արագ փոփոխությունների (2018 թվականից մինչև 2020 թվականի վերջը՝ 38 անգամ) պայմաններում առկա են անտրամաբանական լուծումներ: Օրինակները շատ են՝ համահարթ եկամտային համակարգ, ռեգրեսիվ դրոշմանիշային վճարների ներդրում, գույքահարկի փոփոխություններ և այլն:
- Չկան օտարերկրյա ներդրումների համար երաշխիքներ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը 1994 թվականին ընդունվելուց հետո փոփոխվել է երեք անգամ, վերջինը՝ 2007 թվականին, մինչդեռ այն ունի լրջագույն վերանայման կարիք:

Տնտեսության մյուս ոլորտներում նույնպես առաջացել են խորքային խնդիրներ: Խնդիրներ կան գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, տուրիզմի, մյուս ծառայությունների և տնտեսական ոլորտներում: Այս ոլորտները նույնպես խորքային գնահատման կարիք ունեն: Սրանք պետության առաջընթացի ճանապարհին լրջագույն խոչընդոտներ են, որոնք պետք է վերացվեն, պետք է ստեղծվի նոր իրավակարգավորումների բազա, ներդրվի նոր համակարգ՝ նոր մարդկանցով և նոր նպատակադրումներով: Այս ամենի համար կան առարկայական լուծումներ, տեսլական կա, ներուժ դեռևս կա:

Դատելով մի շարք ցուցանիշներից՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը 2021 թվական մուտք է գործել տնտեսական մեծածավալ անկմամբ: Մինչ ՀՀ իշխանությունները տարբեր առիթներով թմբկահարում են իրենց հաջողությունների մասին՝ տպված ՀԴՄ կտրոնների թվաքանակի աճի հիման վրա, պետական վիճակագրական ցուցանիշները հերքում են դրական միջավայր ստեղծելու վարչապետի անհիմն հայտարարությունները:

2021 թվականի հունվարին, 2020 թվականի հունվարի համեմատ, տնտեսական ակտիվության

ՀՆԱ-ն ըստ տարիների (մլն դրամ)՝

թվական	բացարձակ արժեք	նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)
2020	6183742,1	92,4
2019	6569030,8	107,6
2018	6017035,2	105,2
2017	5564493,3	107,5

ՀՀ պետական պարտք (մլն ՀՀ դրամ)՝



ցուցանիշը նվազել է 7.5 տոկոսով, շուրջ 7.6 տոկոսով նվազել է ՀՆԱ-ն՝ 6569030.8 մլն դրամից դառնալով 6183742.1 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում արդյունաբերության ցուցանիշը կրճատվել է 11 տոկոսով, առևտրինը՝ 15.1 տոկոսով, ծառայությունների ոլորտինը՝ 10.3 տոկոսով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 17 տոկոսով, արտահանումը՝ 11.3 տոկոսով, ներմուծումը՝ 20 տոկոսով:

ՀՀ պետական պարտքը հատել է 8.0 միլիարդ դոլարի շեմը, և ՀՀ պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է ավելի քան 67 տոկոս, մինչդեռ ՀՀ պետական պարտքի մասին օրենքով սահմանված շեմը 60 տոկոս է: Հայաստանի կառավարությունը նաև 2021 թվականին թողարկել է 750 մլն դոլար արժեքով եվրոպարտատոմսեր, ինչը վկայում է այն մասին, որ այս կառավարությունն ավելի շատ պարտք է ներգրավում, քան նախատեսված էր: Նա չի կարողանում ավելի արդյունավետորեն կառավարել պետական միջոցները, չի կարողանում ներգրավել ավելի էժան միջոցներ, պարտքերը կուտակում է աշխատավարձ և թոշակ բաժանելու համար, չի ներգրավում ծրագրային միջոցներ և մնացել է միայն պարտատոմսերի թողարկման հույսին: ՀՀ-ում աղքատության ցուցանիշը բարձր է, մեծ է աշխատող աղքատների թիվը, պետական եկամուտների հավաքագրելիության մակարդակը սահմանվածից ցածր է, իսկ պետական բյուջեն կազմվում է ինքնահոս սկզբունքով և չի կարող դիմագրավել առկա մարտահրավերներին, որոնց առջև կանգնած է երկիրը:

2021 թվականի հունվարին, 2020 թվականի հունվարի համեմատ, գնաճի միջին ցուցանիշը կազմել է 4.5 տոկոս, մասնավորապես առաջին անհրաժեշտության ապրանքների գների միջին աճը 10-15 տոկոս է: Միջին անվանական աշխատավարձը նվազել է 4 տոկոսով, իսկ պետական հատվածի աշխատավարձը չի նվազել պարգևատրումների հաշվին: Արժեզրկվել է ազգային արժույթը. ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի հարաբերակցությամբ արժեզրկվել է շուրջ 10 տոկոսով: Սա նշանակում է, որ ներմուծվող հումքը, որը մեզ մոտ անցնում է արտադրական տեխնոլոգիական գործընթացներով, ունի ավելի բարձր ինքնարժեք: Փոխարժեքի փոփոխությունը բացասաբար է անդրադարձել նաև ՀՀ-ում սպառվող գազի արժեքի վրա, ինչի հետևանքով բնական գազի սպառմամբ վերամշակվող արդյունաբերական ապրանքներն ունենում են բարձր ինքնարժեք:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը, տարածքային կորուստներն ահռելի վնաս են հասցրել երկրի տնտեսությանը: Դրանք բացասաբար են ազդել ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի տնտեսության վրա: Քաշաթաղի և Քարվաճառի շրջանները հայտնի են իրենց ջրային հարուստ ռեսուրսներով, որոնք ապահովում էին հէկ-երի անխափան աշխատանքն ու էներգետիկ անվտանգությունը: Կորցրել ենք շուրջ 30 հէկ:

Շատ կարևոր է հանքարդյունահանման ոլորտի անխափան աշխատանքը, այն հանքերի, որոնք մնացել են Արցախի տիրապետության տակ: Կորցրել ենք մետաղական և ոչ մետաղական բազմաթիվ հանքեր, որոնք ապահովում էին աշխատատեղեր, գեներացնում էին հարկերը: Այսինքն՝ ՀՆԱ-ի առյուծի բաժինն ապահովում էր հանքարդյունահանման ոլորտը:

Պարենային անվտանգության տեսանկյունից շատ կարևոր էին հարավային, ավելի հարթավայրային ցանքատարածքները, որոնց կորուստն անդառնալի հետևանք կթողնի: Պատերազմի հետևանքով շուրջ 50 հազար հեկտար հացահատիկի արտեր են անցել թշնամու տիրապետության տակ, որոնք տալիս էին ավելի քան 550 հազար տոննա ցորեն: Ընդհանուր առմամբ կորցրել ենք մոտ 95 հազար հեկտար ցանքատարածք:

Ներկայումս կորստին գումարվել են սոցիալական նոր խնդիրներ, որոնց հետևանքների գնահատման և վերացման համար անհրաժեշտ են նյութական խոշոր ռեսուրսներ:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ծայրաստիճան վտանգավոր հանգրվանում: Սա նշանակում է, որ հապաղելու իրավունք չունենք, իսկ անելիք իսկապես շատ կա, և այս ամենը հնարավոր է իրականացնել բացառապես իշխանափոխությունից հետո: Կարևոր է ոչ միայն գործող իշխանությունների հեռանալը, այլ նաև այն, թե ովքեր պիտի գան, և, որ ավելի կարևոր է, ինչ պիտի անեն նորերը:

Այս դժվարին օրերին ՀՅԴ-ն ձևավորել է աշխատանքային խումբ, որը զբաղվում է առկա իրավիճակի հանգամանալի գնահատման, խնդիրների ախտաճանաչման և լուծումների մշակման գործով: Ձևավորված խումբն աշխատում է բավականին արդյունավետ: Ավարտուն տեսքի բերելուց հետո սեղանին կդրվի ամբողջական փաթեթ, և դրա վերաբերյալ կլինեն հրապարակումներ:

Կաշենի հանքավայրը Արցախում

Հետպատերազմական Ադրբեջանը. հայացք դեպի ներս

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Թեև Արցախյան երկրորդ պատերազմում ադրբեջանական հասարակությունը Ադրբեջանում և երկրից դուրս գործող քաղաքական ուժերի և քաղաքացիական խմբերի հետ ընդհանուր առմամբ աչքի ընկավ միասնականությամբ, գործող իշխանությունների շուրջ համախմբվելու, սեփական բանակին սատարելու ակտիվությամբ, և քիչ չէին տեղի ունեցողը «համազգային համախմբում» և «համազգային վերելք» անվանողները, սակայն ԱՀ-ում հետպատերազմական շրջանի ներքաղաքական զարգացումները և որոշ իրողություններ այնուամենայնիվ փաստում են, որ տրված գնահատականները չափազանցված էին կամ առնվազն արդեն ոչ իրական հետպատերազմական շրջանի համար:

Ներքաղաքական իրավիճակը

ԱՀ նախագահ Իլհամ Ալիևը, ով, ի հաշիվ պատերազմի դաշտում սեփական բանակի գրանցած հաջողությունների և դիվանագիտական, արտաքին քաղաքական դաշտում իր ակտիվության, կարողացել էր բարձրացնել սեփական վարկանիշը ադրբեջանական հասարակության շրջանում և ապահովել իշխանության համար շոշափելի ու իր պաշտոնավարման ողջ ընթացքում աննախադեպ իրական հասարակական հենք, և՛ պատերազմի ընթացքում, և՛ դրանից անմիջապես հետո որոշեց շարունակել ԱՀ քաղաքական դաշտի թարմացման և իր կողմից ավելի վաղ նախագծված «կառուցողական ընդդիմության» ձևավորման աշխատանքները: Այդ ուղղությամբ իրականացված գործողություններում ակնհայտ է երկու հիմնական գիծ, որոնք են.

1. Պատերազմի ժամանակ գործող իշխանություններին հիմնականում չքննադատած, բայց միևնույն ժամանակ հաջողությունները ոչ թե քաղաքական ղեկավարությանը, այլ բացառապես բանակին և Թուրքիային վերագրած և, բացի այդ, նախկինում իշխանության եղած, այսպես կոչված, «դասական ընդդիմության» վարկաբեկում, ինչի համար ստեղծվել է պարարտ հող հատկապես պատերազմից հետո: «Դասական ընդդիմության»՝ իշխանության եղած ժամանակ ունեցած տարածքային կորուստները և դրանց վերադարձը գործող նախագահի պաշտոնավարման շրջանում հարմար առիթ են վերջինիս համար անընդհատ համեմատություններ անելու և իր հիմնական քաղաքական ընդդիմախոսներին ծանր դրության մեջ դնելու համար: Այս համատեքստում պատահական չէ, որ ԱՀ գործող նախագահը Արցախյան երկրորդ պատերազմի առաջին օրվանից՝ սեպտեմբերի 27-ից առ այսօր իր ելույթներում բազմիցս հիշել է «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» և «Մուսավաթ» կուսակցություններին: Օրինակ. *«Ղարաբաղյան տարածքները կորցնելու մեջ մեղավորները «Ադրբեջանի ժողճակատ» և «Մուսավաթ» կուսակցություններն*

են: Մեր տարածքները բռնազավթվել են հենց նրանց իշխանության ժամանակ: Այդ տարածքները կորցրել ենք նրանց դավաճանական և անօգուտ գործունեության պատճառով: ....Մենք այսօր Ադրբեջանի վրայից սրբում ենք ԱԺՃ և «Մուսավաթ» կուսակցությունների թողած բիծը» (Անվտանգության խորհրդի նիստ, 27 սեպտեմբերի 2020 թ.), *«....Քաղաքական կուսակցությունների բացարձակ մեծամասնությունը սատարում է բռնազավթված տարածքները հետ բերելու իմ քաղաքականությունը: Ընդամենը երկու կուսակցություն չի մասնակցում այդ գործընթացին: Դրանք են ԱԺՃ-ն և «Մուսավաթը»»* (Ճապոնիայի «Nikkei» օրաթերթին տված հարցազրույցից, 21 հոկտեմբերի 2020 թ.), *«Երիտասարդ սերունդը պետք է ճանաչի Շուշին, Լաչինը, Խոջալուն, Քելբաջարը ծախածներին, փախուստի դիմածներին, մեր հողերի բռնազավթման համար պայմաններ ստեղծածներին: Նրանք [մեր երկրի գլխին] փորձանք բերեցին, աղետ բերեցին, անմեղ մարդկանց սպանվելու իրավիճակ ստեղծեցին, մարդկանց չպաշտպանեցին: ԱԺՃ-«Մուսավաթ» իշխանական զույգը փախավ, թաքնվեց, հանձնվեց, խայտառակ եղավ....»* (2020 թ. արդյունքներն ամփոփող ելույթ, 6 հունվարի 2021 թ.), *«Ես սա ասել եմ: Ուզում եմ մեկ անգամ էլ ասել, որ Ադրբեջանի ժողովուրդը դա իմանա և երբեք չմոռանա: ԱԺՃ-«Մուսավաթ» անիծյալ զույգը իշխանության գալու համար թշնամուն է վաճառել այս տարածքները: Այն ժամանակ իշխանությունը զավթելու համար Բաքվում միտինգներ էին կազմակերպում, ցնցումներ հրահրում, հանուն իշխանության դիմում ամեն տեսակ դավաճանության: Դատարկեցին Շուշին: ....Հետո Լաչինի շրջանը ծախեցին և, դրանից մի ամիս չանցած, իշխանության եկան»* (Ծաղկաբերդում (Գյուլաբիրդ) ունեցած ելույթից, 15 փետրվարի 2021 թ.):

2. ԱՀ ռազմաքաղաքական վերնախավին և ֆինանսական էլիտային, բայց ոչ անձամբ գործող նախագահին և նրա ընտանիքին քննադատելու «իրավունքով» օժտված «կառուցողական ընդդիմությանը» հասարակության մեջ որպես ընդդիմություն ընկալելի և ընդունելի դարձնելու քաղաքականության որդեգրում և այդ գիծը հետևողականորեն առաջ մղելուն միտված գործնական

քայլերի իրականացում (քողարկված PR, «իշխանություն-ընդդիմություն» ձևաչափով քաղաքական դերասանների կազմակերպում ևն):

Ընդհանուր առմամբ, թեև Ի. Ալիևն այս պահին վերահսկում է ԱՀ ներքին իրավիճակը և ապահովում քաղաքական կայուն վիճակ իր երկրի ներսում, սակայն միաժամանակ նկատելի են վերջինիս և նրա քաղաքական թիմի վարկանիշի անկման և մինչպատերազմական շրջանի հասարակական դժգոհությունների ակտիվացման միտումներ: Պատերազմական էյֆորիայի մարման, հասարակական ոգևորության պարպման և դժգոհությունների ակտիվացման այս փուլում պատահական չի թվում գործող նախագահի՝ մինչպատերազմական վերջին երկու տարվա իր ներքին քաղաքականությանը վերադառնալը, որում առանցքային էին կոռուպցիայի դեմ պայքարը և դա ապացուցող ձերբակալությունները, իշխանական վերնախավի տարբեր թևերի ներկայացուցիչներին իշխանությունից հեռացնելը: Եթե պատերազմից առաջ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ԱՀ Պետանվտանգության ծառայության կողմից ձերբակալվել էին Աղստևի, Եվլախի, Նեֆթչալայի, Բիլասուվարի, Իմիշլիի և վարչական այլ շրջանների ղեկավարները (2019 թ. նոյեմբեր - 2020 թ. մայիս, մշակույթի փոխնախարար Ռաֆիկ Բայրամովը (2020 թ., մայիս), ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյաներ Ֆարհադ Մոլլազադեն, Սալիմ Ալիզադեն, Նուրուփաշա Աբդուլլաևը (2020 թ., հուլիս) և այլք, իսկ Իլհամ Ալիևի հրամանով աշխատանքից հեռացվել «Ազերէներժի» ԲԲԸ նախագահ Էթիբար Փիրվերդիևը (2018 թ., սեպտեմբեր), նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհդիևը, փոխվարչապետներ Ալի Հասանովը, Հաջըբալա Աբութալըբովը (2019 թ., հոկտեմբեր), նախագահի հասարակական-քաղաքական հարցերով օգնական Ալի Հասանովը (2019 թ., նոյեմբեր), ԱՀ գլխավոր դատախազ Զաքիր Գարալովը (2020 թ., ապրիլ), մշակույթի նախարար Աբուլֆաս Գարաևը (2020 թ., մայիս), ԱԳ նախարար Էլդար Մամեդյարովը (2020 թ., հուլիս), ավելի քան մեկ տասնյակ վարչական շրջանների ղեկավարներ (2018-2020 թթ.) և այլք (ցանկը չափազանց մեծ է ամբողջությամբ թվարկելու համար), ապա պատերազմից հետո նշված կառույցի իրականացրած գործողությունների հետևանքով ձերբակալվել են Ջալիլաբադի վարչական շրջանի ղեկավար Նամիգ Ջեյնալովը (2020 թ., դեկտեմբեր) և Բաքվի պողպատի ընկերության վերահսկողության խորհրդի նախագահ Ռասիմ Մամմադովը (2021 թ., փետրվար), իսկ աշխատանքից հեռացվել են ԱՀ ՋՈՒ ԳՇ պետ Նաջմադդին Սադիկովը (2021 թ., հունվար. թեև պաշտոնական հայտարարության մեջ նշված է, որ նա աշխատանքից հեռացել է իր կամքով, առողջական խնդիրների պատճառով, սակայն ՊՆ պաշտոնական կայքից նրա մասին կենսագրական տեղեկությունները հեռացվել են դեռևս 2020 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակում), «Ազերգորգ» ԲԲԸ կառավարման խորհրդի նախագահը (2021 թ., հունվար), նաև տարածքային կառավարման և վարչական մարմինների

ղեկավարներ, գիտակրթական հաստատությունների տնօրեններ և ռեկտորներ: Միաժամանակ և՛ ԱՀ նախագահը, և՛ իշխող կուսակցությունը ներկայացնող որոշ պատգամավորներ 2021 թ. անցած երկու ամիսների ընթացքում ակնարկել, նաև հայտարարել են առաջիկայում նոր պաշտոնյաների հնարավոր ձերբակալությունների մասին և կոչ են արել ԱՀ քաղաքացիներին ուժեղացնելու քաղաքացիական վերահսկողությունը պետական համակարգի և դրա տարբեր օղակներում բարձր դիրքեր զբաղեցնող պաշտոնյաների գործունեության նկատմամբ:

Սոցիալ-տնտեսական իրավիճակը և հանրային տրամադրությունները

Ադրբեջանում 2021 թ. առաջին երկու ամիսներին տեղի են ունեցել կենսական անհրաժեշտության որոշ ապրանքատեսակների, վառելանյութերի, ծխախոտի և այլ ապրանքների, ինչպես և կոմունալ ծառայությունների թանկացումներ, որոնք պատճառ են դարձել հասարակական շոշափելի դժգոհությունների: Նախ Սակագների խորհրդի հունվարի 4-ի որոշմամբ ≈11 %-ով թանկացել է բենզինը, ≈33 %-ով՝ դիզվառելիքը, հունվարի 31-ի որոշմամբ՝ գրեթե կրկնակի (բացառությամբ որոշ վարչական շրջանների)՝ ջրի սակագինը: Ակցիզային հարկի բարձրացման պատճառով ≈15-20 %-ով թանկացել են ծխախոտի բոլոր տեսակները: Կենսական անհրաժեշտության որոշ ապրանքատեսակների (հաց, շաքար, շաքարավազ, ձեթ, յուղ ևն) ոլորտում տեղի է ունեցել թանկացում 20-30 %-ով: Թանկացումներ են եղել նաև մրգի և բանջարեղենի ոլորտում: Հասարակության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ ԱՀ իշխանությունները արհեստականորեն պարտադրվող թանկացումներով փորձում են կոմպենսացնել այն ֆինանսական ծախսերը, որոնք կատարել են պատերազմի հետևանքով: Թանկացումների առումով հասարակության միջին և միջինից ցածր խավերին գործող իշխանությունների դեմ տրամադրելու հարցում ակտիվ քարոզ են տանում և՛ ԱՀ-ի ներսում գործող «դասական ընդդիմության» (հիմնականում՝ ԱԺՃԿ) ներկայացուցիչները, և՛ հատկապես վտարանդի ընդդիմադիր գործիչները, լրագրողները, քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչները: Նույն հարցը իրենց ելույթներում, բանավեճերում և հայտարարություններում շահարկում

են նաև «կառուցողական ընդդիմության» ակտիվ ներկայացուցիչները, սակայն մեղավորներ են նշանակում իշխանության բուրգի բոլոր անդամներին՝ բացառությամբ դրա գլխին կանգնած ԱՀ նախագահի և նրա ընտանիքի:

Թե՛ ԱՀ-ում, թե՛ ԱՀ-ից դուրս գործող ոչ իշխանական ուժերի քարոզչության մեջ, որն ակնհայտ ազդեցություն ունի ԱՀ հասարակական կարծիքի վրա, հետպատերազմական ողջ շրջանում կարմիր թելի պես անցնում են Արցախյան հիմնախնդրի թեման և նոր իրողությունների շահարկումը՝ ընդդեմ կամ «ընդդեմ» գործող իշխանությունների՝ հետևյալ շեշտադրումներով.՝

- Թեև Թուրքիան զգալի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին պատերազմի ողջ ընթացքում, սակայն դրա դիմաց ոչինչ չի ստացել, և ադրբեջանական իշխանությունները անշնորհակալ են գտնվել եղբայրական Թուրքիայի հանդեպ:
- Ադրբեջանական իշխանությունները թույլ են տվել ռուսական կողմին կրկին վերականգնել իր ռազմական ներկայությունը Ադրբեջանի տարածքում, և առաջիկայում դա գլխացավանք է դառնալու իրենց երկրի համար:
- Թեև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը պատերազմի ողջ ընթացքում և անգամ նոյեմբերի 8-ին հայտարարում էր, որ ադրբեջանական բանակը գնալու է մինչև վերջ, ԼՂ-ն ամբողջությամբ «ազատագրվելու է», հարցը վերջնականապես փակվելու է, սակայն չի կատարել իր խոստումը, քանի որ թույլ է տվել ՌԴ խաղաղապահների մուտքը հակամարտության գոտի, ԼՂ մի մասում չի ծածանվում Ադրբեջանի դրոշը, չի գործում ԱՀ օրենքը, շարունակում են ազատության մեջ մնալ Արցախի «անջատողական և ահաբեկիչ» ղեկավարները, հայերը ՌԴ խաղաղապահների գործուն միջամտությամբ վերադառնում են այդ տարածքներ, անում իրենց սրտի ուզածը, օրինակ՝ կանգնեցնում են Գարեգին Նժդեհի արձանը Մարտունիում, ադրբեջանցիները չեն կարող գնալ Ստեփանակերտ և Արցախի այլ բնակավայրեր, Լաչինում Ադրբեջանի ՊՄԾ-ն չի իրականացնում սահմանային ծառայություն, չկա ադրբեջանական հսկիչ սահմանային անցակետ, ՀՀ պաշտոնյաները (օր.՝ ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը) ազատ մուտք ու ելք են անում Արցախում և այլն:

Նմանատիպ թեզերի գեներացման և հանրության շրջանում դրանց տարածման պատճառներից կարող է լինել մի կողմից ստեղծված իրավիճակից Թուրքիայի որոշակի դժգոհությունը և վերջինիս՝ իր հետ համագործակցող ներադրբեջանական և վտարանդի քաղաքական ուժերի միջոցով հետպատերազմական գործընթացներում թուրքական ակտիվությունը չխրախուսող, ՌԴ-ի հետ ավելի ակտիվ աշխատող ադրբեջանական իշխանությունների դեմ թուրքամետ տրամադրություններով աչքի ընկնող հասարակության բողոքը բորբոքելու քաղաքականությունը, մյուս կողմից՝ ադրբեջանական իշխանությունների միտումնավոր թողտվությունը՝ հանրային բողոքը լիցքաթափելու և հակառուսական տրամադրությունները մեղմացնելու

Ռուս խաղաղապահները Արցախում

անվան տակ հակամարտությանն առնչվող որոշ էական հարցերում (կարգավիճակի շուրջ բանակցությունների բացառում, Լաչինում սեփական հսկիչ անցագրային կետի կառուցում ևն) ՌԴ-ից զիջումներ կորզելու նպատակով:

Էթնիկական դժգոհություններ

Թեև Արցախյան երկրորդ պատերազմում ԱՀ իշխանությունները մեծապես օգտագործել են Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների մարդկային ռեսուրսը, սակայն հետպատերազմական Ադրբեջանում այդ ժողովուրդների ոտնահարված իրավունքների վերականգնման ուղղությամբ չի գրանցվել որևէ փոփոխություն. տեղաբնիկ ժողովուրդների հանդեպ պետական վերաբերմունքը Ադրբեջանում շարունակում է մնալ նույնը: Ավելին՝ փետրվարի սկզբին Լենքորան քաղաքում ձերբակալվել և ոստիկանական բաժանմունքներ են տարվել «Ուսանողական ուժային կառույց» կազմակերպության անդամ չորս թալիշ ուսանողներ, որոնք Լենքորանի պետական համալսարանի ղեկավար կազմին ներկայացրած բարեփոխումների՝ 8 կետից բաղկացած ծրագրում ներառել են նաև նշված համալսարանում «Թալիշագիտություն» առարկայի ներդրման պահանջ: Ուսանողները համալսարանի ղեկավարության կողմից մեղադրվել են «անջատողականության քարոզի» մեջ: Թալիշ ուսանողների ձերբակալության և ոստիկանական բաժանմունք տարվելու փաստը դատապարտող հայտարարություն է տարածել Ադրբեջանի թալիշների հանրային խորհուրդը: Բացի այդ՝ տեղի ունեցածը խստորեն դատապարտել են նաև մի շարք վտարանդի թալիշ գործիչներ (Ալաքրամ Հումմաթով, Զաբիլ Մահարրամով, Աթախան Աբիլով և այլք) և Ադրբեջանից դուրս գործող թալիշական կազմակերպություններ: Փետրվարի վերջին սոցիալական ցանցերի և առցանց տարբեր հարթակների միջոցով էթնիկական հիմքով կիրառվող ճնշումների և խտրական վերաբերմունքի մասին են բարձրաձայնել նաև ԱՀ հյուսիսում բնակվող լեզգիները, որոնց հայտարարություններից դատելով՝ անասնապահությամբ զբաղվող լեզգիներին հարկադրաբար ստիպում են լքել Ուջարի և Զարդաբի վարչական շրջանների միջև ընկած այն տարածքները, որոնք վերջիններիս կողմից ավանդաբար օգտագործվել են որպես ձմեռանոցներ: ■

Հայաստան-Իրան հարաբերությունները նոր մարտահրավերների համատեքստում

Ահարոն Վարդանյան
Երևանի պետական համալսարանի դասախոս, իրանագետ

ՀՀ անկախացումից և ԻԻՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր (1992թ. փետրվարի 9) երկու երկրների հարաբերությունները գրեթե միշտ զարգացել են վերընթաց կորագծով:

Հայաստանի և Իրանի առաջին պետական կազմավորումներն ի հայտ են եկել մոտ 5 հազար տարի առաջ: Այդ ժամանակից սկսած՝ նրանց տարածքներն ու պետական կազմավորումները բազմաթիվ փոփոխություններ են կրել, սակայն հայերն ու իրանական ժողովուրդները՝ որպես այս տարածաշրջանում պետական միավորումներ ձևավորող էթնիկ խմբեր, դարերի ընթացքում չեն փոխվել: Իրանը մշտապես սերտ հարաբերություններ է հաստատել և պահպանել Հարավային Կովկասի ժողովուրդների հետ: Սակայն Հայաստանի հետ հարաբերությունները առանձնանում են՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ ավանդական բարիդրացիական, բնական հարևանությամբ, ռազմավարական հարաբերությունների զարգացմամբ, պատմամշակութային կապերով, տնտեսական, աշխարհաքաղաքական և անվտանգային փոխադարձ շահերով:

Իրանի տարածքով են անցնում Հայաստանն արտաքին աշխարհին կապող տրանսպորտային երթուղիները: Հարևան երկու երկրների՝ Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի կողմից տընտեսական և տրանսպորտային շրջափակման պայմաններում էլ ավելի է կարևորվում Իրանի՝ որպես դեպի Ասիա և Միջին Արևելք ռազմավարական նշանակության ճանապարհ ապահովող երկրի դերը: Չնայած զինադադարի հայտարարությանը վերաբերող 2020թ. նոյեմբերի 10-ի փաստաթղթում նշված է տրանսպորտային ճանապարհների ապաշրջափակման մասին, բայց բոլորի համար էլ հասկանալի է, թե դա ինչ է նշանակում և ինչ վտանգներ ու ռիսկեր կարող է պարունակել ՀՀ-ի համար:

Արևմուտքը հստակորեն իրականացնում է Իրանի դիվականացման ծրագիրը և փորձում է Իրանն արտաքին աշխարհին ներկայացնել որպես վատի, չարի մարմնացում՝ այս դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ բավականին ազդեցիկ Հայկական սփյուռք և հեղինակավոր հայկական լոբբի կան աշխարհի տարբեր երկրներում, որոնք ճիշտ աշխատելու դեպքում կարող են կապող կամուրջ լինել նաև ոչ բարեկամաբար տրամադրված պետությունների և Իրանի միջև: Փաստորեն, Իրանը կարող է օգտվել հայկական լոբբիի աշխատանքից և ապահովել իր համար բարենպաստ քաղաքական ու տնտեսական լուծումներ: Մանավանդ որ այս

ամենի պատմական փորձը նույնպես կա, եթե հիշենք Սեֆյանների ժամանակաշրջանի Նոր Ջուղայի խոջաներին, որոնք այն ժամանակ նույնպես կատարում էին միջնորդի դեր Իրանի և Ռուսաստանի ու Արևմուտքի միջև: Բացի այդ՝ Հայաստանի՝ որպես հարևան երկրի տարածքը Իրանի համար կարևոր միջանցք է դեպի հյուսիս (Վրաստանով) և հետագայում դեպի Ռուսաստան: Դա ակնհայտորեն շահավետ է Իրանի համար հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում, երբ պատերազմից հետո Հարավային Կովկասում էապես մեծացել են Թուրքիայի ազդեցությունը և ներկայությունը, որը ձգտում է տարածաշրջանում ԻԻՀ-ի նկատմամբ հասնելու գերակայության գրեթե բոլոր առումներով՝ ռազմական, քաղաքական, տնտեսական և, որ ամենակարևորն է, կրոնական. Թուրքիան ԻԻՀ-ի և Սաուդյան Արաբիայի դեմ այս հարցում անզիջում պայքարի մեջ է: Թուրքիայի ակտիվությունը Իրանի հյուսիսային սահմաններում վերջինիս համար խիստ վտանգավոր է նաև այն առումով, որ Իրանի հյուսիսում բնակվող թյուրքախոս իրանցիների շրջանում մեծ թիվ են կազմում պանթյուրքական հայացքներով աչքի ընկնողները, որոնք ԻԻՀ-ի համար ներքին անվտանգության տեսանկյունից բավականին ռիսկային խումբ են: Այս ամենը հաշվի առնելով՝ բնական է, որ պաշտոնական Թեհրանը չի կարող չանհանգստանալ Հարավային Կովկասում Թուրքիայի զգալի ակտիվությունից և ներկայությունից:

Ներկայումս, շփվելով իրանցի ինչպես պահպանողական, այնպես էլ բարեփոխական թևի փորձագետների հետ, նրանց հետ մասնակցելով մի շարք քննարկումների, կարող ենք ասել, որ Իրանում փորձում են հիմնվելով տնտեսական բաղադրիչի վրա շտկել տարածաշրջանում ի վնաս Թեհրանի ստեղծված իրավիճակը: Մյուս կողմից՝

նշվում է, որ իրավիճակը կարող է էապես փոխվել Թեհրանի ճիշտ, հաշվենկատ քաղաքականության շնորհիվ: Բանն այն է, որ Իրանում հաշվարկել են, որ զգալի ներդրումային հոսքեր և տնտեսական ներկայացվածություն ապահովելով, ֆինանսական զգալի կապիտալ ունենալով ինչպես հայաստանյան, այնպես էլ ադրբեջանական տնտեսություններում և Իրանից ենթակառուցվածքների կախվածությունն ապահովելով (խոսքը հատկապես Արցախից գրավված՝ Իրանին սահմանամերձ հատվածների մասին է) հնարավոր կլինի ապահովել կայուն, մշտական ու զգալի ներկայություն և հետևաբար նաև ազդեցություն ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի վրա:

Իհարկե, պետք է նշել, որ Հայաստանի պարագայում իրավիճակը փոքր-ինչ այլ է: Իրանում շատ լավ հասկանում և ըմբռնում են Երևանի վրա Մոսկվայի մեծապես աճած ազդեցությունը և Հայաստանը դիտարկում են որպես ռուսական ազդեցության գոտի: Թեհրանում գիտակցում են, որ 2020թ. պատերազմից հետո Հայաստանում Ռուսաստանի քաղաքական և ռազմական զգալի ներկայությունն իրական ռիսկ է ստեղծում այն առումով, որ ապագայում Թեհրանի հետ հարաբերությունները կառուցելիս Երևանն ավելի շատ է հայացքը հառելու Մոսկվային և գնալով խուսանավելու ավելի փոքր հնարավորություն է ունենալու: Այս առումով այլ է հնարավորությունը Ադրբեջանի հետ հարաբերությունների պարագայում: ԻԻՀ ներկա իշխանությունները փորձում են իրենց ներկայությամբ, ակտիվ, նախաձեռնողական քաղաքականությամբ հակակշռել միանգամից մի քանի ուժերի՝ 1) իսրայելական, 2) բրիտանական, 3) թուրքական, որը կտրուկ մեծացել է 2020թ. պատերազմից հետո: Այստեղ Մոսկվան ավանդականորեն չունի այդ ներկայությունը, և այն չի դիտարկվում ՌԴ ազդեցության գոտի, որի հետ Թեհրանը ներկայումս չի ուզում հակասություններ ունենալ: Այդ պատճառով, ինչպես նաև պայմանավորված այլևայլ գործոններով (կրոնը, Ադրբեջանում իրանալեզու տեղաբնիկ ժողովուրդների առկայությունը, բնակչության մի

Մեղրիի ազատ տնտեսական գոտին



որոշակի հատվածի համակրանքը Իրանի նկատմամբ և այլն)՝ Իրանի հարաբերությունները Բաքվի հետ զարգանում են այլ հունով և տեմպով:

2018թ. իշխանափոխությունից հետո ՀՀ իշխանության՝ որոշում կայացնող օղակներում հայտնվեցին արևմտամետ և ամերիկամետ հայացքներով, տարատեսակ ՀԿ-ների հետ կապ ունեցող անձինք, ինչն Իրանում ընկալվեց ոչ միանշանակորեն, և, ինչպես ցույց տվեցին դրան հաջորդած մոտ երեք տարիները, ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում առաջացան խոռոչներ և կնճիռներ: Փաստացի 2018թ.-ից առ այսօր ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում նկատվում է անվստահության մթնոլորտ:

Նոյեմբերի 9-ի փաստաթղթով նախատեսված, այսպես կոչված, «Մեղրիի միջանցքի» գործարկումը կարող է փաստացի խաթարել հայ-իրանական ուղիղ ցամաքային կապը և լուրջ անվտանգային ռիսկեր պարունակել: Առ այսօր հայտնի չէ, թե ինչ ձևաչափով պետք է գործարկվի այդ «միջանցքը», և այդ հարցի շուրջ խորհրդավորությունն էլ ստիպում է Թեհրանին զգուշավորություն ցուցաբերել այս կետում և նրբորեն ու գերճշգրիտ հաշվարկներով փորձել այնպես անել, որ խաղից դուրս չմնա, քանի որ այդ պարագայում դա չի ներվի ներկա կառավարությանը, որն առանց այն էլ խիստ քննադատությունների ներքո է, հիմնականում տարածաշրջանային քաղաքականության և միջազգային համաձայնագրի պատճառով:

Պատերազմից մոտ 1-1.5 ամիս առաջ իրանական և միջազգային մամուլում, փորձագիտավերլուծական դաշտում և քաղաքական բարձր ղեկավարության մակարդակով խոսվում ու քննարկվում էր Սիրիայից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից Թուրքիայի ուղղակի միջամտությամբ, Ադրբեջանում ահաբեկիչների հայտնվելու փաստը: Այնուհետև՝ պատերազմի ողջ ընթացքում, խոսվում էր ահաբեկչական տարբեր խմբավորումների ներկայության մասին, սակայն հետագայում՝

պատերազմի ավարտից հետո, այդ թեման կարծեք միանգամից անհետացավ լրատվական դաշտից, բայց պարզ էր, որ դա անհանգստացնում է Իրանին և լրջագույն անվտանգային խնդիրներ է ստեղծում Թեհրանի համար: 2021թ. հունվարի 27-ին Մոսկվայում և հունվարի 28-ին Երևանում ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամմադ-Ջավադ Զարիֆը կրկին բարձրացրեց և միջազգային օրակարգ բերեց ահաբեկիչների թեման: Ուշագրավն այն է, որ ահաբեկիչների մասին վերջինս խոսեց միայն Մոսկվայում և Երևանում, ինչը, ըստ իս, յուրօրինակ ուղերձ էր Ռուսաստանին և Հայաստանին՝ հակաահաբեկչական կոալիցիա ստեղծելու կամ գոնե այս ոլորտում համատեղ պայքարի հնարավորությունները քննարկելու տեսանկյունից: Հետագայում՝ սույն թվականի փետրվարի 7-8-ը Մոսկվայում գտնվելու ընթացքում, այդ հարցին անդրադարձավ նաև ԻԻՀ խորհրդարանի նախագահ Մոհամմադ-Բաղեր Ղալիբաֆը:

Ղալիբաֆը, վերադառնալով Թեհրան, հայտարարեց, որ Իրանը մտադրություն ունի անդամակցելու ԵԱՏՄ-ին, որի հետ 2018 թ. մայիսին ստորագրել էր միջգերատեսչական համաձայնագիր՝ ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին: Թեհրանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին ՀՀ-ի համար ինչպես նոր հնարավորություններ է ստեղծում, այնպես էլ կարող է որոշակի անհարմարություններ առաջ բերել: Խնդիրն այնէ, որ ԻԻՀ-ԵԱՏՄ հարաբերությունները դեռևս կարգավորվում են ՀՀ-ի միջոցով, քանի որ Հայաստանը միակ երկիրն է, որը ցամաքային սահման ունի Իրանի հետ, և ժամանակին Երևանին էր վստահված այդ դերը: Սակայն 2020թ. պատերազմը շատ բան փոխեց, այդ թվում՝ նաև տարածաշրջանում մինչ այդ պահը եղած աշխարհաքաղաքական ստատուս քվոն, ընդ որում՝ ոչ հօգուտ Թեհրանի. հետպատերազմյան շրջանում ստեղծված իրավիճակով վտանգվել է ՀՀ-ԻԻՀ ցամաքային ճանապարհի մի հատվածը, այդ շրջաններում մեծացել է ՌԴ ազդեցությունը, կամ այն ամբողջովին անցել է ՌԴ վերահսկողության ներքո, չի գործում Մեղրիի ազատ առևտրի տնտեսական գոտին, դադարեցված է «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարությունը, ՀՀ-ն քաղաքական տուրբուլենտության մեջ է, առկա է տնտեսական ճգնաժամ: Եվ եթե այս ամենին գումարվի նաև այն հանգամանքը, որ ԻԻՀ-նկարող է դառնալ ԵԱՏՄ անդամ, ապա ԻԻՀ հետաքրքրությունը ՀՀ-ի նկատմամբ էականորեն կնվազի: Մյուս կողմից՝ ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները երկկողմ հարթությունում այլ են, իսկ ԵԱՏՄ-ի ներսում կլինեն այլ, և սա յուրահատուկ հնարավորություն կարող է լինել ՀՀ-ի համար՝փոքր-ինչ կարգավորելու հետպատերազմյան վիճակում գտնվող տնտեսությունը:

Շուշիականություն

Խաչատուր Ստեփանյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայ իրականության մեջ եղել են և կան մի շարք երևույթներ, որոնք ոգեղեն նշանակություն են ունեցել և շարունակում են ունենալ մեր ժողովրդի համար: Այդպիսի երևույթներ կարող ենք համարել Հայկ Նահապետին, հին հայոց ռազմի, քաջության, հաղթանակի և ամպրոպի գերագույն Աստված Վահագնին, Արտաշես Ա և Տրդատ Մեծ արքաներին, Մեսրոպ Մաշտոցին, Վարդան Մամիկոնյանին, Գրիգոր Նարեկացուն, Գրիգոր Տաթևացուն, Արամ Մանուկյանին, Արարատ և Նեմրութ լեռները, Սուրբ Էջմիածինը, Ավարայրի, Սարդարապատի և Շուշիի հերոսամարտերը, մի շարք բերդեր և ամրոցներ: Այդպիսի ոգեղենություն ունի նաև Շուշին՝ որպես հոգևոր-մշակութային կենտրոն և բերդաքաղաք:

19-րդ դարի 20-ական թվականներից սկսած՝ Շուշին շուրջ մեկ դար եղել է Արևելյան Հայաստանի հոգևոր-մշակութային կարևոր կենտրոններից մեկը: (Թիֆլիսը նույնպես արևելահայության հոգևոր-մշակութային կարևոր կենտրոն էր, բայց Արևելյան Հայաստանում չէր): Առանց չափազանցության կարելի է ասել, որ իր կարևորությամբ Շուշին այս ընթացքում հասկանալի պատճառներով թերևս զիջել է միայն Էջմիածնին: Շուշիում էր կենտրոնացած Արևելյան Հայաստանի կրթամշակութային օջախների՝ տպարանների, մամուլի, հեղինակավոր դպրոցների մի կարևոր մասը: Այս բերդաքաղաքը արևմտահայ ազգային-ազատագրական գաղափարական խմորումների, ազգային գործիչների պատրաստման դարբնոցի էր վերածվել: Այս ամենը տասնամյակների ընթացքում ազգային ոգեղենություն է հաղորդել Շուշիին:

Շուշին ունի ոչ միայն ոգեղեն, այլև ռազմավարական արժեք: Իր անմատչելի դիրքի շնորհիվ այն և՛ ամրոց է, և՛ շուրջբոլորը հսկելու դիտակետ: Միաժամանակ կարելի է պնդել նաև, որ Շուշիի ռազմավարական և ոգեղեն արժեքները փոխլրացնում են միմյանց: Ահա այս հանգամանքը մի կողմից մեզ մղել է Շուշին պահելու հայկական, իսկ մյուս կողմից թշնամուն դրդել է անընդհատ փորձել տիրել Շուշիին:

Շուշին հայկական պահելը մեր պատմական առաքելությունն է ոչ միայն հայկական ինքնության, ազգային անվտանգության, այլև տարածաշրջանային կայունության տեսանկյունից:

Շուշին հայկական պահելու հարցում մենք պետք է որ ունենանք դաշնակիցներ: Շուշիի հայկականությամբ պետք է շահագրգռված լինեն նաև պանթուրքիզմի մյուս երկու գլխավոր հակառակորդները՝ Իրանը և Ռուսաստանը: Եթե Շուշին դառնա թուրքական, ապա հենց Շուշիից է սկսվելու Իրանի մասնատումը: Եթե Շուշին մնա թուրքական, ապա Շուշիից է սկսվելու Ռուսաստանի հարավի և կենտրոնի թուրքաբնակ երկրամասերի անջատումը: Թերևս կարիք չկա մանրամասնելու այն պարզ ճշմարտությունը, որ պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման ճանապարհին այս պահին գլխավոր սեպը Հայաստանն է, իսկ Հայաստանի ամրությունը չափվում է Շուշիի հայկականությամբ: Եթե Շուշին հայկական է, թուրքերը չեն համարձակվի ոչ Իրանի



վրա հարձակվել, ոչ էլ Ռուսաստանի տարածք մտնել:

Պատահական չէ, որ մեր երկիր մտած օտար քոչվորը աչքը դրել է Շուշիի վրա: Պատահական չէ, որ 20-րդ դարի սկզբին թուրք-թաթարը ձգտում էր գրավելու Շուշին, կոտորում էր հատկապես Շուշիի հայ բնակչությանը: Պատահական չէ, որ Արցախյան առաջին պատերազմում Շուշին ուղղեց մեր մեջքը և կոտրեց ոսոխին: Պատահական չէ, որ թուրք-թաթարը նաև վերջին պատերազմում շեշտը դրեց Շուշիի վրա և, այն գրավելով, դադար տվեց:

Շուշիի հայկականության վերականգնումը կարող է և պետք է գոնե Արևելյան Հայաստանում վերազարթնումի, արդարության վերականգնման ոգեղեն սկիզբ դառնա:

Շուշին շուրջ 30 տարի մերն էր, բայց մենք չէինք շենացրել այն: Անարդարորեն: Շուշին պետք է վերադարձնել, արդարորեն շենացնել և այդ արդար շենացումը տարածել ամբողջ պետության վրա: Շուշին արդարության վերականգնման, արդարության հաստատման խորհրդանիշ պետք է լինի ոչ միայն պատմական, այլև սոցիալական, մշակութային վերելքի տեսանկյունից:

Արդար պետություն կառուցելու, կոռուպցիան վերացնելու, կրթությունը զարգացնելու մեր բաց թողած հնարավորությունը կարելի է համեմատել Շուշին չշենացնելու հետ:

Դեպի հզոր Հայաստան տանող ճանապարհը Շուշիով է անցնում: Միաժամանակ Հայաստանի կործանումը Շուշիի կործանմամբ է սկսվում: Մենք պարտավոր ենք կատարել մեր ընտրությունը. կամ Շուշին մերն է, և մենք առաջ ենք գնում, կամ Շուշին մերժում ենք ու կործանվում:

Շուշիին տիրելը հաղթության բերկրանք է, Շուշին կորցնելը՝ դավաճանված և պարտված, կոտրված զգալու դառնություն:

Պետք է վերահաստատել մեր համազգային նպատակը և հետամուտ լինել դրան: Հզոր պետություն ունենալու, Հայ դատը հետապնդելու բանալին այսօր Շուշիում է:

Հայոց ազգային ոգին վերարթնացնելու, Արևելյան Հայաստանում հզոր ազգային պետականություն ստեղծելու, հայոց շարունակականության հիմքերն ամրապնդելու մեր նոր պայքարը այլաբանորեն կարելի է անվանել ՇՈՒՇԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

ՀՅԴ երդումը յարատեւ պայքարի եւ անձնազոհութեան սահմանագիծ է

Աւօ Գաթրճեան

«Մի կէտ ճշմարիտ է. դաշնակցականը պէտք է ընդունի իր կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը և երդումով հաստատէ իր համամտութիւնն ու հնազանդելու յօժարութիւնը: Բայց այս պարագան ոչ թէ բռնութիւն է, այլ պայման, ինչպէս թատրոնի տոմսը յաճախորդի համար. առանց տոմսի թատրոն մտնողը չի կարող բռնութիւն համարել, երբ դռնապանը նրան ներս չառնէ»:

-Նիկոլ Աղբալեան

Բառարանային իմաստով երդում կը նշանակէ «ուխտ, խոստում կամ պատուոյ խօսք»: Բառային այս բացատրութիւնը ընդարձակելով՝ կը բնութագրենք նախ՝ երդման երկու ուղղութիւնները, ապա՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան համար երդման սրբութիւնն ու խորհուրդը:

Երդումը հանդիսաւոր հաւաստում մըն է որեւէ բանի՝ երդուողի համար սրբազան՝ նուիրական բան վկայակոչելով՝ յիշելով, բանաձև, որ կ'արտասանեն երդուելու ընթացքին, այլ խօսքով՝ որեւէ ծառայութեան անցնելու, որոշակի կարգավիճակ ստանալու ժամանակ տրուող պաշտօնական և հանդիսաւոր խոստում, հաւաստում:

Արդարև, երդումը մարդու կողմէ իր վկայութեան վաւերականութեան ապացուցման գործողութիւնն է՝ խօսքով արտայայտուած, վկայակոչումով երրորդ իրողութեան մը կամ անձի, անձերու և կամ գերբնական անձի, ուժի: Երդումը կ'ըսուի ոեւէ մարդու կամ մարդոց ներկայութեան, որոնց առջև բերուած վկայութեան հաւաստիացման անհրաժեշտութիւնը կայ:

Երդումը երկու ուղղութիւն ունի. մէկը՝ դէպի անցեալ, միւսը՝ դէպի ապագայ: Դէպի ապագայ ուղղուած երդումը կը տարբերի անցեալի նկատառումով տրուած երդումէն, որովհետև եթէ վերջինս արդէն կատարուած իրողութեան մասին վկայութեան հաւաստիացման համար կը տրուի, ապագայի դիտարկումով երդումը հիմնականին մէջ խոստում է կամ ուխտ: Պետութեան նախագահներու, բժիշկներու, զինուորականներու երդումները կը վերաբերին երդման՝ դէպի ապագայ ուղղուած ձևին, որով այդ երդումները կը վերածուին խոստումի: Օրինակ՝ պետութեան ղեկավարները, ստանձնելով իրենց պարտականութիւնները, երդուելով կը խոստանան, որ իրենց ծառայութիւնը ժողովուրդին և պետութեան լաւագոյնս պիտի իրականացնեն: Հոմանիշներու բառարանին մէջ «երդում» բառի դիմաց կը նշուին «խոստում» և «ուխտ» բառերը: Այդ ևս ցոյց կու տայ, որ համապատասխան հանգամանքներուն մէջ խոստում և ուխտ կը կատարուի՝ իբրև հակադրութիւն անցեալին վերաբերող երդումի, զոր արդէն կատարուածի առնչութեամբ ազնուութեան, անկեղծութեան կասկածներու փարատման փորձ է:

Երվանդ Փամբուկյանը երդման կնքահայր

ՀՅԴ շարքերը անդամագրուիլը բաւականին դժուար է: Տուեալ անձի տարածքին մէջ ապրող դաշնակցականները նախ պէտք է կարծիք ներկայացնեն, հարցնեն բոլոր ճանչցողներուն: Այնպէս չէ, որ ով դիմեց, կուսակցական մարմինը ներգրաւէ զայն կուսակցութեան շարքերը:

ՀՅԴ շարքերը մուտք գործելու պատրաստուող նորագիրը կազմի մէջ ընդունուելէ առաջ իր իրաւացիութիւնը, նուիրուածութիւնն ու հաւատարմութիւնը ապացուցելու համար ՀՅԴ դրօշին, ծրագրին, կանոնագրին և զէնքին վրայ հանդիսաւորապէս կ'ընէ հետևեալ ուխտը. «Կ'երդնում պատուոյս և հայրենիքիս վրայ միշտ հաւատարիմ մնալ ՀՅ Դաշնակցութեան ծրագրին, կանոնագրին ու որոշումներուն և բոլոր ուժերովս, իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաև կեանքիս գնով, ծառայել Հայաստանի ու հայութեան ազատագրութեան դատին»: Այս խորհրդաւոր արարողութիւնը գլխաւորելու ծանր պարտականութիւնը կը վստահուի

դաշնակցական շարքայինի մը, որ կոչուած է ըլլալու կնքահայր: Օրուան կնքահայրը նախքան երդման բանաձևը արտասանելը վերջին անգամ հարց կու տայ թեկնածուներուն, թէ վստա՞հ են իրենց տուած որոշումին և իսկապէ՞ս կ'ուզեն մաս կազմել նուիրեալներու սոյն բանակին: ՀՅԴ վերոնշեալ ուխտը՝ նորագիրներու արտասանութեամբ և «կ'երդնում» արտայայտութեամբ, արդէն դաշնակցական շարքերը մուտք գործած ըլլալ կնշանակէ:

Դաշնակցութեան երդումը սահմանագիծ մըն է, որմէ յետոյ կը սկսի կեանքի նոր փուլը կուսակցութեան ընտանիքի մէջ. գալով կուսակցութիւն, անդամագրուելով այս հսկայական հայկական ընտանիքին՝ անոնք կը դառնան այդ ընտանիքի լիարժէք անդամը և մեծ պատասխանատուութիւն ու պարտականութիւններ կը ստանձնեն:

Դաշնակցութեան ուխտը դէպի ապագայ ուղղուած երդում մըն է, որ կը կիրարկուի կուսակցութեան հիմնադրութենէն սկսեալ բոլոր այն երկիրներուն մէջ, ուր կուսակցական կառոյց կայ: Դաշնակցութեան երդման բովանդակութիւնը լիովին կ'արտացոլայ կուսակցութեան ու պատմաքաղաքական տուեալ ժամանակաշրջանի էութիւնը, ժողովուրդի և զինուորական ուժի աւանդոյթներն ու սովորոյթները, ազգային ու բարոյահոգեբանական առանձնայատկութիւնները, ինչպէս նաև կը կրէ յեղափոխական-մարտական իւրայատկութիւններու կնիքը:

Անմիջապէս պէտք է աւելցնել, որ Դաշնակցութեան երդումը խորքային իմաստով նոյնն է ֆետայիներու տուած երդումին. «Երդւում եմ իմ պատուի և ազգութեան վրայ իմ բոլոր ուժով, եթէ հարկ լինի՝ նաև իմ արիւնով, ծառայել Հայաստանի ազատագրութեան դատին՝ ընդդէմ բռնակալութեան: Այսուհետ իմ բարձը Հայաստանի լեռները կը լինեն, և իմ ամենամեծ բաղձանքը՝ հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանամ հրեղէն գնդակի համբոյրին»:

Նախ պէտք է հաստատել, որ դաշնակցականի երդումը նուիրական է, վաւերացուած չէ գիրով (երդումնագիր), կնիքով ու ստորագրութեամբ: Անոր բերնէն ելած խոստումը բաւարար է:

Դաշնակցականի երդումը ոչ միայն հայրենիքը պաշտպանելու, այլև կուսակցութեան գրուած ու չգրուած օրէնքներն ու աւանդոյթները սրբութեամբ պահպանելու, զարգացնելու, յեղափոխական-մարտական անունն ու պատիւը բարձր պահելու և երբէք չարատաւորելու երդում է: ՀՅԴ շարքայինի երդման բովանդակութիւնը ուղղակիօրէն փոխկապակցուած է անորմով երդուող կուսակցութեան դաւանած արժեհամակարգին:

130 տարիներու ընթացքին Երկիրի, Արցախի և Հայաստանի թէ Սփիւռքի տարբեր քաղաքներուն մէջ իրարայաջորդ սերունդներ երդուեցին՝ մի՛շտ մեր բռնագրաւուած հողերուն և իրաւունքներուն վերադարձը ունենալով իբրև կիզակէտ, մի՛շտ մեզի պարտադրուած Սփիւռքի կարիքներուն հասնիլը ունենալով իբրև մտահոգութիւններու կեդրոն, ուր նահանջ արտօնելը նկատուած է անսակարկելի և անշրջանցելի կարմիր գիծ: Այլ խօսքով՝ դաշնակցականները, մնալով իրենց երդումին ու խոստումին տէրը, միշտ ալ եղան պատնէշի վրայ, ընդառաջեցին ամէն տեսակ կոչի, որուն նպատակը սրբազան արժէքներու պահպանումն է, հայութեան արդար դատն է, ամբողջ ազգին ապահովութիւնն ու ազատութիւնն է:

Ահա այս է դաշնակցականի թելը, այս է մեր տեսակը, այս է մեր տեսլականը, զոր իրենց կեանքին գնով յաջորդաբար փոխանցեցին մեզի նախորդողները, և սերնդափոխութեան ընթացքին ջամբուած է նաև նորագիրներուն:

Պատմութիւնը վկայած է, որ Դաշնակցութիւնը բոլոր ժամանակներուն մէջ եղած է ամենաարդիականը և ամենաժամանակակիցը:

Վերջապէս, ամէն մէկ դաշնակցական շարքային քաջ գիտէ, որ ոչ մէկ ակնկալիք ունի և պէտք է ունենայ Դաշնակցութենէն: Ան կը գիտակցի, թէ ինչ պիտի տայ մեր ազգին և հայրենիքին՝ Դաշնակցութեան ընդմէջէն, քանի որ կուսակցութիւնը միջոց է՝ ծառայելու ազգին: Կը գիտակցին ու պէտք է գիտակցին բոլորը, որ պիտի ունենան տաք օրեր ու պաղ, յաջող գործեր ու ձախող, պիտի ապրին ու կ'ապրին հիասթափութիւններ ու վերելքներ, սակայն անոնց դաշնակցականի երդումը կը մնայ հաստատ ու անսասան:

Պատմական հիշողություններ, կեղծիքներ, գնահատականներ ու դասեր (Մոսկվայի 1921 թ. մարտի 16 (18)-ի ռուս-թուրքական պայմանագրի 100-րդ տարելիցի առիթով)

Արարատ Մ. Հակոբյան
Պատմական գիտությունների դոկտոր

Լրանում է Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրում անդառնալի ծանր հետք թողած Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի, իրականում մարտի 18-ի ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» անարդար ու ապօրինի պայմանագրի ուղիղ մեկ դարը: Այն կնքել են այն ժամանակներում ռազմաքաղաքական համընկնող շահերով ու հեռագնա սին կարգախոսներով իրար հետ դաշն կազմած քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը: Պատմական իրողություն, որ միջազգայնորեն չճանաչված երկու երկրների կառավարություններ պայմանագիր են կնքել և որոշել են մի երրորդ երկրի՝ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագրով[1] անկախ հռչակված Հայաստանի՝ կենսական նշանակության տարածքային-սահմանային հարցերը՝ առանց վերջինիս գիտության ու մասնակցության: Հենց այդ պայմանագրով արդեն խորհրդայնացած Հայաստանը փաստորեն պարփակվեց ընդամենը 30 հազ. քառ. կմ տարածքի սահմաններում: Եվ որպեսզի այդ պայմանագրով սահմանված վճիռն օրինականացվեր Հայաստանի համար, մի քանի ամիս անց՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում ՌՍԴԽՀ կառավարության հանձնարարականով կնքվեց փաստորեն Մոսկվայի պայմանագրի կրկնօրինակը հանդիսացող մի պայմանագիր՝ արդեն Հայաստանի պատվիրակության (ղեկավար՝ Ա. Մռավյան) մասնակցությամբ: Արդեն 100 երկարուձիգ տարիներ են, որ պահպանվում է այդ անարդար ու ապօրինի, ուժով ու սպառնալիքով Հայաստանին ու հայ ժողովրդին պարտադրված պայմանագիրը:

Միջազգային պայմանագրային իրավունքին ու նորմերին համապատասխանության առումով Մոսկվայի պայմանագրի աղաղակող անօրինականության դրսևորումներից մեկն այն է, որ միմյանց հետ պայմանագիր են կնքել երկու երկրների՝ քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի չճանաչված կառավարություններ և որոշել են մի երրորդ երկրի, տվյալ դեպքում՝ Հայաստանի տարածքային-սահմանային հարցերը՝ առանց նրա ներկայացուցչի գիտության ու մասնակցության: Ընդ որում, և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան սահմանների վերաբերյալ պայմանագիր են կնքում՝ իրականում իրար հետ չունենալով տարածքային-սահմանային և ոչ մի շփում: Բանն այն է, որ Անդրկովկասի երեք հանրապետությունները պայմանագրի ստորագրման պահին չեն համարվել Խորհրդային Միության տարածք, որովհետև 1921 թ. մարտ ամսին դեռ ո՛չ Անդրդաշնությունը կար և ո՛չ էլ, առավել ևս, ԽՍՀՄ-ը:

Եվ այդ իմաստով Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը՝ իբրև նախադեպ ու նախատիպ, կարելի է նմանեցնել ու նույնացնել Մոսկվայի 1939 թ. օգոստոս-սեպտեմբերի Արևելյան Եվրոպայի երկրների տարածքները միմյանց միջև բաժանող խորհրդա-գերմանական (Մոլոտով-Ռիբենտրոպ) գաղտնի արձանագրության հետ:

Հայաստանի ու հայ ժողովրդի համար կողոպտիչ մոսկովյան ռուս-թուրքական պայմանագրի հիմքերը դրվել էին դեռևս 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում գումարված խորհրդա-թուրքական (Գ. Չիչերին-Բ. Սամի բեյ) 1-ին խորհրդաժողովում, որին ի հետևանք նախաստորագրվել էր օգոստոսի 24-ի ռուս-թուրքական բարեկամության պայմանագիրը: Դրանով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր 1920 թ. հունվարի 28-ի թուրքական, այսպես կոչված, «Ազգային ուխտ»-ում նշված տարածքային պահանջները, այն է՝ Արևմտյան Հայաստանի նահանգների և Կարսի մարզի՝ Թուրքիային միացումը: Դա նշանակում է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը առաջիններից մեկը դեմ դուրս եկավ Սևրի պայմանագրին և այդպես իր պաշտպանության տակ վերցրեց Առաջին աշխարհամարտում ծանր պարտություն կրած Թուրքիային: Ավելին՝ Ռուսաստանի թողտվությամբ Մոսկվայի պայմանագրով գերակատարվեցին թուրքական «Ազգային ուխտ»-ի տարածքային պահանջները: Այդ պահանջներից դուրս՝ Սուրմալուի գավառը՝ հայ ժողովրդի «հավետ գոյության խորհուրդ»[2]-ը՝ Մեծ ու Փոքր Մասիսներով (3450 քառ. կմ), որը երբեք չէր եղել Օսմանյան Թուրքիայի կազմում, բռնակցվեց Թուրքիային, և դրանով հայ-թուրքական պետական սահմանագիծը դարձավ Ախուրյան և Արաքս գետերի հունը, ինչպես որ է

առ այսօր: Մայր Արաքսի այն ափը, որտեղ ընկած է մեր բուն հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, մեզ համար դարձավ տեսիլք ու երազ, իսկ Մասիսն այդպես էլ մնաց «անհաս փառքի ճամփա»[3]: Դա դեռ բավական չէ, Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով Թուրքիայի փոքր եղբայր Ադրբեջանին նվիրաբերվեց Նախիջևանի երկրամասը (5500 քառ. կմ)՝ պայմանով, որ այն չզիջվի մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին[4]:

Որպես պատմական դառը հիշողություն արձանագրենք, որ դարձյալ այդ նույն տարում՝ 1921 թ. հուլիսի 5-ին, առանց քվեարկության, ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը (4160 քառ. կմ) մարզային լայն ինքնավարության կարգավիճակով տրվեց Ադրբեջանին[5]: Արցախահայությունը համայն հայ ժողովրդի հետ միասին տասնամյակներ շարունակ պայքարեց իր արդար իրավունքների վերականգնման համար: Որպես արդյունք՝ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետությունը, սակայն վերջին ժամանակների պատերազմական ձախող իրադարձությունները կարծես հարցականի տակ են դնում Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը: Հայաստանի ներկայիս վարչակարգի արտաքին սխալ և հանցավոր քաղաքականության հետևանքով, մեր կարծիքով, Ռուսաստանի լուռ համաձայնությամբ թուրք-ադրբեջանական (Էրդողան-Ալիև) տանդեմը Արցախի դեմ սանձազերծեց պատերազմ: Ինչպես 100 տարի առաջ՝ 1920 թ. թուրք-հայկական, այնպես էլ արցախյան այս պատերազմի վերջում Ռուսաստանը միջամտեց, և երկու դեպքում էլ կայացվեցին, մեղմ ասած, ոչ հայանպաստ որոշումներ:

Կարելի է եզրակացնել, որ Մոսկվայի պայմանագրով ու Կովկասյան բյուրոյի որոշմամբ Հայաստանից ու հայ ժողովրդից խլվեց 30360 քառ. կմ տարածք, որն ավելի մեծ է, քան ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը՝ 29800 քառ. կմ:

Խորհրդային ժամանակներից մեր պատմագրության մեջ աղավաղված ու կեղծված այլ մոտեցում-տեսակետ-գնահատականների կողքին տարածում է գտել մի թյուր տեսակետ, թե իբր հայ ժողովրդի համար կողոպտիչ Մոսկվայի պայմանագիրը հնարավոր եղավ այն պատճառով, որ դրանից առաջ՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, դաշնակցական կառավարությունը թուրքերի հետ ստորագրել էր Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը, որով Թուրքիային էր հանձնվում Արևելյան Հայաստանի տարածքների շուրջ կեսը, ուստի Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը այլևս չէր կարող Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային հանձնվելիք տարածքների հարցը վերանայել: Ավելին՝ խորհրդային և նույնիսկ հետխորհրդային շրջանի մի շարք հեղինակների մոտ պահպանվում է այն կարծրատիպը, թե իբր Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար քառ. կմ տարածք, որը հավասարվում էր Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքին[6]: Սա չի համապատասխանում իրականությանը: Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանի տեղանշումները համեմատելով կարելի է համոզվել, որ տարածքային-սահմանային տեսանկյունից Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չի զիջել Մոսկվայի, իսկ ավելի ուշ՝ դրա կրկնօրինակ Կարսի պայմանագրին: Ավելին՝ ՀՀ տարածքը մի քանի հարյուր քառ. կմ-ով ավելին էր Մոսկվայի, ուստի և դրա կրկնօրինակ Կարսի պայմանագրերով նախատեսված տարածքից: Ճանաչված պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանի քարտեզագիտական դիտարկումներով ու կատարած մոտավոր հաշվումներով՝ Մոսկվայի պայմանագրով, Ալեքսանդրապոլի Մոսկվայի պայմանագրով, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ, Թուրքիային է անցել 250 քառ. կմ տարածք[7]: Եթե նկատի ունենանք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին էր անցնում Կարսի մարզի հյուսիսարևելյան շրջանից 600 քառ. կմ տարածք, ապա Մոսկվայի պայմանագրով շուրջ 250 քառ. կմ եռանկյունի մի հողատարածք զիջվել է Թուրքիային. դա նշանակում է՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ Մոսկվայի պայմանագրով Կարսի մարզից Հայաստանին թողնվել է ընդամենը 350 քառ. կմ, որն էլ կազմում է Աղբաբայի (ներկայումս՝ Ամասիա) ենթաշրջանը[8]:

Մյուս պատմական կեղծիքն այն է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրած Հայաստանի պատվիրակության (ղեկավար՝ Ալ. Խատիսյան) ստորագրությունն ի սկզբանե իրավական ուժ չի ունեցել, որովհետև պայմանագրի ստորագրման պահին նրան ներկայացնող կառավարությունն արդեն հրաժարական էր տվել, բացի այդ՝ պայմանագիրը չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի խորհրդարաններում, ուստի այն անվավեր փաստաթուղթ էր և չէր կարող իրավական հիմք դառնալ Մոսկվայի պայմանագրի կնքման համար: Այն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը միջազգային-իրավական ուժ չունեցող փաստաթուղթ

1921թ. մարտի 16 (18) պայմանագրի կնքման ժամանակ

է, Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը հաղորդել է Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին (Ջեբեսոյ) 1921 թ. ապրիլի 8-ին հղած նոտայում, որում թուրք դեսպանին հիշեցնում էր, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն ժամանակ, երբ արդեն հռչակված էր Հայաստանի խորհրդային կառավարությունը, և այն պայմանագրով նախատեսված մեկ ամիս ժամկետում չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի օրենսդիր մարմինների կողմից[9]: Ի դեպ, Մոսկվայի ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում բնավ չի հիշատակվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրին առնչվող 100-ամյա կեղծիքներից մյուսն այն է, որ իբր 1921 թ. Փետրվարյան ապստամբության առնչությամբ Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) նախագահ Ս. Վրացյանի՝ մարտի 12-ին (որոշ տվյալներով՝ մարտի 14-ին) Մոսկվա ուղարկած հեռագիրն էր պատճառը, որ Խորհրդային Հայաստանի պատվիրակությանը (ղեկավար՝ Ալ. Բեկզադյան) թույլ չտրվեց մասնակցել ռուս-թուրքական խորհրդաժողովին: Այնինչ իրականում Հայաստանի պատվիրակությանը թույլ չի տրվել մասնակցել կոնֆերանսին մինչև փետրվարի 26-ը, երբ այն կսկսվեր, այնպես որ Ս. Վրացյանի՝ հետին թվով ռադիոհեռագիրը չէր կարող ազդել կոնֆերանսին Հայաստանի պատվիրակության մասնակցել-չմասնակցելու հանգամանքի վրա: Ավելին՝ Ս. Վրացյանի կառավարությունն անգամ տեղյակ չի եղել, որ Հայաստանի պատվիրակությանն արգելված է եղել մասնակցել խորհրդաժողովի աշխատանքներին, այլապես ավելորդ կլիներ նման հեռագիր Մոսկվա ուղարկելը: Եթե անգամ հայկական պատվիրակությունը մասնակցեր խորհրդաժողովին, առանձնապես որևէ էական արդյունք չէր արձանագրվի:

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի շուրջ եղած կեղծիք-ֆեյքերից մեկն էլ այն է, որ կեղծվել է անգամ դրա ստորագրման ստույգ օրը. իրականում ստորագրման օրը՝ մարտի 18-ը, թվագրվել է մարտի 16-ով՝ ցույց տալու համար, թե իբր այն ստորագրվել է Լոնդոնի անգլո-ռուսական (Ռ. Հոռն-Լ. Կրասին)

Վագոնը, որտեղ 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքվել է Կարսի պայմանագիրը

առևտրա-տնտեսական համաձայնագրից առաջ կամ գոնե նույն օրը՝ մարտի 16-ին, և իբր թե Մոսկվան տեղյակ չի եղել լոնդոնյան համաձայնագրի քաղաքական բովանդակությանը: Բանն այն է, որ Լոնդոնում անգլո-ռուսական և Մոսկվայում ռուս-թուրքական զուգահեռաբար ընթացող բանակցություններում անգլիական կողմը ռուսականից պահանջել է, որ առևտրա-տնտեսական պայմանագիր կնքելու դիմաց, իբրև հայկական հարցի մասնակի լուծում, Ռուսաստանը Թուրքիայից պահանջի Հայաստանին վերադարձնել գոնե Կարսն ու Արդահանը[10]: Խորհրդային կողմը, ցանկություն չունենալով նման պահանջ դնելու թուրքերի առաջ, դիմել է մոլորեցնող կեղծիքի. պայմանագրի տեքստում նշվել է մարտի 16-ը, որը Լոնդոնի առևտրա-տնտեսական համաձայնագրի ստորագրման օրն է: Դրանով փորձ է արվել Լոնդոնին հասկացնելու, որ իբր Մոսկվան տեղյակ չի եղել, որ Կարսն ու Արդահանը Հայաստանին վերադարձնելու մասին Անգլիայի կողմից նման պահանջ-առաջարկ է ներկայացվել: Այն, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը մինչև մարտի 18-ը ստորագրված չի եղել, վկայում է Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը նույն օրը Բաքու՝ Միք. Աթաբեկյանին ուղղած նամակում[11]:

Ժամանակակից իրողությունների լույսի տակ սին հույսեր են լրատվամիջոցներով ու համացանցով երբեմն տարածվող պարզունակ այն մտամարզանքները, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի 100 տարին լրանալուն պես այն չեղյալ կհամարվի, կամ Նախիջևանի հարցը հայանպաստ լուծում կստանա և այլն: Հայ հանրության մի մասն էլ հույս է տածում, որ 100 տարի առաջ Հայկական հարցում բոլշևիկների թույլ տված հայկական հողերի՝ թուրքերին վաճառքի սխալը կուղղի ներկայիս ՌԴ կառավարությունը: Սա ևս քաղաքական պարզունակ մոլորություն է: Պատմության հազարամյակների փորձն ու դասերը սովորեցնում են, որ սեփական ուժերին ապավինելով է միայն հնարավոր լուծել ազգի, երկրի ու պետության առաջ ծառացած արմատական խնդիրները: Պատմության ընթացքում հայ ժողովուրդը շարունակ տարածքներ է կորցրել: Միայն Մոսկվայի պայմանագրով Հայաստանը կորցրեց իր փաստական տարածքների կեսից ավելին: Իսկ դրանք հետ բերելու

համար պետք է ապավինել միայն սեփական ուժերին, կարողություններին ու ռեսուրսներին: Մնացյալը պատրանք է: Դա է հերթական անգամ հաստատում Արցախյան երկրորդ պատերազմի դառը փորձը:

Դիտարկելով Հայաստանի ու հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային հարցերը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում՝ դժվար չէ նկատել, որ հայկական տարածքները անթաքույց զոհաբերվել են նրանց ծավալապաշտական շահերին: Եթե խորհրդայինը դրսևորվել է քիչ թե շատ քողարկված կերպով, ապա քեմալականը բացահայտորեն հակահայկական է:

Հանրագումարի բերելով Մոսկվայի պայմանագրի հետևանքները Հայաստանի ու հայ ժողովրդի համար՝ կարելի է ներկայացնել հետևյալ թվական տվյալները: Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիային անցան Կարսի մարզը՝ 17250 քառ. կմ, և Սուրմալուի գավառը՝ 3450 քառ. կմ, ընդամենը՝ 20700 քառ. կմ բուն հայկական տարածք: Բացի այդ՝ Թուրքիայի պահանջով Նախիջևանի մարզը (շուրջ 5500 քառ. կմ) հանձնվեց նրա փոքր եղբայր Ադրբեջանին: Այս համատեքստում, եթե հաշվի առնենք, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը (4160 քառ. կմ) ևս նվիրաբերվեց Ադրբեջանին, ապա 1921 թ. հակահայ այդ գործարքներով Հայաստանից ու հայ ժողովրդից խլվեց և Թուրքիային ու Ադրբեջանին միացվեց 20700 + 5500 + 4160 = 30360 քառ. կմ տարածք, որն իրականում ավելի մեծ է, քան Խորհրդային Հայաստանի (ՀՍԽՀ) ու նրա իրավահաջորդ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը (29.8 հազ. քառ. կմ): Ահա սա է 100-ամյա դառը ճշմարտությունը Մոսկվայի պայմանագրի մասին: Հենց այդ պայմանագրով արդեն խորհրդայնացած Հայաստանը փաստորեն պարփակվեց ընդամենը 30 հազ. քառ. կմ տարածքի սահմաններում:

Եթե խնդիրը դիտարկենք միջազգային իրավունքի տեսանկյունից, ապա ակնհայտ կդառնա, որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի կոպիտ խախտումներով: Եվ որպեսզի այդ պայմանագրով սահմանված վճիռը քիչ թե շատ իրավական հիմքի վրա դրվի, մի քանի ամիս անց՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում ՌՍԴԽՀ կառավարության հանձնարարականով (պատվիրակ՝ Յան Գանեցկի) կնքվեց փաստորեն Մոսկվայի պայմանագրի կրկնօրինակը հանդիսացող մի պայմանագիր՝ արդեն Հայաստանի պատվիրակության մասնակցությամբ: Վերջինիս անդրադարձ կլինի ս. թ. աշնանը, երբ կլրանա այդ դառը իրադարձության մեկ դարը: Արդեն 100 երկարուձիգ տարիներ են, որ հայ ժողովրդին ցավ է պատճառում այդ անարդար ու ապօրինի պայմանագիրը:

Եվ վերջապես, Մոսկվայի ռուս-թուրքական անարդար ու ապօրինի պայմանագրի կնքման 100-ամյակի առիթով նշենք, որ, մեր կարծիքով, Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը պետք է հանդես գան բողոք-հայտարարություններով՝ ուղղված առաջին հերթին պայմանագիրը ստորագրած պետություններին, ՄԱԿ-ին և միջազգային հանրությանը: Եթե անգամ հնարավոր չլինի պետական մակարդակով հրապարակ հանել մեկ դար առաջ կնքված այդ հակահայ պայմանագիրը և կրկին վերանայման հարց բարձրացնել, այդուհանդերձ, այն երբեք չի կարող ջնջվել հայ ժողովրդի պատմական հիշողությունից:

Այսպիսով՝ Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրում վճռորոշ դեր խաղացած Մոսկվայի 1921 թ. մարտի 16 (18)-ի ռուս-թուրքական պայմանագրի 100-ամյակի առիթով ներկայումս Հայկական հարցի առանցքը կազմող Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման ու փոխհատուցման ուղղությամբ տարվող գործընթացների հետ միասին Հայաստանն ու համայն հայությունն ունեն բոլոր՝ պատմաքաղաքական, իրավական ու բարոյական հիմքերը՝ օրակարգ մտցնելու Մոսկվայի և դրա կրկնօրինակը հանդիսացող Կարսի պայմանագրերի վերանայման հարցը: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշներ, Եր., 2000, էջ 383-384:
2- Չարենց Ե., Երկերի ժողովածու, Եր., 1954, էջ 490:
3- Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., 1984, էջ 289:
4- Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 12:
5- Տես Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 153:
6- Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 111, Արզումանյան Մ. Վ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 349, Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Եր., 1999, էջ 376 և այլն:
7- Տես Հարությունյան Բ., Երկու ճշգրտում, Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Եր., 2001, էջ 78:
8- Այդ մասին քարտեզագրական սահմանագծման պատկերներով տես Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Եր., 2008, էջ 210 -215:
8- Տես Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 350:
9- Տես Геноцид армян (документы и комментарий), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, էջ 644, т. 2, ч. 1, М., 2003, էջ 467, т. 2, ч. 2, М., 2005, էջ 428:
10- Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 2:

1918 թ.՝ հանուն ազգային նպատակների իրականացման, 2018 թ.՝ ընդդեմ ազգային նպատակների (Արամ Մանուկյանի ծննդյան 142-րդ տարեդարձի առթիվ)

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Մարտի 19-ը հայոց նորագույն պետականության հիմնադիր, հայ ժողովրդի սիրելի զավակ Արամ Մանուկյանի ծննդյան օրն է (ծննդյան անվամբ՝ Սարգիս Հարությունի Հովհաննիսյան – 1879-1919 թթ.)[1]:

Օգտվելով առիթից՝ կներկայացնենք Արամ Մանուկյանի բովանդակալից, հայրենաշեն և արգասաբեր գործունեության մի փոքրիկ, բայց մեր օրերի համար խիստ արդիական ժամանակահատված՝ արձանագրելու, որ կազմակերպված, նպատակամղված ու սրտացավ աշխատանքի դեպքում մեր օրերում էլ հնարավոր էր կանխել հայ ժողովրդին պատուհասած ողբերգությունը:

1918 թ. փետրվար-մարտ ամիսներին թուրքական 30000-անոց բանակը, հաղթահարելով նոր կազմավորվող հայկական փոքրաթիվ զորամասերի համառ դիմադրությունը, ավարտին էր հասցնում Արևմտյան Հայաստանի նվաճումը՝ անթաքույց նպատակ ունենալով ներխուժելու նաև Արևելյան Հայաստան: Ակնհայտ էր, որ հայության գլխին կախվում էր վերջնական ոչնչացման վտանգը: Թուրքիան կարծես մոտ էր իր վաղեմի պետական ծրագրի իրականացմանը:

Պատմական այդ ծանր օրերին հայ ժողովուրդն իր փրկությունը տեսավ իշխանության կենտրոնացման մեջ և 1918 թ. մարտի 24-ին զորքի ու Երևանի Հայոց ազգային խորհրդի հետ Արամ Մանուկյանին[2] ընտրեց Երևանի նահանգի «դիկտատոր»՝ նրան օժտելով անսահմանափակ իշխանությամբ: Արձանագրենք մեր օրերի համար անհավանական թվացող մի իրողություն. «դիկտատոր» ընտրված Արամ Մանուկյանը կենցաղավարության մեջ մնաց զուսպ և ոչնչով չտարբերվեց ժողովրդից, չդարձավ բռնապետ, գործիչների ու հասարակության հետ հարաբերություններում դրսևորեց հարգալից կեցվածք և ստացած անսահմանափակ իշխանությունն ամբողջությամբ ծառայեցրեց հօգուտ ազգային խնդիրների լուծման: Նա ամեն ինչ արեց հասարակության համախմբման, պետականության բաղադրիչների ձևավորման և թշնամուն կազմակերպված հակահարված հասցնելու համար: Այդ առումով հատկանշական է Արամի՝ 1918 թ. մարտի 28-ին ժողովրդին ուղղած կոչը, որը, ըստ էության, նրա գլխավորությամբ Երևանի իշխանության մարմինների ձեռնարկելիք քայլերի ծրագիր էր. «Պատերազմական գործողությունների դժբախտ ընթացքը ցնցեց ամբողջ հայությունը, նամանավանդ՝ հայութեան սիրտը կազմող Երևանը: Ստեղծված կացութեան տպաւորութիւնների տակ

Երևանի հայ ժողովուրդը, զինուորականութիւնը, հրամանատարութիւնն ու սպայութիւնը հարկ համարեցլ[ին] արտակարգ լիազօրութիւններ տալ ինձ՝ ճակատն ուժեղացնելու, ներքին անիշխանութիւնները սանձելու և առհասարակ մեր ներքին ու արտաքին կռիւներին վճռական ու կտրուկ միջոցներով արագ ընթացք տալու:

Ստանձնելով այդ պատասխանատու պարտականութիւնը ճգնաժամային այս ծանր օրերին՝ ես հրապարակով յայտարարում եմ բարձրաձայն, որ գոյութիւն ունեցող բոլոր մարմինները - Ազգային խորհուրդ, ճակատի բարձրագոյն հրամանատարութիւն, պետական հիմնարկութիւններկան ու մնալու են իրենց դերի ու դիրքի մէջ:

Իմ անելիքը պէտք է լինի մի կողմից արագացնել աշխատանքը և միւս կողմից ամեն մի մարմնի և գործող ոյժերի դնել իր վայելող դերի մէջ և հաստատել զինուորական օրինակելի կարգապահութիւն:

Այդ մտահոգութեամբ ստանձնելով իմ նոր պաշտօնը՝ հրահանգում եմ հետևեալը.

1. Բոլոր գոյութիւն ունեցող մարմինները - զինուորական թէ քաղաքացիական- պէտք է շարունակեն իրենց նախկին աշխատանքները աւելի եռանդով և մեծ զոհողութիւններով:

2. Թիկունքում գործող մարմինների մէջ գտնուող զինուորական ոյժերի՝ ճակատ մեկնելը պէտք է կատարի որոշ կարգով և որոշ ժամանակամիջոցում, որպէսզի մի նոր գործ շինելու ժամանակ միւսը՝ հինը, չքանդի:

3. Հայ ժողովրդի բոլոր սրտացաւ ու գիտակից տարրերին հրահանգում եմ ընդառաջ գնալ թիկունքի և նամանաւանդ ճակատի կարևոր աշխատանքներին, որպէսզի այդ աշխատանքները կատարեն արագ ու կանոնաւոր:

4. Մի անգամ վստահելով ինձ և գործի ղեկավար ոյժերին՝ հասարակութիւնը և անհատները պէտք

է խորին հաւատ ընծայեն մեզ, որպէսզի մենք մեր դժուարին աշխատանքները ազատ կատարենք:

5. Պէտք է վերջ տալ աննպատակ քննադատութիւններին, որոշ մարդկանց շուրջը կատարուող ասէ-կոսէներին:

6. Հասարակութեան իւրաքանչիւր անհատ անկեղծօրէն պէտք է լայն օժանդակութիւն ցոյց տայ դասալիքներին ձերբակալելու և պատժելու գործին:

7. Կտրականապէս հրահանգում եմ խուսափել ազգամիջեան անմիտ ընդհարումներից: Իւրաքանչիւր մարդ ամեն կերպ պէտք է նպաստի թուրք հարևանական յարաբերութիւնները անխախտ պահելուն:

8. Զմիջամտել ոչ զինուորական և ոչ էլ կառավարական գործերին:

9. Ինձ և իմ գործակիցներին չզբաղեցնել մանրմունր խնդիրներով:

10. Ուժեղացնել քաղաքի թաղային պահպանութիւնը:

11. Վերջ տալ զանազան ֆանտաստիկ ծրագրերին:

12. Հսկել հասարակական ընդհանուր կարգապահութեան ու ապահովութեան վրայ, չհաւատալ զանազան սուտ ու սխալ լուրերի, որոնք առասպելական գունաւորումներով տարածւում են հասարակական լայն խաւերում ու լքում առաջ բերում: Վստահեցէք Ազգային խորհրդի հաղորդած լուրերին, որոնք ստացւում են ճիշտ աղբիւրից:

Հայրենակիցներ!

Հասարակական շարժման յաջողութիւնը գերազանցապէս կախուած է զոհաբերութիւնից և կարգապահութիւնից: Զոհեցէք ձեր անհատականը, ձեր ոյժերի և ստացուածքի մաքսիմումը, քանի դեռ հնարաւորութիւն կայ փրկելու ընդհանուրը, այլապէս դուք և ձեր կարողութիւնը, ձեր կայքերն ու դրամը, ձեր կանայք ու երեխաները կտրորուեն ներս խուժող թշնամու ձիերի սմբակների տակ (ընդգծումը մերն է – Ա.Ա.):

Զոհաբերութիւն և կարգապահութիւն, - սրանք կարդինալ հարցեր են, որոնցից կախուած է մեր ժողովրդի փրկութիւնը: Խորին հաւատ, անվերապահ վստահութիւն և ղեկավարների կարգադրութիւնները կատարելու պատրաստակամութիւն՝ ահա թէ ինչ պէտք է լինի հայ ժողովրդին ղեկավարող սկզբունքը: Այլապէս մեզանում էլ տեղի կունենայ այն, ինչ որ տեղի ունեցաւ ու հիմնովին քայքայեց մեծ Ռուսաստանը:

Հայ զինուորներ, նամանաւանդ հայ սպաներ, վերջին խօսքս ձեզ եմ ուղղում. տոգորուեցէք վայրկեանի գերագոյն ոգով: Հայրենիքի փրկութիւնը ձեր ձեռքին է: Դուք, սպաներ ու զինուորներ, կամ պէտք է մեր սիրուն հայրենիքի փրկիչները լինէք, կամ նրա գերեզմանափորները (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Գործի դիմենք, վերջ տանք սին խօսքին ու ժողովներին: Թշնամին՝ հրէշային ախորժակներով, առաջանում է. հուժկու գրոհով պէտք է քշենք նրան հայրենի սահմաններից:

Դէպի շինարար գործ.- խօսքը, քննադատութիւնը, գնահատումները թողէք ապագայ ազատ ու խաղաղ

Արամ Մանուկյանը

օրերին, իսկ այժմ՝ միմիայն գործ:

Հայ ժողովուրդը վճռել է ապրել, ապացոյց, որ նա այժմ հերոսական ճիգեր է գործ դնում ֆրօնտն ուժեղացնելու, թշնամու ընթացքը դանդաղեցնելու համար:

Ներքին սև ոյժերին նա պատասխանատուութեան է կանչում և անարգանքի սիւնին գամում:

Քաղաքացիներ!

Գօտեւորուած ձեր վստահութեամբ և օժանդակութեամբ՝ գործի եմ անցնում:

Անխնայ պատժի ու պատասխանատուութեան պիտի ենթարկւեն բոլոր դասալիքները, բոլոր պրովոկատորները, ժողովրդի բոլոր թշնամիները:

Ցոյց տանք աշխարհին, որ Հայը ազատ, անկախ ապրելու իրաւունք ունի:

Այժմ կամ երբէք»[3]:

Արամի այս կոչը մեջբերեցինք ամբողջությամբ, որպեսզի ընթերցողին հնարավորություն տանք նաև ինքնուրույն եզրակացնելու, թե ինչպես հայոց պատմության բարդագույն ժամանակաշրջաններից մեկում՝ 1918 թ. մարտին, հնարավոր դարձավ պետականության ավանդույթները գրեթե մոռացած, պետականության բաղադրիչներից ու կանոնավոր բանակից զուրկ, դարեր շարունակ օտարների տիրապետության տակ ապրած, հոգեկերտվածքի առանձնահատկություններ, բազում հարցերի վերաբերյալ տարբեր հայացքներ, նիստուկաց ունեցող հայության երկու՝ արևելյան և արևմտյան հատվածներին, հասարակական շերտերին, քաղաքական հոսանքներին ու զինվորականությանը համախմբել և կազմակերպված պայքարի առաջնորդել հանուն համազգային խնդիրների լուծման:

Ընդգծենք, որ Արամը լրիվ հարազատ մնաց իր խոսքին. նրա հետագա բոլոր քայլերը միտված էին այդ կոչի դրույթների գործնականացմանը: Նրա շրջահայացության, ազգային-պետական մտածելակերպի, ազնվության և արդարամտության շնորհիվ ընդհանուր գործի շուրջ համախմբվեցին բոլորը՝ անկախ իրենց սոցիալական դիրքից ու քաղաքական հայացքներից: Իսկ համազգային խնդիրներից շեղվողների, հասարակական կարգն ու անդորրը խախտողների, հատկապես անիշխանական

տարրերի, դավաճանների դեմ ծավալվեց անզիջում ու հետևողական պայքար:

Հեռատես, ռազմավարական մտածողություն ունեցող Արամը քաջ գիտակցում էր, որ առաջիկա ճակատագրական ամիսներին վճռական դերը պատկանելու է հայոց նոր-նոր կազմավորվող բանակին, այդ իսկ պատճառով հատուկ կերպով արժևորում էր նրա դերը, շեշտում նրանից ունեցած մեծ ակնկալիքները: Անշուշտ, Արամին քաջ հայտնի էր, որ հայոց բազմահազարամյա պատմության ընթացքում մեր բանակը մշտապես պատվով է կատարել հայրենիքի պաշտպանության գործը, տարել է բազում փայլուն հաղթանակներ, նույնիսկ այն դեպքերում, երբ թշնամին ունեցել է ուժերի բազմակի առավելություն: Անշուշտ, նա գիտեր նաև, որ հայոց բանակի երբեմն կրած պարտությունները հետևանք են եղել քաղաքական իշխանության թուլության, սխալների, ոչ շրջահայաց քայլերի և, իհարկե, ազգային միասնության խախտման: Դա է պատճառը, որ, բանակի կազմակերպման գործն ընդհանուր առմամբ վստահելով արհեստավարժ, նվիրված ու հեղինակավոր զինվորականներին, որպիսիք էին գեներալ Մ. Սիլիկյանը, Դրոն և ուրիշներ, Արամն անվերապահ աջակցություն էր ցուցաբերում նրանց:

Դեռևս 1918 թ. մարտի 21-ին ստորագրած հրամանով Արամը թաղային մարմիններին հրահանգել էր ցուցակագրել 18-ից բարձր բոլոր տղամարդկանց ու իրենց տներում գիշերող զինվորներին և մինչև մարտի 27-ը ցուցակները ներկայացնել իրեն: Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից ստեղծվեցին արտակարգ հանձնաժողովներ՝ զորահավաքն արագացնելու նպատակով: 1918 թ. մարտի 31-ի հրամանով Ազգային խորհուրդը Նոր Բայազետի շրջանի հայ գյուղացիությանը, որի մի մասը երբեմն փորձում էր խուսափել զորակոչից, տեղեկացնում էր այդ շրջան հատուկ պատվիրակություն ուղարկելու մասին, որի խնդիրն էր լինելու տեղական Ազգային խորհրդի և իր լիազորների հետ իրականացնել 19-32 տարեկան տղամարդկանց զորահավաք: Սահմանվում էր, որ զորահավաք իրականացնող մարմին չենթարկվողները խստորեն կպատժվեն[4]:

Ձեռնարկվում էին արտակարգ միջոցառումներ

հայկական զորամասերի զինական, տրանսպորտային ու պարենային կարիքները հոգալու ուղղությամբ: Երևանի Ազգային խորհուրդն այդ նպատակով որոշեց հավաքել նահանգի բոլոր ձիերը: Այդ կապակցությամբ Արամը հրահանգեց անվերապահորեն ենթարկվել հավաքող հանձնաժողովի նախագահին՝ զգուշացնելով, որ խուսափողները կհանձնվեն զինվորական դատարանին: Ջորքի ռազմամթերքի պահանջը բավարարելու համար իշխանություններն օգտագործում էին բոլոր հնարավոր տարբերակները: Դեռևս Սարիղամիշի անկումից առաջ Արամի հանձնարարությամբ այնտեղից որոշ քանակությամբ ռազմամթերք էր տեղափոխվել Երևան: Ազգային խորհուրդը պատրաստվում էր վարձատրության խոստումով հայ բնակչությունից հավաքելու մոսին հրացանի փամփուշտների դատարկ պարկուճներն ու պահունակները:

Մշտապես իշխանությունների ուշադրության կենտրոնում էր նաև թիկունքի կայունության ապահովումը: Դասալքության և անիշխանական այլ երևույթների դեմ տարվող անզիջում պայքարը երբեմն հարուցում էր ապազգային տարրերի դժգոհությունն ու դիմադրությունը: Արամը, Դրոն և մյուս հայրենանվեր գործիչները վճռականորեն զսպում էին նրանց՝ միանշանակորեն հասկացնելով, որ նրանց ապազգային գործողությունները չեն հանդուրժվելու:

Ապրիլի 16-ին Արամը հրապարակեց Ազգային խորհրդի որոշումներն այն մասին, որ՝ 1) կեղծ լուրեր տարածողները պատժվելու են, 2) քաղաքում սահմանվում է շուրջօրյա պահակություն, որպեսզի տականքները խուճապ չառաջացնեն, 3) նախատեսվում է 32-50 տարեկան տղամարդկանց զորահավաք, լինեն նրանք արևելահայ, արևմտահայ թե պարսկահայ: Նախատեսվում էր նաև կանանց մոբիլիզացիա: Ջորակոչվածների և նրանց ընտանիքների հոգսը թեթևացնելու նպատակով Ազգային խորհուրդն աղքատ զինվորներին կերակրելու համար որոշեց բացել էժան ճաշարան:

Կատարված հետևողական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ գրեթե լրիվ շրջափակված, թաթարական զինված ավազակախմբերով լցված, տնտեսապես քայքայված, ֆինանսական ծանրագույն վիճակում գտնվող երկրամասում ստեղծել պետական իշխանության կառույցներ, 10-12 հազարանոց կանոնավոր բանակ, հաստատել հասարակական կայունություն, ճնշել թաթարական հակապետական ավազակախմբերին և կարգի հրավիրել հայ անիշխանական տարրերին, ապաշրջափակել թաթարների կողմից շրջափակված հաղորդակցության ճանապարհները, մեղմել պարենային ճգնաժամը: Ինչպես նկատել է Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), «շնորհիւ իր բարձր հեղինակութեան՝ Արամի առաջնորդութեամբ հայ ժողովուրդը մի մարդու նման ոտքի ելաւ ու ծառացաւ հզօր թշնամու դէմ՝ իր ինքնապաշտպանութեան անհաւասար կռիւը հերոսաբար կերտելու համար»[5]: Կարճ ժամանակ

անց՝ 1918 թ. մայիսին, հայ ժողովուրդը տարավ պատմական հաղթանակներ իրենց նվաճումներից չհագեցող և ուժերի բազմակի առավելություն ունեցող թուրքական զորքերի նկատմամբ՝ հիմք դնելով Հայաստանի առաջին հանրապետությանը[6]: Թե՛ այդ շրջանում և թե՛ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից հետո Արամը ջանք ու եռանդ չխնայեց մեր երկիրը պաշտպանելու և հնարավորինս ընդարձակ սահմաններ ունենալու համար:

Իսկ ի՞նչ է կատարվում այդ դեպքերից 100 տարի անց՝ մեր օրերում: 2018 թ. 30-ամյա անկախ Հայաստանի երրորդ հանրապետությունն ուներ պետական իշխանության կենտրոնական ու տեղական բազմաճյուղ համակարգ, անվտանգության համակարգ, անհամեմատ կայուն հասարակություն և հզոր բանակ, ֆինանսատնտեսական անհամեմատ բարվոք վիճակում էր և գրեթե զուտ հայատարր երկիր էր: Թվում է, թե կային բավարար հիմքեր ազգային հեռահար ծրագրերը քայլ առ քայլ իրականացնելու, այդ թվում՝ և Արցախի հարցը հօգուտ հայոց լուծելու համար: Սակայն կատարվեց անսպասելին, անըմբռնելին. ՀՀ-ն մատնվեց խոշոր անհաջողության: 2018 թ. մայիսին, օգտվելով նախորդ իշխանություններից ժողովրդական լայն զանգվածների դժգոհությունից (իհարկե, դժգոհելու շատ բան կար), հանրապետությունում իշխանության եկած Նիկոլ Փաշինյանն ու նրա կուսակիցները գործնական քայլեր չկատարեցին պետությունն ուժեղացնելու, երկրում ժողովրդավարություն հաստատելու, արդարությունը վերականգնելու և հասարակական միասնությունն ամրապնդելու համար, ինչպիսի քարոզչությամբ ու խոստումներով եկել էին իշխանության: Ոչինչ չարվեց նաև տնտեսությունը, մասնավորապես ռազմարդյունաբերությունը զարգացնելու, երկրի ֆինանսները նպատակային օգտագործելու, երկրի գիտատեխնիկական ներուժը խթանելու, կրթության որակը և ՀՀ պաշտպանունակությունը բարձրացնելու՝ բանակը ժամանակակից զինատեսակներով սպառազինելու, հայոց բանակի կառավարման համակարգը կատարելագործելու համար: Ընդհակառակը, այժմ հայտնի դարձած տեղեկությունների համաձայն, վերջին տարիներին զինված ուժերի համակարգում կատարվել են կառուցվածքային և մարտական ուժի քանակական-որակական կրճատումներ, չեղարկվել մեծաքանակ ԱԹՍ-ների, ինչպես նաև դրանց դեմ պայքարի համար նախատեսված ռուսական գերժամանակակից ՀՕՊ համակարգերի գնման ծրագրերը, իսկ եղածն էլ բավարար չափով կամ արդյունավետորեն չօգտագործվեց 2020 թ. աշնան պատերազմում: Անտեսելով սպասվող արհավիրքները, պատերազմի ծավալման ամենօրյա վտանգը, ժողովրդի սոցիալական ծանր դրությունը՝ ՀՀ վարչապետի աթոռին բազմած Նիկոլ Փաշինյանը, որը, ըստ բազմաթիվ տեսաբանների, առնվազն անգլո-թուրքական գործակալ է, մեծ թափով



Մայիսի 28-ի փոնակատարությունը, 1919թ.

ձեռնամուխ եղավ ՀՀ պետական ինստիտուտների կազմալուծմանն ու վարկաբեկմանը, հայկական բանակի քայքայմանն ու թուլացմանը, հայ հասարակության մեջ անհանդուրժողականության ու թշնամանքի արմատավորմանն ու խորացմանը, ազգային արժեքների ու խորհրդանիշների նսեմացմանն ու ոտնահարմանը: Բանը հասավ նույնիսկ նրան, որ ՀՀ Ազգային հերոսի կոչում սկսեցին շնորհել մարտի դաշտում անհաջողության մատնված գործիչներին: Հանիրավի, ոչնչով չարդարացված հարձակումներ եղան ազգային ավանդույթների, հայ ընտանիքի, Հայ առաքելական սուրբ եկեղեցու, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, մայր բուհի, հայոց պատմության, հայոց լեզվի և հայ գրականության, դպրոցական ու բուհական առարկայական ծրագրերի դեմ: «Ազգ», «ազգային» բառերն իշխանության ներկայացուցիչների համար դարձան անցանկալի: Անհարգալից ու արհամարհական վերաբերմունք ցուցաբերվեց ազգային-ազատագրական շարժման, Առաջին հանրապետության գործիչների նկատմամբ: Բանը հասել է նրան, որ Գարեգին Նժդեհին անվանում են ֆաշիստ՝ անշուշտ մոռացության մատնելով նրա մեծագույն ներդրումը Սյունիքը ադրբեջանա-թուրքական զավթումից փրկելու և որպես Հայաստանի բաղկացուցիչ մաս պահելու գործում: Առանձնապես անհարգալից, թշնամական վերաբերմունք էր դրսևորվում Արցախյան առաջին, ինչպես նաև 2016 թ. Ապրիլյան պատերազմների հերոսների, առհասարակ բոլոր մասնակիցների նկատմամբ, անտեսվում էր դրանց դրական նշանակությունը հայ ժողովրդի համար: Փոխարենը խաղաղ համակեցություն, հանդուրժողականություն և եղբայրություն էին քարոզվում դարեր ի վեր հայերին սպանած, թալանած, անարգած, հայոց մշակութային ժառանգությունը ոչնչացրած, Հայոց ցեղասպանությունն իրագործած և ներկայումս հայ ժողովրդի նկատմամբ թշնամանքը խոսքով ու գործով շարունակող, Հայաստանի նկատմամբ զավթողական նկրտումներ ունեցող թուրքերի և նույն ձեռագիրը որդեգրած ադրբեջանցիների նկատմամբ: Հայ հասարակության մեջ Նիկոլի Փաշինյանի վարչախումբն ու նրանց ծառաները, այդ թվում և որոշ

մտավորականներ, տարածում էին «բարի թուրքի» շինծու գաղափարը՝ թերևս հիմնական նպատակ ունենալով ադրբեջանա-թուրքական մահասփյուռ վտանգի դեմ հայ ժողովրդի հավաքական զգոնության ու պայքարի անհրաժեշտության գաղափարի թուլացումը: Սա այն դեպքում, երբ այդ երկրներում տարբեր մակարդակներով՝ դպրոցից մինչև նախագահական ինստիտուտ, տասնամյակներ շարունակ խոսում էին Հայաստանը կործանելու, հայությանը ոչնչացնելու մասին: Այնպես որ պատերազմումհայոց բանակի ավելի քան 5000 զոհերի և 10000-ից ավելի վիրավորների, հաշմանդամների, գերիների և անհետ կորածների պատասխանատուն Նիկոլ Փաշինյանի ու նրա վարչախմբի հետ նաև նրանց հայ ծառաներն են:

Նիկոլը և նրա վարչախումբը, ըստ էության, ամեն ինչ արեցին, որ հայկական բանակը 2020 թ. աշնան պատերազմում ծանր պարտություն կրի թշնամուց[7]: Կարծում ենք՝ այդ առումով բավական է տասնյակ փաստերից նշել միայն մեկը, այն, որ չթույլատրվեց թշնամու դեմ կիրառել մեր զինանոցում առկա կործանիչ ուժ ունեցող «Իսկանդերը», որը կարող էր պատերազմի ընթացքն արմատապես շրջել հօգուտ ՀՀ-ի: Նիկոլը չկասեցրեց 2020 թ. աշնան պատերազմը հոկտեմբերի 19-20-ին՝ այն ժամանակ, երբ հնարավոր էր դրանից դուրս գալ անհամեմատ քիչ զոհերով ու տարածքային կորուստներով, երբ Արցախի Հանրապետության կազմում կարող էին մնալ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի բոլոր տարածքները, այդ թվում՝ և Շուշին: Փոխարենը նոյեմբերի 9-ի գիշերը նա ստորագրեց ՀՀ-ի համար նսեմացուցիչ կապիտուլյացիոն համաձայնություն՝ փաստորեն Ադրբեջանին նվիրաբերելով Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության համար ռազմաստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող Արցախի Հանրապետության մեծագույն մասը (մոտ 9.5 հազ. քառ. կմ), տնավեր ու փախստական դարձնելով մեր տասնյակ հազարավոր հայրենակիցների[8]:

Իրեն ժողովրդավար հռչակած, իսկ իրականում ամբոխավար «վարչապետ» Նիկոլ Փաշինյանն Արցախը հանձնեց թշնամուն՝ անտեսելով այն որևէ մեկին չզիջելու, Արցախի խնդիրը լուծելիս ժողովրդի կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ նույն ժողովրդին իր իսկ տված խոստումները, խախտելով խորհրդարանական կառավարման սկզբունքներն ու ՀՀ Սահմանադրությունը: Եվ սա վերջը չէ. այժմ էլ թիրախավորվել է հայոց բանակը, որը ՀՀ-ի և բզկտված Արցախի հայության անվտանգության միակ երաշխավորն է:

Այսպիսով՝ ստիպված ենք արձանագրել երկու իրողություն. մեկը՝ դրվատելի, ցնծալի և օրինակելի, մյուսը՝ քստմնելի, դատապարտելի և խստորեն պատժելի: Առաջին՝ 1918 թ. մարտին անսահմանափակ իշխանությամբ օժտված, իր ժողովրդին սիրող ու գնահատող «դիկտատոր», բայց իրականում ժողովրդավար Արամ Մանուկյանը մարդկային և նյութական սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկիրը տարավ դեպի հաղթանակ ու վերածնունդ՝ հիմնադրելով Հայաստանի առաջին հանրապետությունը, երկրորդ՝ 2018 թ. անսահմանափակ իշխանություն ստացած «ժողովրդավար», իսկ իրականում ամբոխավար, իր ժողովրդին ու նրա արժեքները ատող, Արցախը մերժող, պատեհապաշտ, հայ ժողովրդի զգացմունքների հետ նենգորեն խաղացած, ամենայն հավանականությամբ օտարերկրյա գործակալ Նիկոլ Փաշինյանը 30-ամյա անկախ, նյութական և մարդկային լուրջ ռեսուրսներ, բավական մարտունակ, հաղթական, ժամանակակից լուրջ զինատեսակներով զինված բանակ ունեցող Հայաստանի երրորդ հանրապետությունը ծրագրված ձևով հասցրեց ծանրագույն, խայտառակ պարտության:

Որքան էլ խոցված, ՀՀ-ն և հայ ժողովուրդն ի զորու են հաղթահարելու ճգնաժամը, վերջ տալու անհաջողություններին և բռնելու վերածնդի ուղին: Դրա համար պարզապես անհրաժեշտ է վերադառնալ ազգային արմատներին, որդեգրել ընդամենը մեկ դար առաջ ծանրագույն պայմաններում գտնվող հայ ժողովրդի համար անհավանական թվացող հաղթանակներ ապահոված արամմանուկյանական գործելակերպը: ■

Արամ Մանուկյանին նվիրված հուշարձանը Սարդարապատում

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1. Արամ Մանուկյանը ծնվել է Արցախի Շուշի քաղաքում: Տես Ա. Ասրյանի անձնական արխիվ, Սեդա Մանուկյանի 2000 թ. հունվարի 24-ի նամակը Ա. Ասրյանին:
2. Արամ Մանուկյանին հայ իրականության ղեկավար մարմինները 1917 թ. դեկտեմբերին գործուղել էին Երևան՝ երկրամասի իշխանության մարմիններ և կանոնավոր զորք ստեղծելու, սպասվող թուրքական վտանգը դիմագրավելու համար (տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2009):
3. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1:
4. Տես ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 2:
5. Իրազեկ Ց., Մոտիկ անցեալից (Պատմական դէպքեր և ապրումներ. 1917-1922), Պէյրութ, 1956, էջ 27:
6. Տես Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Եր., 1998, Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918), Եր., 1991, Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր I. Առաջին տարին. 1918-1919, Եր., 2005:
7. Տես http://yerkir.am/news/view/221511.html
8. Տես http://yerkir.am/news/view/221602.html:

Պանթյուրքիզմը և Հայաստանը

Անի Մելքոնյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Հայաստանն այսօր կանգնած է ներքին և արտաքին վտանգավոր զարգացումների շեմին, երբ մեր դարավոր թշնամիները կարծես թե հասել են իրենց գլխավոր նպատակի՝ պանթյուրքիզմի (համաթուրանականության) իրագործմանը շեմին: Իսկ ինչ է պանթյուրքիզմը, և ինչ կապ ունի դրա հետ Հայաստանը:

Պանթյուրքիզմը թյուրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսությունն է և, որքան էլ տարօրինակ է, սկիզբ է առել ոչ թե Օսմանյան կայսրությունում, այլ Ռուսական կայսրության տարածքում՝ կայսրության թյուրքալեզու ժողովուրդների շրջանում, 1880-ական թթ., որոնց նպատակն էր «ազատագրվել» օտար(այս դեպքում՝ ռուսական) տիրապետությունից, թուրք ժողովուրդներին համախմբել մեկ միասնական պետության մեջ, որը ձգվելու էր Բալկաններից մինչև Սիբիր ու Չինաստան: Պանթյուրքիզմի առավել հայտնի գաղափարախոսներից էին Ահմեդ Աղաևը, Յուսուֆ Աքչուրայը, Զիա Գյոքալփը, Ֆուադ Քյոփրյուլուն և ուրիշներ:

Պանթյուրքիզմի գաղափարախոսներն առաջարկում էին թյուրքալեզու բոլոր ժողովուրդների ընդհանուր և պարտադիր լեզու դարձնել Պոլսի թուրքերենը, քարոզել թուրքերի «փառավոր» անցյալն ու մշակույթը: Որպես այդ օրերին գոյություն ունեցող միակ անկախ թուրքական պետություն՝ Օսմանյան Թուրքիան ընկալվում էր որպես պանթյուրքիզմի իրագործման, այսինքն՝ թյուրքալեզու ժողովուրդների միավորման միջուկ: Օսմանյան կայսրությունում թուրքերը քրիստոնյա ժողովուրդներից հետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական ու մշակութային, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղափարների զարգացման մակարդակով: Բավական երկար ժամանակ պահանջվեց թուրքերի շրջանում ազգային «ես»-ի ձևավորման համար: Դրան նպաստեցին պանիսլամիզմը, պանօսմանիզմը և դրանց հաջորդած պանթյուրքիզմը: Պանթյուրքիզմը ռասիստական, շովինիստական կարելի է ասել՝ նաև ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսություն է: Այն փորձում է ապացուցել, որ թուրք էթնոսը բարձր է կանգնած մյուս ժողովուրդներից և ստեղծված է իշխելու համար: Պանթյուրքիստները նշում էին, որ Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի բոլոր առաջնորդները սերում են թուրքական, իսկ եվրոպական երկրների ղեկավարները՝ գերմանական ռասաներից:

Մարդկային քաղաքակրթության բոլոր նվաճումները վերագրվում էին թուրք էթնոսին: Դա ինքնանպատակ չէր. սեփական ռասայի գովերգումը հող էր նախապատրաստում հետագա հավակնությունների համար: 1903թ. Կահիրեի «Թյուրք» թերթում հրապարակվում է պանթյուրքիզմի հիմնադիր և խոշորագույն գաղափարախոս Յուսուֆ

Աքչուրայի՝ «Երեք քաղաքական համակարգ» խորագրով ծրագրային ծավալուն հոդվածը, որում մերժելով պանօսմանիզմը և պանիսլամիզմը՝ պանթյուրքիզմի հիմնադիրը թուրքերի նոր ազգային գաղափարախոսության կենսագործման ճանապարհին հիմնական հակառակորդ էր համարում Ռուսական կայսրությանը:

Աքչուրայը, բնականաբար, մեկ հոդվածի շրջանակներում չէր կարող խորությամբ ու բազմակողմանիորեն շարադրել պանթյուրքիզմի բոլոր հիմնադրույթները: Այդ խնդիրը լուծել է պանթյուրքիզմի խոշոր տեսաբան Զիա Գյոքալփը իր «Թուրքիզմի հիմունքները» աշխատության մեջ: Պանթյուրքիզմը նա դիտում է որպես եռաստիճան համակարգ: Դրանում առանձնացված են թուրքիզմը՝ որպես թյուրք ժողովրդի ազգային գաղափարախոսություն, և պանթյուրքիզմը՝ որպես թյուրքալեզու ժողովուրդների գաղափարախոսություն: Ըստ պանթյուրքիստական գաղափարախոսության՝ թյուրքալեզու ժողովուրդների միավորումը մեկ պետության մեջ պետք է իրականացվի եռաստիճան ծրագրով: «Պանթյուրքիզմը,- գրել է Գյոքալփը,- գաղափարի մեծության տեսանկյունից կարելի է բաժանել երեք աստիճանի՝ թուրքիզմ, օղուզականություն կամ թուրքմենականություն և թուրանականություն[1]»: Պանթյուրքիզմի նպատակը թուրքական ռասայի ժողովուրդների միասնական պետության՝ Մեծ Թուրանի ստեղծումն է: Պանթյուրքիզմի առաջին աստիճանը՝ թուրքիզմը, թուրքերի ազգային գաղափարախոսությունն է: Այն գաղափարախոսական հիմնադրույթների համակարգ է, որի նպատակը Թուրքիան էթնիկապես միատարր պետություն դարձնելն է և թուրքացնելը: Այդ գաղափարախոսության համաձայն՝ Թուրքիան պետք է մահմեդականացվի, ինչը նշանակում է քրիստոնյաների, առաջին հերթին՝ արևմտահայության ֆիզիկական ոչնչացում: Ըստ թուրքիզմի գաղափարախոսության՝ Թուրքիան միատարր պետք է դառնա առաջին հերթին կրոնական առումով և ապա միայն՝ ազգային: Այդ թեզից հետևում է, որ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ֆիզիկական

ոչնչացման ծրագիրը պետք է իրագործվի երկու փուլով: Առաջին փուլում պետք է ոչնչացվեն Օսմանյան կայսրության ոչմահմեդական, երկրորդ փուլում՝ մահմեդական ոչ թուրք ժողովուրդները:

1910-1911թթ. Սալոնիկում տեղի ունեցած ընդհանուր ժողովների ժամանակ «Իթթիհադ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը որդեգրեց պանթյուրքիզմի քաղաքականությունը: Կայսրության մահմեդական ժողովուրդները պետք է թուրքացվեին, իսկ քրիստոնյաները՝ բնաջնջվեին: Ապա Թուրքիային էին միացվելու Ատրպատականը (Իրանական Ադրբեջան), Ղրիմը, Թաթարստանը, Միջին Ասիան, Սիբիրը, Թուրքմենստանը, Մանջուրիան, և ստեղծվելու էր Մեծ Թուրանը: Երիտթուրքերը նշում էին, որ եթե սուլթանները նախկինում ձուլած կամ ոչնչացրած լինեին հպատակ ժողովուրդներին, ապա կայսրությունը չէր բռնի քայքայման ուղին:

Պանթյուրքիզմի իրագործման ճանապարհին սեպի պես խրված էին և են Հայաստանը և հայ ժողովուրդը, որը դարձավ դրա առաջին զոհը: Իշխանությունները թուրք բնակչության մեջ սկսեցին սերմանել ամենավայրենի շովինիզմ ու հայատյացություն. Կոչ էին անում, քանի դեռ ուշ չէ, թուրքացնելու Անատոլիան, իսկ հայերին ոչնչացնելու: Պանթյուրքիզմի ազգայնամոլական, ռասիստական, ծավալապաշտական գաղափարախոսությունն իր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի դեմ և դարձավ ցեղասպանության գլխավոր գործոններից մեկը: Թուրքերի ազգային գաղափարախոսությունը պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես մշտապես եղել է պետական գաղափարախոսության հիմքում: Թուրքերի պետական քաղաքականությունը դարեր շարունակ ղեկավարվել է միայն ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության, իսկ հետագայում Թուրքիայի Հանրապետության բոլոր իշխանություններն ազգային հարցում վարել են նույն քաղաքականությունը: Այդ առումով տրամաբանական է, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների աճյունները տասնամյակներ անց վերաթաղվում են Թուրքիայում: Թուրքական իշխանություններն արդարացնում են իրենց նախորդների ցեղասպանական քաղաքականությունը: Թուրքերի ազգային գաղափարախոսության առանցքը հողի և ժողովրդի գաղափարն է:

Թուրքիայի Հանրապետության քաղաքականությունն ու պանթյուրքիստական նպատակները այսօր էլ մնում են նույնը, և պատահական չէ, որ Թուրքիան և Ադրբեջանը այսօր ամեն կերպ ձգտում են ստանալու պանթյուրքիզմի շղթան կտրող Զանգեզուրը, որպեսզի կարողանան միավորվել և սկիզբ դնել պանթյուրքիզմի երկրորդ փուլին՝ թյուրքալեզու ժողովուրդների միավորմանը, որին, ըստ տրամաբանության, պետք է հաջորդեն մինչև Ալթայ և Չինաստան ընկած տարածքների, այսինքն՝ «թուրքական հայրենիքի» նվաճումը և Մեծ Թուրանի հռչակումը:



Զիա Գյոքալպ, Ահմեդ Աղաև

Պանթյուրքիզմը, ըստ իր գաղափարախոսների և իրագործողների, իրականացվելու էր երեք փուլով՝ ***թուրքիզմ, օղուզականություն*** և ***թուրանիզմ*** կամ ***պանթուրանիզմ***:

Առաջին փուլում Թուրքիան պետք է մահմեդականացվեր, ինչը նշանակում էր քրիստոնյաների, առաջին հերթին՝ արևմտահայության ֆիզիկական ոչնչացում: Ըստ թուրքիզմի գաղափարախոսության՝ Թուրքիան միատարր պետք է դառնար առաջին հերթին կրոնական առումով և ապա միայն՝ ազգային: Այդ թեզից հետևում էր, որ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ֆիզիկական ոչնչացման ծրագիրը պետք է իրագործվեր երկու փուլով. Առաջին փուլում պետք է ոչնչացվեին կայսրության ոչ մահմեդական ժողովուրդները:

Երկրորդ փուլում պետք է միավորվեին օղուզ թյուրքերը՝ օսմանյան թուրքերը, Հյուսիսային Պարսկաստանի ու Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդականները և թուրքմենները: Այս փուլը ենթադրում էր արևելահայության ամբողջական կամ մասնակի բնաջնջում. Արևելյան Հայաստանից նվազագույնը գրավվելու էին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Արցախը, որպեսզի կապ ստեղծվեր կովկասյան թյուրքերի (1936 թվականից՝ ադրբեջանցիներ) հետ: Ըստ այդմ էլ. «Կյանքի էր կոչվում ոչ միայն «Թուրքիան՝ թուրք-օսմաններին» լոզունգը, այլև թուրքախոս ժողովուրդներին իրենց ենթարկելու, Անդրկովկասը զավթելու, Միջին Ասիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի հսկայածավալ տերիտորիաներն Օսմանյան կայսրությանը կցելու կարգախոսը[2]»:

Երրորդ փուլում պետք է միավորվեին թյուրքալեզու բոլոր ժողովուրդները, և ստեղծվելու էր մեկ միասնական թյուրքական պետություն՝ ***Մեծ Թուրանը***:

Պանթյուրքիզմը Օսմանյան կայսրության պետական գաղափարախոսություն դարձրին «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կոչերով իշխանության եկած երիտթուրքերը: Պանթյուրքիզմը դառնում է Թուրքիայի քաղաքականությունը: Սալոնիկի 1910 և 1911 թվականների համաժողովների որոշումները՝ կայսրությունն օսմանցիականացնելու և մահմեդականացնելու մասին, նշանակում էին հայ

ժողովրդի ցեղասպանության ծրագրի ընդունում: Ինչպես նշեցինք, պանթյուրքիզմի ծրագրի իրականացման ճանապարհին «սեպի պես խրված» էր Հայաստանը, և հայ ժողովուրդը պետք է դառնար դրա առաջին զոհը: Դա էր գլխավոր պատճառը, որ «Իթթիհադը» առանձնահատուկ թշնամությամբ էր լցված հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, որը համարում էր առավել վտանգավոր Օսմանյան կայսրության համար, իսկ հայ ժողովուրդը, երիտթուրքերի ընկալմամբ, խոչընդոտելու էր «թուրք ազգի և էթնիկ թուրքական պետության» ձևավորմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն մշակվել և ավարտուն տեսք էր ստացել երիտթուրքերի պանթյուրքիստական գաղափարախոսությունը.«….1908-1914 թթ.՝ երիտթուրքական պետական ու քաղաքական կառավարման մոտավորապես վեց տարիների ընթացքում, որոշակի դարձավ նրանց թուրքիստական ու պանթուրքիստական գաղափարախոսությունը….

Բեռլինում դաստիարակված երիտասարդ թուրքերը Ալթայ գնալու, կումիս խմելու երազներ էին հյուսում: Ըստ նրանց՝ Թուրքիայի տիրապետությունը պետք է տարածվեր մինչև թուրքերի նախահայր Էրթողրլուի ծնունդավայրը, մինչև գորշ գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները[3]»: Մեծ Թուրան ստեղծելու, իրենց պատմական հայրենիք՝ Ալթայ վերադառնալու թուրքական այս «մեծ երազանքը» արտացոլված է նաև թյուրքալեզու ժողովուրդների «Էրգենեկոն» էպոսում: Թուրքական նկարագիր ունեցող Թուրքիա պետության կազմավորման ու պանթյուրքիզմի գաղափարախոսության կենսագործման ճանապարհին որպես գլխավոր խոչընդոտ Թուրքիան տեսնում էր և տեսնում է Հայաստանն ու հայ ժողովրդին: Պանթյուրքիզմի երկրորդ փուլով արևելահայությանը բնաջնջելու և կովկասյան թյուրքերին միանալու թուրքական ծրագիրը չիրականացավ 1918թ. Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ, որոնք փակեցին պանթյուրքիզմի ճանապարհը:

Պանթյուրքիզմի ծրագիրը վիժեցնելու հնարավորությունները

Ինչպես ասացինք, պանթյուրքիզմի երկրորդ փուլը ենթադրում էր արևելահայության ամբողջական կամ մասնակի բնաջնջում. Արևելյան Հայաստանից նվազագույնը գրավվելու էին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Արցախը, որպեսզի կապ ստեղծվեր կովկասյան թյուրքերի (1936 թվականից՝ ադրբեջանցիներ) հետ: Մոսկվայի անօրինական պայմանագրով Թուրքիային հաջողվեց Հայաստանից պոկել և Ադրբեջանին կցել Նախիջևանը, որն ապահովում է Ադրբեջանի կապը Թուրքիայի հետ, և կարելի է ասել, որ Կարսի և Մոսկվայի պայմանագրերով Թուրքիան իրականություն կդարձներ իր պանթյուրքիստական ծրագրի երկրորդ մասը, մանավանդ որ կարճ ժամանակ անց մի անօրինական որոշմամբ էլ Ադրբեջանին միացվեց նաև հայկական Արցախը: Մնում էր Զանգեզուրը, որի՝ Ադրբեջանին միացվելու դեպքում պանթյուրքիզմի երկրորդ մասը կարելի կլիներ հաջողված համարել, բայց Զանգեզուրի պաշտպանները Նժդեհի գլխավորությամբ, կարող ենք ասել, որ խառնեցին պանթյուրքիստների խաղաքարտերը՝ հերոսական պայքար մղելով այնքան, որ ի վերջո խորհրդային իշխանությունը տեղի տվեց, և Զանգեզուրը մնաց Հայաստանի կազմում:

Այսպիսով՝ Հայաստանը փրկվեց լիակատար օղակումից ու աստիճանական ոչնչացումից: Պանթյուրքիզմի շղթայից մի կարևոր օղակ էլ կտրվել է 1990-ականներին, երբ հայ ժողովուրդն ազատագրեց Արցախը: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը և շարունակվում է առ այսօր, Թուրքիային հաստատուն քայլերով առաջնորդում է դեպի պանթյուրքիզմի իրագործում: Արցախի դավաճանական հանձ-նումից, կապիտուլյացիայի ստորագրումից և Զանգեզուրի (Մեղրիի) ճանապարհը Ադրբեջանի ու Թուրքիայի առաջ բացելուց հետո Թուրքիան առավել, քան երբևէ, մոտ է իր պանթյուրքիստական ծրագրի իրագործմանը, և եթե ավելի քան մեկ դար առաջ՝ 1918թ. մայիսին, հայ զինվորականության վճռականության և դիկտատոր Արամ Մանուկյանի նվիրումի ու տքնաջան աշխատանքի շնորհիվ վիժեցվեց պանթյուրքիզմը, ապա այսօր նաև Հայաստանի ղեկավարության հանցավոր անտարբերության ու դավաճանական պահվածքի պատճառով Թուրքիան իրականացնում է այն, ինչը չէր կարողացել իրականացնել ավելի քան 100 տարի: Վերջին խոսքն այսօր հայ զինվորականությանն ու ռազմական ղեկավարությանն է. Այս անգամ ևս կհաջողվի՞ արդյոք հայ զինվորականությանը փակել պանթյուրքիզմի ճամփան և ապահովել Հայաստանի գոյությունը…

Ինչպես տեսանք, սա է թյուրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը, իսկ երբևէ մտածե՞լ ենք, թե որն է մե՛ր՝ հայերիս ազգային գաղափարախոսությունը:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- https://www.hayagitaran.am/2014/08/id-4634.html
2- Կիրակոսյան Զ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, էջ 208
3- Նույն տեղում

Աղբյուրներ

1. https://www.hayagitaran.am/2014/08/id-4634.html
2. Կիրակոսյան Զ.,Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատ. Ա, Եր., 1982,էջ 208:
3. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը.բովանդակությունը, ծագումը, Եր., 1995, էջ 38-39:
4. Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 208:

Խորհրդային Հայաստանը՝ մեր պատմութեան շղթային մէջ

Վրէժ-Արմէն

1920ը կը զուգադիպէր Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան 100ամեակին: Թէև մեր երկրորդ հանրապետութիւնը ճիշտ իբրև այդպիսին չէր, որ կը ճանչցուէր իր յառաջացման օրէն մինչև 1936, սակայն 1920-1991 եօթանասունամեայ ժամանակաշրջանը կրնանք նկատել մեր երկրի պատմութեան յատուկ մէկ օղակը, որուն կ'արժէ անդրադառնալ: Եւ ահա յարմար առիթը: Արդարև, նոր ստացայ այդ հարիւրամեակին առթիւ 1920ին Երևանի մէջ լոյս տեսած հայերէն և ռուսերէն գրքոյկը՝ «Խորհրդային Հայաստանը հայ ժողովրդի պատմական ճակատագրում. նուիրւում է Հայկական ԽՍՀ 100-ամեակին»: Հրատարակիչն է «Ինտեգրացիա (համարկում. այս հայացումները՝ իմ կողմէ – Վ.-Ա.) և զարգացում» հետազօտութեան և վերլուծութեան հասարակական կազմակերպութեան Եւրասիական փորձագիտական ակումբը: Նշեմ, որ թէև աբեղեանական ուղղագրութեամբ լոյս տեսած է այս հատորը, սակայն այստեղ թէ՛ նախորդող տողերը և թէ՛ հետագայ մէջբերումները կը ներկայացնեմ դասական ուղղագրութեամբ:

Դիզայներ (գեղարկիչ) Արմէն Սեդրակեանի ձեւաւորումով գունաւոր, պատկերազարդ և բաւական մաքուր տպագրութեամբ հատոր մըն է՝ 88 մեծադիր էջերու սահմաններուն մէջ, «ընթերցողներու լայն շրջանակի ուշադրութեանը ներկայացուող», սակայն, ափսո՜ս... 500 (՛) տպաքանակով:

Ափսոսալու երկրորդ և աւելի կարևոր պատճառ մըն ալ կայ: Գիրքը ներկայացնող բացատրութեան մէջ կը նշուի. «Հեղինակները գտնում են, որ Հայկական ԽՍՀն հայոց պետականութեան զարգացման կարևոր փուլն է, տնտեսութեան, գիտութեան, մշակոյթի և կրթութեան եզակի ծաղկման ժամանակաշրջանը»: Իսկ այս հատորէն ստացուող ընդհանուր տպաւորութիւնն այն է, որ ան կարծես ճիգ մը ըլլայ պաշտպանելու Խորհրդային Հայաստանը, արդարացնելու անոր գոյառումն ու կեանքը, նուաճումներն ու յաջողութիւնները: Պաշտպանելու որո՞ւ դէմ:

Գրքոյկին խմբագիրը՝ Արամ Սաֆարեան (բանասիրական գիտութիւններու թեկնածու և ԵՊՀ դոցենտ (դասախօս)), իր ներածութեան մէջ կը գրէ. «Ձեր ուշադրութեանը ներկայացուող յօդուածները գրուել են առաջատար գիտնականների և փորձագէտների կողմից: Այդ իսկ պատճառաւ հրապարակումները ակադեմիապէս ստուգուած և գիտական առարկայական բնոյթ են կրում, ինչը թոյլ կը տայ մեզ՝ յաջողութեամբ յետ մղելու գաղափարական և քաղաքական ընդդիմախօսների յարձակումները»: Այո՛, ափսո՜ս, որովհետև գիտական փորձ մը ըլլալէ աւելի կարծէք քարոզչական գրքոյկ մըն է, որ կը մատուցուի, ինչպէս կրնար ըլլալ տակաւին Խորհրդային Հայաստանի առկայութեան՝ իր այլ յոբելեաններէն մէկուն՝ հակառակ որ կայ



նաև բացասական երևոյթները արծարծող յօդուած մըն ալ, որուն կ'անդրադառնամ քիչ անդին: Այս տպաւորութիւնը կը ստացուի ոչ միայն ներածականէն, այլև միւս գրութիւններէն ալ: Նախքան անոնց մասին խօսիլս, սակայն, կ'ուզեմ ընել կարգ մը հաստատումներ:

Խորհրդային կարգերու «գաղափարական և քաղաքական ընդդիմախօսներու» առաջին գիծի վրայ կը գտնուէր «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը», որ երբէք չէ վարանած իր ամէնէն բուռն քննադատութիւնները ընելու, երբ հայութեան ազգային արժէքները կ'ոտնակոխուէին, իրաւունքները կը բռնաբարուէին, և ֆիզիքական գոյութիւնն իսկ կը վտանգուէր համայնավար վարչակարգի տակ: Սակայն միևնոյն ատեն, կայսրինը կայսրին տալով հանդերձ, Աստծոյնն ալ Աստուծոյ կը տրուէր:

Կրնամ անձնապէս վկայել՝ ընթերցողը յղելով այն հարիւրաւոր յօդուածներուս, հարցազրոյցներուս, ապա նաև խմբագրականներուս՝ սկսելով «Յուսաբեր»ի էջերէն մինչև «Հայրենիք», «Հորիզոն» ու «Դրօշակ», բոլոր քննադատական արտայայտութիւններուս կողքին գրած դրուատանքներուս՝ ի տես Խորհրդային Հայաստանի մէջ յայտնաբերուող դրական երևոյթներուն, յատկապէս 1965 թուականէն սկսեալ: Ձիս յատկապէս կը յուզէր ու կը խանդավառէր այն ազգայնաշունչ վերազարթնումը, որուն արձագանգները կը լսէինք հայրենի մամուլի էջերէն: 1988ին «Հորիզոն» լոյս կ'ընծայէր 24 էջերէ բաղկացած յատուկ թղթածրար-յաւելուած մը՝[1] նուիրուած Խորհրդային Հայաստանի, հիմնուած նախորդող տարիներուն ՀՅԴ երիտասարդական միութեան հաւաքներուն բազմիցս տուած իմ դաստիարակչականներուս վրայ: Տարօրինակ է, բայց իրաւ, որ տարիներ ետք հրատարակուած այս գրքոյկը չափով մը կը յիշեցնէ իմ այդ թղթածրարը: Սակայն կը նախընտրեմ այստեղ մէջբերել աւելի հանգամանալից խօսքեր ՀՅԴ 22րդ և 23րդ Ընդհանուր ժողովներու հրապարակումներէն, որոնք նոյնպէս ներառուած են գրքոյկին մէջ: Այսպէս՝ 22րդ Ընդհանուր ժողովը (1981, Վիեննա) Խորհրդային Հայաստանը կը նկատէր «առանցքը ազգային

գոյատևման մեր պայքարին, պատուանդանը Հայ դատին և խարիսխը հայ ժողովուրդի լուսաւոր ապագային»: Ընդհանուր ժողովը իր կոչով կ'ողջունէր «ամէնէն առաջ Հայաստանի հայութիւնը, որ վերջին 60ամեակին, աշխարհի մը դժուարութիւններ ու ծանր փորձութիւններ յաղթահարելով, գերմարդկային զոհողութիւններ յանձն առաւ հայրենիքի պահպանման ու վերաշինութեան նուիրական գործին մէջ, բազմապատկեց իր համբանքը, պատուաբեր նուաճումներ արձանագրեց գիտական, արհեստագիտական ու մշակութային մարզերու մէջ և, հայոց պատմութեան ձայնին ունկնդիր, հնարաւոր բոլոր միջոցներով կը ջանայ ամրապնդել մեր ներկայի ու վաղուան գոյութեան խարիսխները, ամբողջական հայութեան լուսապայծառ ապագայի կերտման հեռանկարով»:

23րդ ժողովէն (1985, Աթէնք) ետք ՀՅԴ Բիւրոյի կոչին մէջ կը կարդանք. «Պատմական մեր հայրենիքէն վերապրող Հայաստանը, հակառակ խորհրդային վարչաձևին, կը շարունակէ մնալ անփոխարինելի աղբիւրը ազգային մեր ինքնավստահութեան: ՀՅ Դաշնակցութիւնը հպարտանքով կը հաստատէ հայրենի հայութեան ծաղկումը և վերելքը մշակութային թէ տնտեսական, գիտական թէ ընկերային բոլոր մարզերուն մէջ անխտիր»:

Վերջապէս, յաջորդ ժողովին (1988, Աթէնք) առթիւ հրապարակած իր յօդուածով[2] ընկ. Հրայր Մարուխեան՝ Բիւրոյի ներկայացուցիչը, կը գրէր. «Հայ դատի հետապնդումը կը խարսխուի նախ Հայաստանի ներկայ իրականութեան վրայ, իբրև հիմնակառոյցը ապագային հողահաւաքով և հայահաւաքով իրականանալի մեր ամբողջական հայրենիքին: Ներկայ Հայաստանը՝ իր պետական կառոյցով և շուրջ երեքուկէս միլիոն հայութեամբ, ինչպէս նաև Կովկասի հայապատկան հողերուն վրայ ապրող հայութիւնը, որ հազարումէկ թելերով կապուած կը մնայ հայոց պատմութեան, թէ հայ ժողովուրդի ամբողջութեան հետ»:

Ուրեմն որո՞նց կ'ակնարկուի, երբ «գաղափարական և քաղաքական ընդդիմախօսներու» մասին կը խօսուի ու ներկա գրքոյկով կ'ուզուի հակադրուիլ կամ հակաճառել անոնց...

Բայց ակնարկ մը նետենք գրքոյկի միւս յօդուածներուն վրայ:

Կարէն Խաչատրեան՝ պատմական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի (հիմնարկի) փոխտնօրէն, իր «Խորհրդային Հայաստանի տեղն ու դերը հայոց պետականութեան պատմութեան մէջ» յօդուածին մէջ իրաւամբ կը հաստատէ. «Պէտք է նշել, որ հայկական խորհրդային պատմագրութիւնը թէև հասել է որոշակի յաջողութիւնների խորհրդային շրջանի Հայաստանի պատմութեան հիմնարար հարցերի ուսումնասիրման ոլորտում, բայց ամբողջատիրութեան, քաղաքական ցենզուրայի (գրաքննութեան), փակ արխիւների պայմաններում պատմագիտութեան զարգացման շրջանակները նեղ էին»: Ներկայիս անհրաժեշտ



սրբագրութիւնները սկսած են կատարուիլ, սակայն, ըստ հեղինակին, կը թուի, թէ միևնոյն ատեն կայ նաև խորհրդային տարիներու կարևորութեան նսեմացման ձգտում մը: Յօդուածի շարունակութիւնը յատկացուած է Խորհրդային Հայաստանի նուաճումներուն զանազան մարզերու մէջ, ինչպէս նաև 1965էն ետք Հայկական հարցի արծարծման ու ազգային իրաւունքներու պաշտպանութեան երևոյթներուն: Ան կ'եզրակացնէ, թէ Խորհրդային Հայաստանը «իր արժանի տեղն է զբաղեցնում հայոց պետականութեան պատմութեան մէջ»:

Յաջորդ յօդուածը՝ «Ալեքսանդր Միասնիկեանը՝ Խորհրդային Հայաստանի հիմնադիր», ստորագրած է Աւագ Յարութիւնեան՝ Հայաստանի ազգային արխիւի Կինոֆոնոֆոտոփաստաթուղթերու (կրնանք ըսել Շարժաձայնալուսա...., ինչո՞ւ ոչ, պարզապէս «ոչ թղթային փաստաթուղթերու», որոնք կրնան ներառել նաև թուայնացած նիւթերը) մասնաճիւղի տնօրէն, պատմական գիտութիւններու թեկնածու: Ան սոյն գրութեամբ ջատագովը կը հանդիսանայ հայնռուս սերտ յարաբերութիւններու և կը վերյիշէ Միասնիկեանի հետևեալ խօսքերը. «Ռուսական զօրքերը Հայաստանում մնում են ոչ թէ ինչ-որ շահախնդիր նպատակների համար, այլ այն պատճառով, որ նրանց կարիքն է զգում Հայաստանը, որպէսզի հնարաւորութիւն ունենայ հանգիստ ու խաղաղ կառուցելու իր կեանքը: Եւ այդ փաստը ամենևին չի հերքում այն, որ Հայաստանն անկախ է»: Կը լսէ՞ք, պարոնա՛յք Պուտին և Լաւրով...

Գագիկ Յարութիւնեան՝ գլխաւոր խմբագիրը սոյն գրքոյկին, որ Ցանցային հետազօտական ինստիտուտի (հիմնարկի) տնօրէնն է, իր «Խորհրդային դարաշրջանը "պատմական քաղաքականութեան" համատեքստում (շրջարկում)» յօդուածով կ'ուզէ փաստել, որ Հայաստան, Խորհրդային Միութեան մաս կազմելով, ուրիշներէ աւելի շատ օգտուած է, աւելի շատ ստացած է, քան թէ տուած՝ վիճակագրական տախտակներով փորձելով ցոյց տալ այդ, առանց, սակայն, համոզիչ ըլլալու: Պարզապէս դիտել տամ, որ մէկ քիլոմեթր ասֆալտապատ ճանապարհ կառուցելը կրնայ մօտաւորապէս նոյնը արժել Ռուսաստանի մէջ, թէ Հայաստանի, սակայն

նոյն ճանապարհէն անցնողներու թիւը եթէ նկատի առնենք, բնականաբար, անձ գլուխ ծախսը շատ աւելի նուազ կ'ըլլայ, եթէ հազար հոգի անցնի անկէ, քան եթէ տասը հոգի անցնի: Եզրակացնենք, թէ Հայաստանը աւելի առած կ'ըլլայ, քան թէ տուած: Ապա յօդուածը դատապարտումն է այսօրուան «լիբերալ» («ազատական») յեղափոխութեան, որ աւելի կը շեշտէ հրատարակութեան որոշ միտումնաւորութիւնը:

Ալեքսանդր Սաֆարեան՝ պրոֆեսոր, ԵՊՀ թուրքագիտութեան ամբիոնի վարիչ, կը գրէ «Խորհրդային Հայաստանում գիտութեան և մշակոյթի ծաղկման ֆենոմենի [երևոյթի] մասին»՝ յիշելով ծանօթ դէմքեր, հաստատութիւններ, գործեր, և, մուրճը նոյն գամին վրայ զարնելով, կ'եզրակացնէ, որ «Ռուսաստանի Դաշնութեան հետ մշակութային-պատմական ռազմավարական դաշնակցութիւնը և արգասաւոր համագործակցութիւնը, սերտ ինտեգրացիան (համարկումը) (մասնաւորապէս գիտահումանիտար (գիտամարդկայնական)) արդի Հայաստանի հայրենասէր մտաւորականութեան կողմից ընկալւում են որպէս XXI (ԻԱ) դարում զարգացման պարտադիր պայման և նոր, համատեղ տնտեսական ու մշակութային թռիչքի հնարաւորութիւն»:

Աշոտ Թևրիկեան՝ տնտեսական գիտութիւններու թեկնածու, դոցենտ (դասախօս), իր «Խորհրդային Հայաստանի սոցիալ (ընկերային)-տնտեսական ձեռքբերումներ» յօդուածով կ'ընդգծէ Հայաստանի առաւելութիւնները խորհրդային միւս հանրապետութիւններուն բաղդատմամբ՝ նշելով, որ «Խորհրդային Հայաստանն ապահովում էր համամիութենական ՌԱՀի սպեցիֆիկ (իւրայատուկ) մասը, որպէս կանոն՝ ինտելեկտուալը (մտաւորը), ինչպէս նաև էլեկտրոնիկայի (ելեկտրոնագիտութեան) սեկտորը (հատուածը): Հայաստանը ԽՍՀՄում իր համար ամրագրել էր խորհրդային «Սիլիկոնային հովտի» դերը»: Յետոյ: Յետոյ պէտք է կրկնել, թէ «ԽՍՀՄ կազմում Հայաստանի գտնուելու շրջանը մեր ժողովրդի վերածնդի ու բարգաւաճման շրջանն էր»: Հեղինակը, սակայն, այսքանով ալ պիտի չբաւարարուի ու վերջաւորութեան պիտի նշէ այն բացասական երևոյթները, որ այսօր կը պարզուին ներկայ Հայաստանի մէջ:

Հայության զանգվածային աքսորը, 1949թ. հունիսի 14

Արմենակ Մանուկեան՝ պատմական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր, իր «Քաղաքական բռնաճնշումները Հայկական ԽՍՀ-ում (1930-1950)» գրութեամբ կ'անդրադառնայ մեր կորուստներուն: Ան կը գրէ. «Այսպիսով հայ ժողովուրդն ունեցել է զգալի և անդառնալի կորուստներ ստալինեան (միայն ստալինեան – Վ.-Ա.) բռնաճնշումների ժամանակաընթացքում: Խեղուել է տասնեակ (միայն տասնեակ – Վ.-Ա.) հազարաւոր մարդկանց ճակատագիրը: Այս հրէշաւոր երևոյթը մոռանալը, անտեսելը հաւասարազօր են ինքդ քեզ "մանկուրտ" լինել դատապարտելուն»: Այս ամէնը ըսելէ ետք պրոֆեսորը կ'աւելցնէ որպէս եզրակացութիւն. «Միևնոյն ժամանակ, անհրաժեշտ է հնարաւորինս օբյեկտիվ (առարկայականօրէն) ուսումնասիրել այս հիմնախնդիրը՝ փաստերը չխեղաթիւրելու համար և, ղեկավարուելով յոյզերով կամ այլ պատճառներով, ԽՍՀՄ, հասկնալի է՝ նաև Հայկական ԽՍՀ պատմութիւնը չներկայացնել միայն սև լոյսով»:

Սամուէլ Մանուկեան՝ սոցիոլոգիական (ընկերաբանական) գիտութիւններու թեկնածու, զետեղած է այլապէս հետաքրքրական յօդուած մը՝ «Խորհրդային և ժամանակակից Հայաստանի կերպարները ուսանողութեան պատկերացումներում», որ յստակ չէ, սակայն, թէ ինչ գործ ունի այս հաւաքածոյին մէջ: Հարցախուզային տախտակներով կը ներկայացուին ուսանողներու ճիշտ ու սխալ պատկերացումները: Եզրակացութիւնն այն է, որ Խորհրդային Հայաստանի պատմութեան մասին թիւր ու թերի ըմբռնումները հետևանք են այդ ուղղութեամբ դաստիարակութեան պակասի:

Վերջապէս, Արամ Անանեան՝ «Արմենպրես» լրատուական գործակալութեան տնօրէն ու պատմական գիտութիւններու թեկնածու, իր «Վերջաբանի փոխարէն» բաժինով կը հաստատէ, թէ «Հայաստանի քաղաքագիտական միտքը պէտք է համապատասխան գնահատական տայ մեր անցեալի այդ փուլին, ժամանակաշրջան, որը Հայաստանի տնտեսութեան, գիտութեան ու մշակոյթի վերելքի, մարդկային կապիտալի (դրամագլուխի, ներուժի) զարգացման մէջ անանախադէպ մեծ ներդրումների շրջափուլ էր՝ մէկտեղուած ամբողջատիրական քաղաքական մամլիչի կոյր ու համահաւասարեցնող ազդեցութեան հետ»:

Նպատակ չունէի այս գրքոյկի քննադատութիւնը ընելու, սակայն Խորհրդային Հայաստանի 100ամեակին առթիւ շատ աւելի կար ըսուելիք, քան այստեղ ներկայացուածը՝ առաւելաբար դրական մօտեցումով, նոյնիսկ աւելի քան դրական:

Կասկած չկայ, որ 70 տարուան ընթացքին Հայաստան դրական յառաջխաղացք պիտի ունենար, այն Հայաստանը, որ, որբերու և անօթևան ժողովուրդի բնակավայր ըլլալով հանդերձ, խորհրդայնացումէն իսկ առաջ համալսարան ստեղծած էր ամէնէն դժուարին պայմաններու մէջ, որ ժողովրդավար կարգերով պետականութիւն էր հաստատած: Ո՞ր

ազգը, ո՞ր ժողովուրդը եօթը տասնամեակի ընթացքին պիտի չզարգանար, չյառաջդիմէր, ո՞ւր մնաց հայը՝ ստեղծագործ, աշխատասէր, հայրենասէր:

Ժամանակաշրջան մը, սակայն, միայն արձանագրուած յաջողութիւններով ու նուաճումներով չէ, որ կը չափուի: Բոլոր առարկայական երևոյթներուն կողքին կան ենթակայական երևոյթներ, բարոյական երևոյթներ, որոնք նոյնպէս կարևոր են որևէ քաղաքական իրավիճակի կամ շրջափուլի գնահատումին համար:

Դժբախտաբար, Հայաստանի խորհրդային տարիները նաև մեր պատմութեան ամէնէն տխուրներն են, մանաւանդ Մեծ եղեռնէն վերապրած մեր ժողովուրդի կեանքին մէջ և ոչ միայն ստալինեան ժամանակներուն: Այդ մասին չխօսելո՛վ ալ մենք մեղաւոր կը դառնանք:

Կարելի՞ է չխօսիլ հոգեկան լախտի այն ահաւոր հարուածին մասին, որ մեր ժողովուրդը ստացաւ մեր ուղղագրութեան աղճատումով, մեր լեզուի աղաւաղումով, անցեալի հետ մեր առնչութեան խաթարումով, հայրենիքի իսկ գաղափարի եղծանումով: Կորսնցուցինք շատ բան, ներառեալ մեր հողին տէր կենալու պատրաստակամութիւնը, պարկեշտ աշխատանքով, սեփական քրտինքով ապրուստը հոգալու ունակութիւնը, մասնագիտական վկայականիդ քու ճիգ ու ջանքովդ արժանանալու աւանդութիւնը, կատարածիդ կամ արտադրածիդ որակին նախանձախնդրութիւնը և այլն, և այլն: Ինչպէ՞ս կարելի էր հաշտեցնել միջազգային բեմերու վրայ հայ մարզիկներու և արուեստագէտներու փայլուն յաղթանակները հանրային վայրերու լուացարաններու անհանդուրժելի վիճակին հետ, գիտութեան բարձրագոյն մակարդակներու վրայ մեր անժխտելի թռիչքները՝ նկանակ մը հաց ձեռք ձգելու համար անվերջանալի հերթերուն հետ, մեր բանաստեղծներուն հայրենասիրութեան կոչերն ու ներբողները՝ առ այսօր շարունակուող հայրենալքումին՝ արտագաղթին հետ: Տակաւին ինչպէ՞ս մոռնալ մատնութիւններն ու նախանձը նոյնինքն մտաւորական կամ արուեստագէտ կարծուած անձնաւորութիւններու իսկ շրջանակներուն մէջ: «Ձրկուած ենք կենցաղային մշակոյթէ»,– կը խոստովանէր ինծի Լիլիթ Գալստեան, երբ միասին կը մասնակցէինք «Համազգային»ի երկրորդ պատգամաւորական ժողովին Ծաղկաձոր 1994ին: Դեռ չեմ խօսիր մտաւորական ու ղեկավար տարրի զանգուածային սրածման, մարդկային իրաւանց անտեսումին, հայութեան ազգային իրաւունքներու ոտնակոխման և ուրիշ շատ կորուստներու մասին:

Այո՛, ահաւոր էր ժառանգը, որ այդ եօթանասուն տարիները մեզի ձգեցին, ժառանգ, որմէ չենք կրցած ձերբազատիլ ահա արդէն «վերանկախացման» այս երեսուն տարիներուն անգամ: Ըսեմ անմիջապէս, որ այդ ամէնը կապ չունի անպայման Ռուսաստանի և Հայաստանի փոխյարաբերութիւններուն հետ, որոնց արդարացումն ու պաշտպանութիւնը կարծէք կը հետապնդուին Խորհրդային Հայաստանի

Ցույց Երևանում, 1965թ. ապրիլի 24

հարիւրամեակին նուիրուած այս հրատարակութեամբ՝ այդպիսով նսեմացնելով ազնիւ նպատակը յիշատակութեան:

Գրքոյկին մէջ ներառուած վկայութիւններուն ու հաստատումներուն կողքին՝ կատարուած «առաջատար գիտնականների և փորձագէտների կողմից», կ՚արժէ լսել քանի մը այլ վկայութիւններ ու հաստատումներ համայնավար վարչակարգի «բարիքները» վայելած ուրիշ հայորդիներու կողմէ: Անոնցմէ մէկը իր «համոզմունքներով ու հայեացքներով» «մարքսիստ-կոմունիստ», նաև ինքզինք «հայ կոմունիստ» համարող հանգուցեալ Կարլեն Դալլաքեանն էր, որուն յուշերը[3] կարդացած ըլլալու էին վերոյիշեալ գրքոյկի հեղինակները: Ամբողջ հատորը վկայութիւնն է 70ամեայ մեր դժբախտ երթին, որուն դրական կողմերուն մասին չի վարանիր գրելու Հայաստանի ղեկավար մարմիններու երկարամեայ անդամ պարոն Դալլաքեան: Յիշեմ միայն մէկ մէջբերում իր գիրքի նախաբանէն. «Ընդունում եմ Խորհրդային Միութեան գաղափարը սկզբունքօրէն: Մերժում եմ գործնական կիրառման շատ պարագաները: Նման միութիւնը պէտք է լինի իրօք ազատ, անկախ պետութիւնների կոնֆեդերացիա (համադաշնակցութիւն) (այստեղ հայերէնը ի՞նք կ՚աւելցնէ – Վ.-Ա.), որի միասնական պաղլամենտում (խորհրդարանում) իւրաքանչիւր երկիր ունենայ վետոյի իրաւունք: (...) Մերժում եմ երկու կարգի և օրէնքի գոյութիւնը նման համադաշնակցութեան մէջ, երբ սահմանադրութեամբ տրուող իրաւունքները բռնաբարւում կամ օտարւում էին կուսակցական մարմինների խողովակներով»:

Յաջորդ վկայութիւնները բոլորն ալ կու գան ենթականերուն հետ տարիներու ընթացքին իմ ունեցած հարցազրոյցներէն. դժբախտաբար, բոլորն ալ՝ արդէն հանգուցեալ: Ահա թէ ինչ կ՚ըսէր Յակոբ Յակոբեան[4] Եգիպտոսէն ներգաղթած նկարիչը, որ շատ առաւելութիւններ ալ վայելած էր այդ տարիներուն (որուն լուսանկարն ալ ներառուած է

գրքոյկին մէջ). «Հակառակ այդ բոլորին, իմ կեանքիս ամէնէն մեծ ուրախութիւնը եղած է այդ «ռեժիմին» կործանումը: Շատ ծանր բան է, որ կ'ըսեմ, և շատ մարդոց համար, և հետևանքները սարսափելի եղան մեր ամբողջ երկրին, ամբողջ ժողովուրդին համար և պիտի շարունակեն սարսափելի ըլլալ, բայց այդ անտանելի «ռեժիմը» պէտք է կործանէր: Գիտէք, կար բան մը, որ մարդը կը դարձնէր ուրիշ տեսակ էակ, անտեսանելի ճնշում մը կար օդին մէջ, որ մարդկային ամբողջ յարաբերութեան վրայ կ'ազդէր, մարդը ձևով մը կը վայրենացնէր»:

Էդմոնդ Աւետեան՝[5] անուանի այլախոհ մտաւորականը, կ'աւելցնէր. «Ես դժբախտաբար կարող եմ նշել, որ գնալով նուազում է մարդկային արժանապատուութիւնը. տնտեսական դժուարութիւնները մարդուն հասցրեցին այն վիճակին, որ նա արդէն գայլի յատկանիշներ է իր մէջ արթնացրել: Միւս կողմէ կարելի է նշել հաջող հակաէսթետիզմը (հակագեղագիտութիւնը). միայն այն չէ հարցը, որ փողոցները չեն մաքրւում, որ աղբամանները չեն դատարկւում ժամանակին, հակաէսթետիկ են դարձել իրենք՝ մարդիկ, նրանք պահանջք չունին գեղեցիկ ապրանքի նկատմամբ, գնում են ամէն ինչ, նոյնիսկ ինչ որ այնպիսի տեսք ունի, որ, օրինակ, կատուս անգամ չի ուտում, իսկ մարդը ուտում է: Բոլոր արտադրողները ասում են, իսկ եթէ չեն ասում, մտածում են, որ ապրանքը որքան էլ ցածր որակի լինի, մարդիկ ուզեն թէ չուզեն կը գնեն: Ճիշտ է, ստիպուած է մարդը մէկ-մէկ գնել այն, ինչ իրեն դուր չի գալիս, սակայն կայ մի այլ բան արտադրողի վերաբերեալ. ինչպէ՞ս է թոյլ տալիս արտադրողը կորցնելու իր պրոֆեսիոնալիզմի մակարդակը»:

Միւսը ծանօթ գրող, յետոյ այլախոհ դարձած Կարէն Սիմոնեանի ըսածն է[6]. Խորհրդային Հայաստանը «մշակութային յեղափոխութեան ջարդարարական մաքրազարդումների ընթացքին ամենազօր Վախի և Սարսափի մէջ արագօրէն մոռացութեան տուեց թէ՛ իր Հաւատը, թէ՛ իր Լեզուն, թէ՛ իր Պատմութիւնը, թէ՛ իր Մշակոյթը և թէ՛ իր ազգային Ընտրեալների բազմաստեղութիւնը: Իմ Արամ հօր վկայութեամբ, որ հայրենադարձուելուց յետոյ՝ 1929-34 թուականներին, ուսանել էր Մոսկուայի բարձրագոյն ճարտարագիտական հաստատութեան մէջ և հրաշալի ծանօթ էր երևանեան իրականութեանը, մինչև 50ականներ հասարակութեան բանիմաց խաւը գիտէր և հասկանում էր, որ Հայաստանը ճերմակ ջարդարարութեամբ դատապարտել են դանդաղ վախճանի»:

Մէկ վկայութիւն ևս. այս մէկն ալ Հրանտ Մաթևոսեանէն՝[7] նոյնպէս գրող, որուն նկարը նոյնպէս կայ սոյն գրքոյկին մէջ, և որուն այս խօսքը արձանագրուելու է Հայոց պատմութեան գրքերուն մէջ. «Փոքր որոնումներից յետոյ ընկել եմ էն գլխաւոր թեմայի (նիւթի, բնանիւթի) վրայ, որ առ այսօր էլ շարունակւում է և, կարծում եմ, միայն ինձանից չէ տեսնուած. դա երկրի, խորհրդային ասուած երկրի գլխաւոր հարցերն են՝ մարդու դիմազրկութեան և

Մայիսմեկյան ցույց Խորհրդային Հայաստանում

մարդու՝ իր հողից, իր աշխատանքից գժտութեան, մարդու և աշխատանքի բախման հարցերը. գժտութիւն, որ դարձաւ երկրի անհուն աղքատութեան պատճառ: Յաւակնոտ երկրի յեղափոխականները, ովքեր որ յաջողեցին իրենց յեղափոխութիւնը և կարծում էին, որ իրենք աստուածներ էին, կարողանալու են երկրի վրայ նոր խորհրդանիշներ ստեղծել, նոր այբուբեն ստեղծել և մարդուն նոր կոչումներ տալ, աւելիով՝ նոր երկիր ստեղծել, ոչինչի չհասան իրենց 70 տարուայ աշխատանքով, միայն հասան էն բանին, որ ամբողջ խորհրդային երկրով մէկ խորհրդային մարդը թշնամացաւ իր երկրին, հողին, աշխատանքին, իր գործին նկատմամբ»:

Այս ըսուածները և դեռ աւելին կրնային մաս կազմել Խորհրդային Հայաստանի 100ամեակին նուիրուած գրքոյկին: Այսուամենայնիւ, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն ալ մաս կը կազմէ մեր պատմութեան շղթային, և մենք պարտաւոր ենք լաւապէս ճանչնալ Հայաստանի իրերայաջորդ հանրապետութիւնները՝ 1918էն սկսեալ, ու հասկնալ՝ ինչպէս մէկ վարչակարգը յաջորդեց միւսին, ի՛նչ ժառանգ փոխանցուեցաւ մէկէն միւսը, և ի՛նչ երկիր կ'ուզենք մենք ալ վերջիվերջոյ ժառանգ ձգել մեր յաջորդներուն:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Վրէժ-Արմէն, Խորհրդային Հայաստանը – Հայրենագիտական ակնարկ, «Հորիզոն», 21 Մարտ 1988:

2- Հրայր Մարուխեան, Հ.Յ. Դաշնակցութեան 24րդ Ընդհանուր ժողովի հետքերով, «Դրօշակ», 14 Սեպտեմբեր 1988:

3- Կարլեն Դալլաքեան, Յուշապատում, Երևան, 1998:

4- Վրէժ-Արմէն, Մեր հարցազրոյցները – «Վերջապէս պիտի գիտնանք թէ մենք ո՞վ ենք, ի՞նչ ենք...» – Յակոբ Յակոբեան, «Հորիզոն», 1 Մարտ 1993:

5- Վրէժ-Արմէն, 25 տարի ետք – Անմոռանալի ասուլիս մը Էդմոնդ Աւետեանին հետ, «Հորիզոն» (Հորիզոն գրական), 25 Դեկտեմբեր 2017 – 1 Յունուար 2018:

6- Վրէժ-Արմէն, Ջրոյց անսկիզբ և անվերջ – Մեր մղկտացնող ցաւերուն և վերապրեցնող երազներուն մասին, «Հորիզոն» (Հորիզոն գրական), 26 Մայիս 2014:

7- Վրէժ-Արմէն, Մեր հարցազրոյցները (խմբական) – Հաղորդութիւն Հրանտ Մաթևոսեանի հետ, «Հորիզոն», 21 Օգոստոս 1989:

ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՐԵՐԻ ԴԷՄ

Մաս 2

Կեղծիքի գերութիւնը (հատուած)

Գարեգին Նժդէհ

Չե՞ս զգում, երիտասարդ ընթերցող, թէ ինչպէ՛ս մահաշունչ կեղծիքից խորշակահար է լինում այն ամէնը, ինչ որ գեղեցիկ, վսեմ, հերոսական է մեր կեանքում: Չե՞ս տեսնում, թե ինչպէ՛ս մանրացել ու գոռեհկացել են մեր ժողովրդի որո՛շ տարրերը: Թէ որքան մեծ է ստորութեան ոյժը մեր կեանքում: Չե՞ս զգում, արդեօք, թէ խեղդւում ես շրջապատիդ մահաշունչ կեղծիքի մէջ: Կեղծիք՝ մահ ասել է, դանդաղ մահացում, իսկ մեզ պետք է ապրել որպէս ժողովուրդ:

Տե՛ս, հայրերդ իրար աւելի են ատում, քան արտաքին թշնամուն: Եւ արդէն շատերի մէջ սկսել է խօսիլ ներումը դէպ թրքութիւնը: Նշան՝ ազգային նաստութեան:

Տե՛ս, թէ ի՞նչպէս ծաղրելի կերպով ինքնաբաւ են շատերը, քչով բաւականացող, փառասիրութեամբ ծոյլ և սակաւապէտ:

Որքա՛ն անխոով են, մտահոգութեան ստեր իսկ չի նկատւում սրանց մէջ՝ իրենց ժողովրդի ապագայի մասին: Կարծէք Թովմաս Մուրի իդէալական կղզում ապրելիս լինէր հայութիւնը և ոչ թէ մեր տխուր Արևելքում, շրջապատւած բարբարոս և քրիստոնեաւէր իսլամութեամբ:

Կեղծաւորնե՛րը ...Յովտ գրի մասին աւելի են աղմկում, քան հայ ժողովրդի վտանգւած ապագայի:

Երբեք ջրի և հովի հոսանքին հակառակ չնաւել. յաւէտ սպասել յաջող հովի ու մակընթացութեան – այս է այն «զգաստ քաղաքականութիւնը», որով կ'առաջնորդուեն և կ'ուզեն առաջնորդել հայութիւնը:

Տե՛ս, թէ ինչպիսի՜ մոլեռանդութեամբ նրանք ազգային գործիչների մեծագործութիւնները սառոյցի, իսկ սխալները մարմարիոնի վրայ են քանդակում: Իսկ նրանց կեցվա՛ծքը, ծառայական՝ օտարի, ամբարտաւան՝ հայ մարդու հանդէպ: Իսկ իրենց հոգևոր ծուլութիւնն ու չքաւորութիւնը սքօղելու զաւեշտական Ճիգե՛ր: Իսկ սրանց նիւթակրօն վարդապետութի՛ւնը, որ մարդկային կեանքը համարելով մի օրւայ ճամփորդութիւն՝ յորդորում է – կե՛ր, խմի՛ր, խնդա՛, աշխարհի և ազգիդ ցաւերը թողնելով ուրիշներին: Հետևանքը: Մի յոռենշան վիճակ, մտաբարոյական ընդհանուր քաոս, որի մէջ վաղուց է սկսւել եղծումն ու խաթարումը մեր ազգային հաւաքական հոգու: Իսկ գիտենք, որ «մի ժողովրդի ոյժը աւելի նւազ չափով է գտնւում իր բանակների՝ քան իր զգացումների ընդհանրութեան, քան ազգային հոգու մէջ: Ազգային հոգին հռոմէացիներին դարձրեց աշխարհի տէրը. կորցնելով այդ հոգին՝ կորաւ Հռոմը»:

Հետևանքը.- մի դրութիւն, որ սպառնում է մեզ մահւամբ:

Սալոնիկ 1927 թ.

*«Արդ՝ եթե ունենք **ազգային իմաստություն**, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է չարացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք.... Ճանաչենք մեր դժբախտությունը.... **Ուրիշ ճանապարհ չկա**. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»:*

Հովհ. Թումանյան 1909թ.

ԴՐՕՇԱԿ